1481

2(075)
Э-38

03 AUG 2009

2(075)
9-38

ԶԱՐՄԱՅՐ Ա. ՔՀՆՑ. ԿԷՕԻՒՐԵԱՆ

# ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑՔ ԿՐՕՆԻ

Բ.

## ՆՈՐ ՈՒԽՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ՅԻՍՈՒՍԻ ԿԵԱՆՔԸ. — ՀՐԱՇՔՆԵՐԸ. — ԱՌԱԿՆԵՐԸ
ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ

## ՔՐԻՍՏ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԻ. — ԻՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆԵՐԸ. — ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ. —
ՏՕՆԵՐԸ. — ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

«ԱՐԵՒ» ԳՐԱՏՈՒՆ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ
ՅԱԿՈԲ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Պապը Ալի, Րէշիտ էֆ. խան

Տպագր. «ԹԷՍՀԻԼԱԹ»
Կ. ՊՈԼԻՍ
1929

1481

17.04.2013

# ԿԱՐԵՒՈՐ

Կրօնի Նոր Դասընթացքի այս երկրորդ մասը պատրաստելու առթիւ, նկատի ունեցած ենք չծանրաբեռնել նիւթը, բայց զանց չընել ո եւ է էական կէտ : Յիսուսի կեանքին ու քարոզութիւններուն ամփոփ պատկերացումէն ետքը, հոգ տարուած է համառօտ տեղեկութիւններ տալու Քրիստ. Եկեղեցւոյ կազմութեան, Հայ. Եկեղեցւոյ հաստատման, մեր Լուսաւորիչներուն, մեր երանաշնորհ Հայրապետներուն, տօներու, դաւանութեան եւլն. վրայ :

Կը կրկնենք մեր յանձնարարութիւնը Պատ. ուսուցիչներուն, կենդանի պահելու դասը, հոգ տանելով հետաքրքրելու տղան՝ աւանդուած նիւթերուն : Այս հատորին վերջն ալ թելադրութիւններ կան ուսուցիչներուն, որոնք վստահ ենք թէ պիտի կրնան օգտակար ըլլալ իրենց՝ շահագրգռելու աշակերտները, եւ անոնց սիրցնելու Քրիստոսի Ս. Կրօնքը եւ Հայ. Առաքելական Ս. Եկեղեցին :

Ճոխ եւ գեղարուեստական պատկերները պիտի հետաքրքրեն տղաքը աւանդուած նիւթին, եւ պիտի կրթեն անոնց ճաշակը :

ՊԱՏՐԱՍՏՈՂԸ

12.04.2013

## ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Ս. Գիրքին կամ Աստուածաշունչին հեղինակը նոյն ինքն Աստուած է, այսինքն ան գրուած է Աստուծոյ ներշնչումով։

Աստուածաշունչը ամբողջութիւնն է Մարգարէներու և Առաքեալներու ձեռքով գրուած Գիրքերուն։ Կը պարունակէ Հին Կտակարանը՝ այսինքն այն Գիրքերը որոնք Յիսուսի աշխարհ գալէն առաջ գրուած են, և Նոր Կտակարանը՝ այսինքն այն Գիրքերը որոնք Յիսուսի ծնունդէն ետքը գրի առնուած են։

Աստուածաշունչի Գիրքերը երեք կարգի բաժնուած են. — Պատմական Գիրքեր, բարոյական գիրքեր, և մարգարէական գիրքեր։

Պատմական գիրքերու մէջ պատմուած են Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին պատմութիւնը, սուրբ մարդերու կեանքը, Յիսուս-Քրիստոսի կեանքը՝ համառօտ կերպով, Քրիստ. Եկեղեցւոյ հաստատութիւնը, և առաքեալներու քարոզութիւնները։

Բարոյական գիրքերը մանաւորապէս կը պարունակեն բարոյական բարձր սկզբունքներ։

Մարգարէական գիրքերը կը պարունակեն մարգարէներու գրած գիրքերը։

Հին Կտակարանի համառօտ պատմութիւնը ներկայ դասընթացքի առաջին հատորին մէջ սորվելէ ետքը, մեր սիրելի զաւակները ներկայ հատորին մէջ պիտի սորվին մեր Փրկիչին՝ Յիսուս-Քրիստոսի կեանքը, քարոզութիւնները ևլն., ինչպէս որ աւանդուած է Նոր Կտակարանին մաս կազմող չորս Աւետարաններուն (Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս) և Գործք Առաքելոցին մէջ զոր գրած է Ղուկաս Աւետարանիչ։

Гос. Библиотека Арм. ССР
51605-65

# ՆՈՐ ՈՒԽՏԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

## Ա.

## ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴՆ ԵՒ ՄԱՆԿՈՒԹԻՒՆԸ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԻ ԾՆՈՒՆԴԸ

Քրիստոնէական թուականին սկիզբը, որ կը սկսի Յիսուսի Ծնունդով, Հրէաստանի վրայ կը թագաւորէր Հերովդէս Մեծ, Հռոմի գերիշխանութեան տակ։

Երկիրը բաժնուած էր չորս մասերու. — Ա. Հրէաստան կամ Յուդայի երկիր, Բ. Գալիլիա, Գ. Սամարիա, և Դ. Պերէա։

Այս թագաւորին օրով Յուդայի երկրին մէջ կ'ապրէր Զաքարիա անունով քահանայ մը, որ առաքինի կեանք մը կը վարէր իր կնոջը՝ Եղիսաբէթի հետ, սպասելով Մեսիայի գալստեան որ գուշակուած էր մարգարէներէն։

(Մեսիա եբրայեցերէն բառ է, և կը նշանակէ Օծեալ։)

Զաքարիա և Եղիսաբէթ երկար ատենէ ի վեր զաւակ մը կը խնդրէին Աստուծմէ, բայց իրենց խնդիրքը կատարուած չէր։ Եւ իրենք ծերացած էին։

Օր մը երբ Զաքարիա Երուսաղէմի տաճարը կը գտնուէր խնկարկելու համար, Աստուծոյ հրեշտակը երեւցաւ իրեն և ըսաւ.

— Մի՛ վախնար, Զաքարիա, Աստուած քու աղօթքդ լսեց. քու կինդ՝ Եղիսաբէթ՝ զաւակ մը պիտի ունենայ և անունը Յովհաննէս պիտի դնես։ Անիկա Աստուծոյ առջեւ

մեծ պիտի ըլլայ, գինի և օղի չպիտի խմէ: Աստուծոյ Սուրբ Հոգիովը պիտի լեցուի, և Իսրայէլի ժողովուրդէն շատեր իրենց ճշմարիտ Աստուծոյն պիտի դարձնէ:

Զաքարիա տարակոյս յայտնեց ըսելով.

— Ինչէ՞ն գիտնամ ասիկա. ես ծեր եմ և կինս պառաւցած է:

Հրեշտակը պատժեց զինքը.

— Ես Գաբրիէլ հրեշտակն եմ որ Աստուծոյ առջև կը կենամ, ըսաւ. քանի որ թերահաւատ գտնուեցար, համր պիտի ըլլաս մինչև որ զաւակդ ծնի:

Զաքարիայի լեզուն բռնուեցաւ, և նշանացի կը խօսէր մինչև որ օրերը լրացան և Եղիսաբէթ ծնաւ իր որդին, որուն անունը դրուեցաւ Յովհաննէս:

Այն ատեն Զաքարիայի լեզուն բացուեցաւ, սկսաւ փառաբանել Աստուած, և նորածին որդին դառնալով ըսաւ.

— Դուն, ո՛վ մանուկ, Բարձրեալին մարգարէն պիտի կոչուիս, Տիրոջը առջևէն պիտի երթաս, անոր ճամբաները պատրաստելու:

Մանուկը կ'աճէր ու կը զօրանար Ս. Հոգիով, և անապատներու մէջ կ'ապրէր:

## ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԻՆ ԱՒԵՏԻՍԸ

Մարգարէներէն գուշակուած ժամանակը եկած էր: Յովհաննէսի ծնունդեան աւետիսը տրուելէն վեց ամիս ետքը, Աստուած Գաբրիէլ հրեշտակը ղրկեց Դաւիթի ցեղէն խոնարհ աղջկան մը, Ս. Կոյս Մարիամին, որ Գալիլիայի Նազարէթ քաղաքը կը բնակէր, և նշանուած էր դարձեալ Դաւիթի ցեղէն Յովսէփ անունով բարեպաշտ մարդու մը հետ:

Հրեշտակը ըսաւ Մարիամին.

— Ուրախ եղիր, շնորհալի կոյս, Տէրը քեզի հետ է: Դուն Աստուծոյ առջև շնորհ գտար: Զաւակ մը պիտի ու-



ունենաս և անունը Յիսուս պիտի դնես: Անիկա մեծ պիտի ըլլայ, Բարձրեալին Որդին պիտի կոչուի: Աստուած անոր պիտի տայ իր հօրը՝ Դաւիթին աթոռը, ան յաւիտեան պիտի թագաւորէ Յակոբի տան (այսինքն բոլոր հաւատացեալներուն) վրայ, և անոր թագաւորութիւնը վերջ չպիտի ունենայ:

— Ի՞նչպէս կ'ըլլայ այդ, ըսաւ Մարիամ, քանի որ ես ամուսնացած չեմ.

— Աստուծոյ Սուրբ Հոգին պիտի իջնէ քու վրայ, և Բարձրեալին զօրութիւնը հովանի պիտի ըլլայ քեզի. որովհետև Ան որ քեզմէ պիտի ծնի, սուրբ է և Աստուծոյ Որդին պիտի կոչուի: Ահա՛ քու ազգականդ՝ Եղիսաբէթ ալ իր տարիքոտ վիճակին մէջ որդի մը պիտի ունենայ: Աստուծոյ համար անկարելի բան չկայ:

—Ահաւասիկ ես Աստուծոյ աղախինն եմ, ըսաւ Մարիամ, քու ըսածիդ պէս ըլլայ:

Եւ հրեշտակը մեկնեցաւ:

## ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ,
## ՀՈՎԻՒՆԵՐՈՒՆ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

Հռոմի կայսրը՝ Օգոստոս-Կեսար՝ կ'ուզէր գիտնալ թէ իր կայսրութեան սահմաններուն մէջ քանի՞ հպատակ ունի: Ուստի հրաման հանեց որ ամէն մարդ իր քաղաքը երթայ, անունը արձանագրել տալու համար մարդահամարի տետրակներուն մէջ:

Հրէաստան Հռոմի իշխանութեան տակ գտնուելուն պատճառով, Մարիամ և Յովսէփ ալ ստիպուեցան Բեթղեհէմ երթալ, որ իրենց նախնիքներուն՝ Դաւիթի սերունդին քաղաքն էր:

Հոն հասնելնուն, Մարիամ և Յովսէփ քաղաքին մէջ իջեւան մը չգտնելով, ստիպուեցան գիշերը անցընել քաղաքէն դուրս քարայրի մը մէջ, որ տեղացի հովիւներուն և անոնց հօտին բնակարանն էր:



Բեթղեհէմ քաղաքը, ուր ծնաւ մեր Փրկիչը ։

*Նոյն գիշերը այնտեղ ծնաւ Յիսուս, Աստուծոյ Որդին։ Մայրը՝ Մարիամ՝ զայն խանձարուրներով պատեց և մսուրին մէջ դրաւ։*

*Բեթղեհէմի մօտերը աղքատ հովիւներ կային որ գիշերը դաշտին մէջ իրենց հօտին պահպանութիւնը կ'ընէին։ Յանկարծ, իրենց բոլորտիքը փայլուն լոյս մը ծագեցաւ և հրեշտակ մը երևցաւ իրենց։ Հովիւները վախցան, բայց հրեշտակը քաջալերեց զիրենք ըսելով.*

*— Մի՛ վախնաք. ես ձեզի ու բոլոր ժողովուրդին ուրախալի մեծ լուր մը կ'աւետեմ։ Դաւիթի քաղաքին մէջ ձեզի այսօր Փրկիչ մը ծնաւ, որ Օծեալ Տէր է. Բեթղեհէմի մսուրին մէջ պիտի գտնէք խանձարուրով պատած Մանուկը։*

*Այս միջոցին հրեշտակներու բազմութիւն մը երևցաւ, որոնք կ'օրհնէին Աստուած և կ'ըսէին.*

«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» ։

*Որ կը նշանակէ.*

*«Փա՛ռք բարձրերը (երկինքը) գտնուող Աստուծոյ, թող երկրի վրայ խաղաղութիւն և մարդոց մէջ հաշտութիւն ըլլայ։»*





«Փա՛ռք ի բարձունս Աստուծոյ ։»

*(Այս երգը ամէն օր կ'երգուի Հայ Եկեղեցիներու մէջ)։*

*Հրեշտակներու երկինք վերանալէն ետքը, հովիւները որոշեցին քաղաք երթալ և պատահածը հասկնալ. ուստի փութով եկան և տեսան Յովսէփը և Մարիամը, և փոքրիկ Մանուկը մսուրին մէջ։ Բարի հովիւները երկրպագեցին Փրկիչին, ու ետ դարձան՝ օրհնելով և փառաւորելով Աստուած։*

*Ութ օր ետքը մանուկին անուն դրին, և կոչեցին* Յիսուս՝ *որ կը նշանակէ Փրկիչ։*



Յիսուսի ծնունդը :

## ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ

*Ժամանակ մը ետքը, երեք Մոգեր, որ հարուստ և իմաստուն մարդիկ էին (*), հրաշալի աստղէ մը առաջնորդուած, Արեւելքի կողմէն Երուսաղէմ եկան, և Հերովդէս Թագաւորին ներկայանալով հարցուցին.*

*— Ո՞ւր է Հրեաներուն թագաւորը, որ նոր ծնաւ. որովհետեւ Արեւելքի մէջ մենք անոր աստղը տեսանք և եկանք երկրպագելու :*

*Հերովդէս երբ լսեց թէ Հրեաներուն թագաւոր մը*

(*) Հին աւանդութեան մը համեմատ, այս իմաստուն մոգերուն անունն էր **Մելքոն, Գասպար** եւ **Պաղտասար** :





Հովիւները քաղաք երթալով, տեսան փոքրիկ մանուկը մսուրին մէջ :

*ծներ է, խռովեցաւ, և բոլոր Երուսաղէմացիները անոր նման յուզուեցան :*

*Հերովդէս հաւաքեց հրեայ օրէնքի վարդապետները, քահանայապետներն ու մեծերը, և անոնց հարցուց թէ ո՞ւր պիտի ծնի իրենց Թագաւորը :*

*— Բեթղեհէմ քաղաքին մէջ պիտի ծնի, պատասխանեցին անոնք. որովհետեւ այսպէս գուշակած է Միքիա մարգարէն :*

*Այն ատեն Հերովդէս մոգերուն ըսաւ որ վերադարձին գան իրեն տեղեկութիւն տան Հրեաներու այս նոր թագաւորին վրայ, երբ որ զայն գտնեն : Բայց այս չար իշխանը վատ դիտում մը ունէր մտքին մէջ :*



Երբ մոգեր հրաշալի աստղէ մը առաջնորդուած՝ Արեւելքէ Երուսաղէմ եկան։

*Մոգերը խոստացան ու մեկնեցան։ Գիշերը զարմեալ տեսան զիրենք առաջնորդող աստղը, որ զանոնք տարաւ Բեթղեհէմ ու կեցաւ Յիսուսի գտնուած տան վրայ։*

*Երբ մոգերը գտան Մանուկը, երկրպագեցին Անոր, և ընծայեցին իրենց նուէրները, ոսկի, կնդրուկ և զմուռս։*

*Յետոյ տեսիլքի մէջ հրեշտակէն ստացած ազդարարութեան վրայ, ուրիշ ճամբով շիտակ իրենց երկիրը դարձան, առանց հանդպելու Հերովդէսին։*





Հերովդէս եւ մոգերը։

## ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ

*Յիսուսի ծնունդէն քառասուն օր ետքը, Յովսէփ և Մարիամ, հրէական սովորութեան համաձայն, Երուսաղէմ գացին, Յիսուս մանուկը Տիրոջը ընծայելու։*

*Հրեաները սովորութիւն ունէին ամէն նորածին անդրանիկ մանչ զաւակ տաճար տանելու և Աստուծոյ ընծայելու. Այս առթիւ աղաւնի կամ զոհի ուրիշ կենդանիներ կը տանէին իրենց հետ։*

*Յովսէփ և Մարիամ աղքատ ըլլալով և չկրնալով աւելի արժէքաւոր նուէր մը տանիլ, զոյգ մը տատրակ բերին՝ Աստուծոյ տաճարին մէջ զոհելու։*

Այն ժամանակ Երուսաղէմի մէջ կ'ապրէր Սիմէոն անուն ծերունի մը, որ արդար և աստուածավախ մարդ մըն էր, ու կը սպասէր Փրկչին գալստեան. որովհետև Աստուծոյ Ս. Հոգին յայտնած էր իրեն թէ չպիտի մեռնի մինչև որ տիրոջը Օծեալը չտեսնէ։

Ս. Հոգիէն թելադրուած՝ այս սուրբ ծերունին տաճար եկաւ, ուր կը գտնուէին Մարիամ և Յովսէփ։ Տեսնելով մանկիկը, զայն առաւ իր թևերուն մէջ, սկսաւ օրհնել Աստուած և ըսել.

— Տէ՛ր, այլ ևս արձակէ քու ծառադ խաղաղութեան մէջ, քանի որ քու խօսքերուդ համեմատ իմ աչքերս տեսան փրկութիւնը. ես տեսայ Լոյսը որ պիտի լուսաւորէ հեթանոսները։

Սիմէոն օրհնեց նաև Յիսուսի ծնողքը, և ըսաւ Մարիամին.

— Այս տղուն պատճառով վիշտի սուրը պիտի ծակէ քու սիրտդ։

Այն ատեն տաճարը կը գտնուէր Աննա մարգարէուհին, որ ութսունևչորս տարեկան այրի կին մըն էր, ծոմով և աղօթքով կ'անցընէր ժամանակը, ու տաճարէն չէր հեռանար։ Ան ալ Յիսուսը տեսնելով, փառք կուտար Աստուծոյ, և անոր վրայ կը խօսէր բոլոր անոնց հետ որ Իսրայէլի փրկութեան կը սպասէին։

## ԵԳԻՊՏՈՍ ՓԱԽՈՒՍՏԸ, ԲԵԹՂԵՀԷՄԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Մոգերու մեկնումէն ետքը, հրեշտակ մը տեսիլքի մէջ երևցաւ Յովսէփին և ըսաւ անոր.

— Ելի՛ր, ա՛ռ Յիսուս մանուկը և անոր մայրը, և փախիր Եգիպտոս, որովհետև Հերովդէս կ'ուզէ սպաննել պզտիկը։

Յովսէփ հնազանդեցաւ, և նոյն գիշերն իսկ ճամբայ ելաւ դէպ ի Եգիպտոս, Յիսուս մանուկին և անոր մօրը Մարիամի հետ։





Եգիպտոս փախուստը։

Այդ միջոցին Հերովդէս տեսնելով որ մոգերը չվերադարձան, սաստիկ բարկացաւ, և Յիսուս մանուկը սպաննելու դիտումով, հրաման ըրաւ որ սուրէ անցընեն Բեթղեհէմի մէջ գտնուած երկու տարեկան և անկէ վար բոլոր մանուկները։ Այս անգութ հրամանը գործադրուեցաւ դահիճներու կողմէ, ողբ ու կոծ յառաջ բերելով ամէն տունի մէջ։

Քիչ ժամանակ ետքը խղճի խայթէն չարաչար տանջուելով Հերովդէս մեռաւ, որմէ ետքը Յովսէփ դարձեալ հրեշտակին կողմէ ազդարարութիւն ստանալով, առաւ մանուկն ու մայրը, և Իսրայէլի երկիրը դառնալով Գալիլիայի Նազարէթ քաղաքը բնակեցաւ։ Այնտեղ մեծցաւ Յիսուս, և այս պատճառով Նազովրեցի կոչուեցաւ։

## ՅԻՍՈՒՍ ՏԱՍՆԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ՝ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Յիսուսի ծնողքը ամէն տարի Երուսաղէմի տաճարը կ՚երթային Զատիկը տօնելու։ Երբ Յիսուս տասներկու տարեկան եղաւ, ծնողքը զինքը միասին տարին։



Յիսուս տասներկու տարեկան՝ տաճարին մէջ։

Տօնական օրերը անցնելէ ետքը, Մարիամ և Յովսէփ Երուսաղէմէն մեկնեցան։ Բայց Յիսուս հոն մնաց, մինչ իր ծնողքը կը կարծէին որ ան ալ մեկնած է իրենց ճամբու ընկերներուն հետ։



Օրուան մը ճամբայ քալելէ ետքը, զայն չգտան իրենց ծանօթներուն քով. ուստի, մտահոգութեամբ լեցուած, Երուսաղէմ դարձան զինքը փնտռելու։

Երրորդ օրը անոր հանդիպեցան տաճարին մէջ, օրէնքի վարդապետներու մէջտեղ, որոնց մօտիկ կ՚ընէր և հարցումներ կ՚ուղղէր։ Զինքը լսողները կը զարմանային անոր իմաստութեան և տուած պատասխաններուն վրայ։

Երբ ծնողքը տեսան իրենց զաւակը, սքանչացան։ Եւ Մարիամ ըսաւ Յիսուսին։

— Այս ի՞նչ ըրիր, ո՛րդեակ, երեքօրէ ի վեր հայրդ և ես քեզ կը փնտռէինք։

Յիսուս պատասխանեց.

— Չէի՞ք գիտեր որ ես իմ հօրս տանը պէտք է գտնուիմ։

Այս խօսքին նշանակութիւնը չհասկցան անոնք։ Բայց մայրը այս ամէն խօսքերը իր սրտին մէջ կը պահէր։

Յետոյ Յիսուս անոնց հետ ճամբայ ելաւ դէպ ի Նազարէթ, և հոն մնաց մինչեւ երեսուն տարեկան եղած ատեն, ապրելով խոնարհ կեանքով մը, աղօթքով, աշխատութեամբ և հնազանդութեամբ իր ծնողքին, ու զարգանալով իմաստութեամբ և շնորհքով։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՌ-Арм ССР
им. А. Мясникяна

## Բ.

# ՅԻՍՈՒՍԻ ԲԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՀՐԱՇՔՆԵՐԸ, ԱՌԱԿՆԵՐԸ

### ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԸ ՔԱՐՈԶԷ ԵՒ ԿԸ ՄԿՐՏԷ

Զաքարիա քահանայի որդին՝ Յովհաննէս՝ որ անապատական կեանք մը կը վարէր, երկար տարիներ աղօթքով և ճգնութեամբ անցընելէ ետքը, Յորդանան գետին եզերքը եկած էր քարոզելու։

Ուղտի մազէ շինուած հագուստ մը հագած էր, և մէջքը կաշիէ գօտի մը կապած։ Կերակուրն էր մարախ և վայրի մեղր։

— Ապաշխարեցէք, որովհետև Աստուծոյ արքայութիւնը մօտեցած է, կը քարոզէր ան։

Ամէն կողմերէ մարդիկ կուգային լսելու իր քարոզութիւնները, ու կը հիանային անոր վրայ. զինքը մեծ մարգարէ մը կը դաւանէին։ Շատեր նոյն իսկ կ'ըսէին թէ մարգարէներէն վեր մէկն է, Քրիստոսն է ան. բայց Յովհաննէս անոնց միտքը իմանալով կը պատասխանէր.

— Ես չեմ Քրիստոսը, այլ անոր կարապետը միայն։ Անիկա աշխարհ եկած է, ձեր մէջ է արդէն. ես անոր կօշիկին կապերն անգամ քակելու արժանի չեմ։

Իր քարոզութիւններէն ազդուած, շատեր կը հնազանդէին իր խօսքերուն, իրենց մեղքերը կը խոստովանէին և կ'ապաշխարէին. և Յովհաննէս կը մկրտէր զանոնք Յորդանան գետին մէջ։ Այս պատճառով կոչուած է ան Յովհաննէս Մկրտիչ։

Իրեն քով կուգային նաև Փարիսեցիներ և Սադուկեցիներ։ Փարիսեցիները՝ Հրեաներուն կարգադրողները, անոնց վարդապետներն էին, կեղծաւոր, խաբեբայ մարդիկ։ Նոյնպէս էին Սադուկեցիները, որոնք չէին հաւատար արքայութեան, հրաշքի, հոգիի, հրեշտակներու, և կ'ըսէին թէ ո՛չ վարձատրութիւն կայ և ոչ պատիժ։



Յովհաննէս անոնք տեսնելով կը սաստէր անոնց անհաւատութիւնը.

— Իժի՛ ծնունդներ, կ'ըսէր անոնց, ո՞վ սորվեցուց ձեզի՝ փախչիլ Աստուծոյ բարկութենէն։ Ապաշխարեցէք, մի՛ ըսէք թէ «մենք Աբրահամի որդիներ ենք»։ Աստուած այս քարերէն ալ Աբրահամի որդիներ կրնայ հանել։

Իրեն բոլոր դիմողներուն յարմար պատուէրներ կուտար, և բարի, պարկեշտ կեանք մը կը քարոզէր։

### ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ

Յիսուս, իր փրկարար գործը սկսելէ առաջ ուզեց խոնարհիլ և մկրտուիլ Յովհաննէսէն։ Երեսուն տարեկան էր երբ եկաւ Յորդանան գետին մօտերը, և խնդրեց Յովհաննէսէն որ զինքը մկրտէ։

— Ե՛ս պէտք է որ քեզմէ մկրտուիմ, դուն ինծի՞ կուգաս, ըսաւ Յովհաննէս։

— Զգէ՛ որ մկրտուիմ քեզմէ, որովհետև պէտք է որ իբրև մարդ օրէնքները գործադրեմ, պատասխանեց Յիսուս։

Եւ Յովհաննէս Յորդանան գետին մէջ մկրտեց Յիսուսը, որ երբ ջուրէն ելաւ, Աստուծոյ Ս. Հոգին աղաւնիի կերպարանքով իջաւ իր վրայ. միևնոյն ատեն լսուեցաւ Հայր Աստուծոյ ձայնը որ կ'ըսէր. — «Ասիկա իմ սիրելի որդիս է, որուն հաւներ եմ»։

### ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Յիսուս մկրտուելէն ետքը անապատ քաշուեցաւ, և ինքզինքը նուիրեց աղօթքի և ճգնութեան։ Քառասուն օր ծոմ կեցաւ և բնաւ բան մը չճաշակեց։ Անկէ վերջը անօթեցաւ։

Սատանան այն ատեն համարձակեցաւ մօտենալ իրեն, և ըսաւ.

— Եթէ Աստուծոյ որդի ես, սա քարերուն ըսէ՛ որ հաց ըլլան:

— Մարդ միայն հացով չ'ապրիր, այլ Աստուծոյ խօսքերով, պատասխանեց Յիսուս:

Սատանան դարձեալ փորձել ուզեց զինքը՝ ըսելով.

— Եթէ Աստուծոյ որդի ես, գնա՛ ինքզինքդ վար ձգէ Երուսաղէմի տաճարին ամէնէն բարձր աշտարակէն, որովհետեւ Ս. Գիրքին մէջ գրուած է թէ Աստուած իր հրեշտակներուն պատուիրած է որ իրենց ձեռքերուն վրայ բռնեն քեզ և ոտքդ քարին չզարնէ:

— Գրուած է որ քու տէր Աստուածդ չփորձես, պատասխանեց Յիսուս:

Սատանան նորէն ուզելով Յիսուսը փորձել, տարաւ զայն բարձր լեռան մը վրայ, ուրկէ ցուցուց անոր՝ աշխարհի բոլոր թագաւորութիւնները, հարստութիւնը ու փառքը, և ըսաւ.

— Այս բոլորը քեզի՛ կուտամ, եթէ ծունր երկրպագես ինծի:

Այն ատեն Յիսուս պատասխանեց.

— Ետի՛ս գնա, սատանայ. գրուած է որ Աստուծո՛յ միայն պիտի երկրպագես և զայն միայն պիտի պաշտես:

Սատանան գլխիկոր հեռացաւ, և հրեշտակները մօտեցան ու կը սպասաւորէին իրեն:

## ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Յիսուս անապատի իր առանձնութենէն ելլելով, սկսաւ քարոզել փրկութեան Աւետարանը. իր խօսքերը շատ աշակերտներ հաւաքեցին շուրջը:

Միւս կողմէ Յովհաննէս Մկրտիչ կը վկայէր անոր համար ու կ'ըսէր.





Յիսուս եւ իր առաջին աշակերտները :

— Ահա՛ Աստուծոյ Գառը, որ աշխարհի մեղքերը պիտի քաւէ: Անոր համար է որ ես ըսած էի. «Ինծմէ ետքը մէկը պիտի գայ որ ինծմէ առաջ է»: Ե՛ս տեսայ Աստուծոյ Հոգին որ աղաւնիի կերպարանքով երկինքէն կ'իջնէր և կը հանգչէր անոր վրայ: Ես ձեզ ջուրով կը մկրտեմ, ան կը մկրտէ սուրբ Հոգիով. ես կը վկայեմ որ Աստուծոյ Որդին է ան:

Այս խօսքերէն ազդուած, Յովհաննէս Մկրտիչի երկու աշակերտները Յիսուսի ետեւէն գացին:

Յիսուս երբ տեսաւ զանոնք, հարցուց.

— Ի՞նչ կ'ուզէք:.

— Տէ՛ր, ո՞ւր կը բնակիս, հարցուցին անոնք։

Յիսուս հրաւիրեց զանոնք և մինչև ուշ ատեն իրեն մօտ մնացին։

Այս երկուքէն մէկը՝ Անդրէաս՝ եղբայր մը ունէր որ կը կոչուէր Սիմոն։ Գնաց գտաւ զայն և ըսաւ.

— Գտանք Մեսիան (որ կը նշանակէ Քրիստոս, Օծեալ։)

Ու զայն բերաւ Յիսուսի մօտ, որ նայուածք մը ձգեց անոր վրայ ու ըսաւ.

— Դուն Սիմոնն ես, Յովնանու որդին, դուն պիտի կոչուիս Կեփաս, (որ կը նշանակէ Պետրոս, այսինքն Քար)։

Յաջորդ օրը Յիսուս ուզեց Գալիլիա երթալ. գտաւ Փիլիպպոսը և ըսաւ անոր.

— Ետևէս եկուր։

Փիլիպպոս Բեթսայիդայէն էր, Անդրէասի և Պետրոսի քաղաքէն. գնաց գտաւ Նաթանայէլը, թզենիի մը տակ, և ըսաւ անոր.

— Գտանք Մեսիան, որուն մասին խօսած են Մովսէս և մարգարէները։ Յովսէփի որդի Նազարէթցի Յիսուսն է եղեր։

— Միթէ Նազարէթէն բարի բան մը կրնա՞յ ելլել, հարցուց Նաթանայէլ։

— Եկուր և տես, ըսաւ Փիլիպպոս։

Յիսուս երբ Նաթանայէլը տեսաւ, ըսաւ.

— Ահա՛ Իսրայէլացի մը որուն մէջ նենգութիւն չկայ։

— Զիս ո՞ւրկից կը ճանչնաս, հարցուց Նաթանայէլ։

— Ես քեզ տեսայ թզենիին տակ, Փիլիպպոսի կանչելէն առաջ։

— Տէ՛ր, Դուն Աստուծոյ Որդին ես, Իսրայէլի Թագաւո՛րը, գոչեց Նաթանայէլ հիացումով։

Նաթանայէլ, որ Բարթողիմէոս ալ կոչուած է, Հայոց առաջին Լուսաւորիչներէն մէկը եղած է։



## ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍՆԻՔԸ

Նաթանայէլի դէպքէն երեք օր ետքը, Յիսուս Գալի-
լիա կը գտնուէր, որուն Կանա քաղաքին մէջ հարսնիք կար,
և հրաւիրուած էին Մարիամ, Յիսուս և իր աշակերտները։
Ճաշի ժամանակ գինին պակսեցաւ, և Մարիամ այս
բանը իմացուց Յիսուսին, որ պատասխանեց.

— Տակաւին ժամանակս եկած չէ։

Բայց Մարիամ կը հաւատար Յիսուսի հրաշագործու-
թեան։ Ուստի ըսաւ սպասաւորներուն.

— Ի՛նչ որ ըսէ ձեզի, ըրէք։

Այնտեղ կային վեց թակոյկներ։ Յիսուս պատուիրեց
որ ջուրով լեցնեն զանոնք։ Երբ լեցուցին, Յիսուս հրա-
մայեց որ սեղանապետին տանին։

Սեղանապետը որ հրաշքէն տեղեկութիւն չունէր, համը
նայեցաւ, և զարմանալով փեսան կանչեց և ըսաւ անոր.

— Ամէն մարդ անուշ գինին առաջ կը հրամցնէ, և
երբ հրաւիրեալները արբեցան, այն ատեն քիչ աղէկը։ Դուն
անուշ գինին պահեցիր մինչև հիմա։

Ասիկա առաջին հրաշքն էր որ ըրաւ Յիսուս Գալի-
լիայի Կանա քաղաքին մէջ, և իր փառքը յայտնեց, և աշա-
կերտները աւելի՛ հաւատքով լեցուեցան։

## ՀՐԱՇԱԼԻ ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ

Այս հրաշքէն ժամանակ մը ետքը, Յիսուս Գալիլիայի ծովակին քով կը քարոզէր։ Ժողովուրդը հետզհետէ կը շատնար ու կը խռնուէր։ Յիսուս տեսնելով որ ժողովուրդը դժուարութիւն կը կրէ իր խօսքերը լսելու համար, ծովակին եզերքը գտնուած երկու նաւակներէն մէկը մտաւ, և սկսաւ անկէ քարոզել։

Այդ նաւակը կը պատկանէր Պետրոսին և անոր եղբայր Անդրէասին։



Հրաշալի ձկնորսութիւն մը

Յիսուս երբ քարոզը վերջացուց, ըսաւ որ նաւակը աւելի՛ բաց ծովը քշեն, և ուռկանները ծովը ձգեն։

— Տէ՛ր, ըսաւ Պետրոս, ամբողջ գիշերը աշխատեցանք և բան չկրցանք բռնել. բայց խօսքդ կը կատարենք։

Ուռկանը ծովը ձգուելուն պէս, լեցուեցաւ բազմաթիւ ձուկերով, և քիչ մնաց որ պատռէր։ Այն ատեն նշան ըրին միւս նաւակին, որ Զեբեդէոսի որդի Յակոբոսին և Յովհաննէսին կը պատկանէր։ Անոնք ալ եկան, և երկու նաւերը լեցուեցան մինչեւ իրենց բերանը։

Այն ատեն Պետրոս Յիսուսի ոտքն ինկաւ և ըսաւ.

— Տէ՛ր, հեռացիր ինձմէ, մեղաւո՛ր մարդ եմ ես։

— Մի՛ վախնար, պատասխանեց Յիսուս, ասկէ ետքը մարդո՛ւ որսորդ պիտի ըլլաս։



## ՏԱՍՆԵՐԿՈՒ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԸ

Յիսուսի հրաշքներն և քարոզութիւնները մեծ բազմութիւն կը հաւաքէին իր շուրջը։ Ատոնց մէջ շատեր կը հաւատային իր խօսքերուն և քարոզութիւններուն, և կ՚ուզէին հետեւիլ իրեն։

Յիսուս՝ այսպէս շատ մը աշակերտներ ունեցաւ, որոնց մէջէն ընտրեց տասներկու հոգի, անոնք առաքեալ կոչուեցան, այսինքն «ղրկուած», որպէս զի իր վարդապետութիւնները սորվին և ուրիշներու սորվեցնեն։

Այդ տասներկուքներէն մէկն էր Մատթէոս, որ մաքսաւոր էր։ Հրեաները՝ մաքսաւորները ատելի և մեղաւոր մարդ կը նկատէին. Մատթէոս հարուստ մէկն էր, բայց բարի սիրտ ունէր։ Յիսուս զայն տեսնելով, ըսաւ.

— Ետեւէս եկո՛ւր։

Մատթէոս շատ ուրախացաւ որ Յիսուսի աշակերտ ըլլալու պատիւին կ՚արժանանայ։ Մեծ խնջոյք մը պատրաստեց Յիսուսի և իր աշակերտներուն համար. հրաւիրեց նաեւ իր բարեկամ մաքսաւորները։

Փարիսեցիները տեսնելով որ Յիսուս մաքսաւորներուն հետ ճաշ կ՚ընէ, սկսան բամբասել զինքը, և աշակերտներուն ըսին.

— Ինչո՞ւ ձեր վարդապետը մեղաւորներուն հետ ճաշ կ՚ընէ։

Յիսուս իմանալով պատասխանեց.

— Առողջ մարդիկ բժիշկի պէտք չունին այլ հիւանդները։ Ես եկայ, ոչ թէ արդարները այլ մեղաւորները հրաւիրելու որ ապաշխարեն։

Այսպէս, Յիսուս այլեւայլ աստիճաններէ մարդիկ ընտրեց իրեն աշակերտ։ Զանոնք վերջնականապէս որոշելէ առաջ առանձնացաւ և գիշեր մը ամբողջ աղօթեց։ Յաջորդ օրը կանչեց բոլոր աշակերտները, անոնցմէ ընտրեց տասներկու հոգի։ Ասոնք էին.

1. Պետրոս, 2. Անոր եղբայրը՝ Անդրէաս, 3. Զեբեդէոսի որդի Յակոբոս, 4. Եղբայրը՝ Յովհաննէս, 5. Փիլիպպոս, 6. Բարթողիմէոս, 7. Թովմաս, 8. Մատթէոս, 9. Յակոբոս՝

Ալփէոսի որդին, 10. Թադէոս, 11. Սիմոն Նախանձայոյզ, և 12 Յուդա Իսկարիովտացի որ յետոյ մատնիչ եղաւ։

Անոնցմէ զատ Յիսուս ընտրեց 72 աշակերտներ. բոլորին ալ կը սորվեցնէր իր վարդապետութիւնները և կ՚ըսէր անոնց.

«Իսրայէլի տան կորսուած ոչխարներուն գացէք, և քարոզեցէք. ըսէ՛ք թէ երկինքի թագաւորութիւնը մօտեցած է. հիւանդները բժշկեցէք, բորոտները մաքրեցէք, մեռելները ողջցուցէք. ձրի առիք՝ ձրի տուէք։ Ճամբու համար ձեզի հետ մի՛ առնէք ո՛չ ոսկի, ո՛չ արծաթ, ո՛չ պղինձ, և ո՛չ ճամբու պայուսակ, ոչ կրկին հագուստ, ո՛չ կօշիկ և ոչ գաւազան, որովհետև մշակը իր վարձքին արժանի է։

Այսպէս անշահախնդրութեան և անձնուիրութեան պատուէրներ կուտար անոնց։

## ՅԻՍՈՒՍԻ ՊԱՏՈՒԷՐՆԵՐԸ

Յիսուս կը շրջէր Հրէաստանի և Գալիլիոյ գիւղերն ու քաղաքները, ամէն կողմ քարոզելով փրկութեան Աւետարանը։ Իրեն կը հետևէին իր աշակերտները և ժողովրդեան մեծ բազմութիւն։

Մեծ հեղինակութեամբ կը խօսէր Ան։ Իր քարոզութեանց նպատակն էր ուսուցանել և հաւատքի բերել։ Կը պատուիրէր իրար սիրել, թշնամիներու ներել, Աստուծոյ վրայ հաւատք ունենալ և աղօթել։

Իր դէմքը կը ճառագայթէր բարութեամբ և փառքով։ Իր կեանքը օրինակ մըն էր ամէն տեսակ առաքինութեանց։ «Սորվեցէք ինձմէ, կ՚ըսէր, զի հեզ եմ և սրտով խոնարհ»։

Իր գութը կը տարածուէր բոլոր դժբախտներուն վրայ։ «Ինծի եկէք, կը պատգամէր, բոլոր տառապողներդ, և ես պիտի սփոփեմ ձեզ»։



## ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ

Անգամ մը Յիսուս ամբողջ գիշերը աղօթելէ ետքը, լեռան մը վրայէն քարոզեց իր աշակերտներուն և ժողովուրդին, ու ըսաւ.

«Երանի՜ հոգիով աղքատներուն, (այսինքն իրենց ըրած բարիքը քիչ սեպելով աւելի բարիք ընել փափաքողներուն). որովհետև անոնցն է երկինքի արքայութիւնը։

«Երանի՜ սգաւորներուն, որովհետև անոնք պիտի մխիթարուին։

«Երանի՜ հեզերուն, որովհետև անոնք երկիրը պիտի ժառանգեն։



Լեռան քարոզը։

«Երանի՜ արդարութեան համար անօթի և ծարաւ եղողներուն, որովհետեւ անոնք պիտի կշտանան։

«Երանի՜ ողորմածներուն, որովհետեւ անոնք ողորմութիւն պիտի գտնեն։

«Երանի՜ անոնց որոնց սիրտը մաքուր է, որովհետեւ անոնք Աստուած պիտի տեսնեն։

«Երանի՜ խաղաղութիւն ընողներուն, որովհետեւ անոնք Աստուծոյ որդիները պիտի կոչուին։

«Երանի՜ անոնց որ արդարութեան համար կը հալածուին, որովհետեւ անո՛նցն է երկինքի արքայութիւնը։

«Երանի՜ է ձեզի, երբ կը նախատեն ու կը հալածեն ինծի համար. ուրախ եղէք, որովհետեւ երկինքի մէջ մեծ փառք պիտի վայելէք։»

## ԼԵՐԱՆ ՔԱՐՈԶԸ (Շար.)

Յիսուս շարունակելով Լերան Քարոզը, բացատրեց թէ «Հին Օրէնքին մէջ մարդ սպաննողը դատաստանի պարտական պիտի ըլլար, բայց Ե՛ս կ'ըսեմ թէ ով որ իր եղբօրը կը բարկանայ, կամ կը թշնամանէ զայն, դժոխքի կրակին արժանի պիտի ըլլայ»։

Պատուիրեց՝ ոչ միայն սուտ երդում չընել, այլեւ ամենեւին երդում չընել. հապա, ըսաւ, ձեր «այո՛»ն այո՛ ըլլայ և «ո՛չ»ը ո՛չ։

Պատուիրեց նաև որ ոչ միայն մեր ընկերը սիրենք, հապա մեր թշնամիներն ալ։ «Սիրեցէք, ըսաւ, ձեր թշնամիները, օրհնեցէք ձեզ անիծողները. բարիք ըրէք ձեզ ատողներուն, և աղօթք ըրէք ձեզ հալածողներուն համար, որպէս զի զաւակները ըլլաք երկինքը գտնուող ձեր Հօրը։

«Ձեր ողորմութիւնը ցոյցի համար մարդոց առջեւ մի՛ ընէք, ինչպէս կ'ընեն կեղծաւորները. գուցէ չվարձատրուիք երկինքը գտնուող ձեր Հօրմէն։ Հապա երբ ողորմութիւն կ'ընէք, ձախ ձեռքերնիդ չգիտնայ թէ ի՛նչ կ'ընէ աջ ձեռքը. ծածուկ ըրէ ողորմութիւնդ, և երկնաւոր



Հայրը որ կը տեսնէ, յայտնապէս հատուցում պիտի ընէ քեզի։»

Պահքի և աղօթքի համար ալ նոյն պատուէրը տուաւ մեր տէրը։ Ծածուկ ընել, և ոչ թէ մարդոց երեւալու համար։

Եւ աւելցուց. — «Երբ աղօթք ընէք, այսպէս ըսէք. —

“Հայր մեր որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո։ Եկեսցէ արքայութիւն քո։ Եղիցին կամք քո որպէս յերկինս և յերկրի։ Զհաց մեր հանապազորդ տուր մեզ այսօր։ Եւ թո՛ղ մեզ զպարտիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պարտապանաց։ Եւ մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա՛ զմեզ ի չարէն։ Զի քո է արքայութիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս, ամէն։„

Այսօրուան մեր խօսած աշխարհաբարով, այս աղօթքին թարգմանութիւնն է. —

Ով մեր Հայրը որ երկինքն ես, քու անունդ սուրբ ըլլայ. քու թագաւորութիւնդ գայ։ Քու կամքդ ըլլայ, ինչպէս երկինքի մէջ, այնպէս ալ երկրի վրայ։ Մեր ամէն օրուան հացը մեզի տուր այսօր։ Ու ներէ մեզի մեր պարտքերը, ինչպէս որ մենք կը ներենք մեզի դէմ յանցանք գործողներուն։ Եւ մեզ փորձութեան մի տաներ, հապա փրկէ՛ չարէն։ Ինչու որ քուկդ է թագաւորութիւնը, զօրութիւնը և փառքը, ամէն։

Որովհետեւ, աւելցուց Յիսուս, եթէ մարդոց յանցանքները ներէք, ձեր երկնաւոր Հայրն ալ ձեզի կը ներէ. բայց եթէ մարդոց չներէք իրենց յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ չի ներեր ձեր յանցանքները։



Յիսուս եւ մանուկները։



## ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Օր մը Յիսուս ժամերով խօսած էր ժողովուրդին՝ իր փրկարար քարոզութիւնները։ Մէկ քանի մայրեր՝ իրենց զաւակները բերած էին բարի Վարդապետին որ օրհնէ զանոնք։ Բայց աշակերտները չէին ուզեր որ Յիսուս նեղուի, ուստի կ'արգիլէին մայրերուն՝ իրենց մանուկները անոր քով տանելու։ Բայց մեր Տէրը ըսաւ.

— Թողէք այդ մանուկները որ ինծի գան, և մի՛ արգիլէք. որովհետև երկնքի արքայութիւնը անոնց նման եղողներուն է։

Յետոյ գիրկը առաւ և օրհնեց զանոնք։

*
* *

Ուրիշ օր մը աշակերտները կը վիճաբանէին թէ ո՞վ մեծ պիտի ըլլայ արքայութեան մէջ։

Յիսուս իմանալով, մանուկ մը կեցուց անոնց առջեւ ու ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ այս փոքրիկին պէս չըլլաք, չէք կրնար երկինքի արքայութիւնը մտնել։ Ով որ խոնարհ է այս փոքրիկին պէս, ա՛ն է մեծ արքայութեան մէջ։

## ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԸ ԿԸ ՄԱՔՐԷ

Հրեաներուն Զատիկը կը մօտենար։ Յիսուս Երուսաղէմ գնաց, այնտեղ կատարելու համար նոյն տօնը։

Տաճարին մէջ տեսաւ մեծ բազմութիւն մը, որ ոչ թէ աղօթելու այլ դրամ շահելու համար հաւաքուած էին հոն։ Տեսաւ շատեր, որ ոչխարներ, աղաւնիներ և ուրիշ կենդանիներ կը ծախէին։ Լումայափոխներ սեղաններու առջեւ նստած էին։ Յիսուս բարկանալով՝ չուանէ խարազանով մը դուրս

վռնտեց բոլորն ալ։ Սեղանները կործանեց, դրամները ցրուեց, և աղաւնի ծախողներուն ալ ըսաւ.

— Վերցուցէք ասոնք, և իմ Հօրս տունը չուկայ մի՛ դարձնէք. աղօթքի տեղ է ան։

Մարդ չհամարձակեցաւ դիմադրելու, և տաճարը մաքրուեցաւ առուտուրի մարդոցմէն։

Զատկի միջոցին միշտ կը քարոզէր Յիսուս, և կ'ուսուցանէր ժողովուրդին։ Շատեր հաւատացին անոր։

## ՀԱՐՈՒՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ

Օր մը երիտասարդ մը Յիսուսի մօտեցաւ և ըսաւ։

— Բարի վարդապետ, ի՞նչ լաւ գործ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։

— Եթէ կ'ուզես արքայութիւն մտնել, պատուիրանները պահէ՛, պատասխանեց Յիսուս։

— Ո՞ր պատուիրանները, հարցուց երիտասարդը։

Եւ Յիսուս պատասխանեց։

—Մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի տար, հայրդ ու մայրդ պատուէ, և ընկերդ անձիդ պէս սիրէ։

—Այդ բոլորը ըրած եմ տղայութենէս ի վեր, ըսաւ երիտասարդը. ուրիշ ի՞նչ կը պակսի ինծի։

Այն ատեն Յիսուս համակիր նայուածք մը ձգեց անոր վրայ և ըսաւ.

— Մէկ բան կը պակսի քեզի. եթէ կ'ուզես կատարեալ ըլլալ, գնա՛, ծախէ՛ ունեցածդ և աղքատներուն տուր, և ինծի հետեւէ. այն ատեն երկինքին մէջ գանձ կ'ունենաս։

Երիտասարդը տրտում հեռացաւ, որովհետեւ շատ ստացուածք ունէր։

Այն ատեն Յիսուս ըսաւ աշակերտներուն.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, աւելի՛ դիւրին է որ մա-



լուխը (հաստ չուան) ասեղի ծակէն անցնի, քան թէ յոյսը իր հարստութեան վրայ դնող մէկը արքայութիւն մտնէ։

Աշակերտները այս լսելով շատ զարմացան։

— Ուրեմն ո՞վ կրնայ փրկուիլ, ըսին։

— Ինչ որ մարդոց համար անկարելի է, հնարաւոր է Աստուծոյ համար, պատասխանեց Յիսուս։

## ՀԻՆԳ ՀԱԶԱՐ ՀՈԳԻԻ ԿԵՐԱԿՐՈՒԻԼԸ

Յիսուս իր աշակերտներով անապատ տեղ մը գնաց Բեթսայիդա քաղաքին մօտ։ Ժողովուրդը իմանալով մեծ բազմութեամբ ետեւէն կ'երթար։ Նոյն օրը Յիսուս Աստուծոյ արքայութեան վրայ կը քարոզէր և հիւանդները կը բժշկէր։

Օրը իրիկուն ըլլալ սկսաւ։ Աշակերտները Յիսուսի մօտեցան և ըսին.

— Արձակէ ժողովուրդը որ մերձակայ գիւղերը երթայ հանգստանայ և կերակուր գտնէ. որովհետեւ անապատի մէջ ենք և ուտելիք չունինք։

— Դո՛ւք կերակրեցէք զանոնք, ըսաւ Յիսուս։

Եւ աշակերտները պատասխանեցին.

— Մենք հինգ հաց և երկու ձուկ ունինք միայն, այսքան բազմութեան կը բաւէ՞ մեր ունեցածը։

— Նստեցուցէք բազմութիւնը կարգ կարգ յիսունական հոգի, հրամայեց մեր Տէրը։

Այսպէս ալ ըրին. հինգ հազար հոգի կարգ կարգ նըստեցան։ Յիսուս առաւ հինգ հացը և երկու ձուկերը. գոհացաւ, կտրեց և աշակերտներուն տուաւ. անոնք ալ ժողովուրդին բաժնեցին։

Ամէնքը կերան կշտացան. և երբ ոտքի ելան, Յիսուս ըսաւ աշակերտներուն.

— Ժողվեցէք փշրանքները։

Եւ անոնք տասներկու զամբիւղ փշրանք ժողվեցին։

Ժողովուրդը այս հրաշքին վրայ կը գոչէր.



Յիսուս հինգ հացով հինգ հազար հոգի կը կերակրէ :

— Այս է ճշմարիտ մարգարէն որ աշխարհ պիտի գար։

Յիսուս տեսնելով որ զինքը թագաւոր ընել կ'ուզեն, հեռացաւ ու լեռը ելաւ։

Յաջորդ օրը ժողովուրդը կը փնտռէր զինքը, և գտաւ ծովուն դիմացի եզերքը։ Այն ատեն Յիսուս ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, դուք հրաշքներ տեսնելնուդ համար չէ որ զիս կը փնտռէք, այլ անոր համար որ այդ հացէն կերաք կշտացաք։ Իրա՛ւ կ'ըսեմ ձեզի, երկնաւոր Հայրս ձեզի պիտի տայ ճշմարիտ հացը որ երկինքէն իջած է։

— Տո՛ւր մեզի այդ հացէն, պատասխանեցին անոնք։



Եւ Յիսուս ըսաւ.

— Ես եմ կեանքի Հացը. ով որ ինծի մօտենայ՝ չանօթենար. ով որ ինծի կը հաւատայ՝ բնաւ չի ծարաւնար։ Ձեր հայրերը անապատին մէջ մանանայ կերան ու մեռան. իսկ այս հացէն ով որ ուտէ, յաւիտեան պիտի ապրի։

## ՅԻՍՈՒՍ ԾՈՎՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ՔԱԼԷ

Հացը շատցնելու հրաշքէն ետքը, Յիսուս աշակերտները ստիպեց որ նաւակ նստին և ծովակին անդիի կողմը երթան, և ինքը ժողովուրդը արձակելէ ետքը լեռը ելաւ առանձին աղօթելու։

Իրիկունը մինակ էր, ու նաւակը հեռացած էր ծովեզերքէն՝ ալիքներէն քշուելով, որովհետև հակառակ հով կար։

Մութը կոխելէն շատ ետքը, Յիսուս իր աշակերտներուն մօտ գնաց՝ ծովուն վրայ քալելով։ Երբ աշակերտները տեսան զայն, սաստիկ շփոթեցան, կարծեցին թէ աչքերնուն կ'երեւայ, և վախերնէն սկսան պոռալ։

Անմիջապէս անոնց հետ խօսեցաւ Յիսուս.

— Քաջալերուեցէ՛ք, ըսաւ, ես եմ, մի՛ վախնաք։

Պետրոս պատասխան տուաւ և ըսաւ.

— Եթէ դուն ես, հրամայէ ինծի որ ջուրերուն վրայէն քեզի գամ։

— Եկո՛ւր, ըսաւ Յիսուս։

Ու Պետրոս նաւէն ելաւ, ու ջուրերուն վրայէն քալելով դէպ ի Յիսուս եկաւ. բայց սաստիկ հովը տեսնելով վախցաւ. երբ ընկղմիլ սկսաւ,

— Տէ՛ր գոչեց, փրկէ՛ զիս։

Յիսուս անմիջապէս ձեռքը երկնցնելով բռնեց զայն ու ըսաւ.

— Թերահաւա՛տ, ինչո՞ւ տարակուսեցար։

Երբ նաւը ելան, ծովը հանդարտեցաւ։



Յիսուս ծովուն վրայ կը քալէ։

Նաւուն մէջը գտնուողները Յիսուսի մօտեցան ու երկրպագութիւն ըրին՝ ըսելով.

— Արդարեւ, Աստուծոյ որդի ես դուն։

Յետոյ Գենեսարէթ ցամաք ելան։

Այնտեղի մարդիկը երբ Յիսուսը ճանչցան, գաւառին մէջ գտնուած բոլոր հիւանդները անոր բերին, ու կ'աղաչէին որ միայն անոր հագուստին քղանցքին դպին. և որոնք որ մէկ անգամ դպան, բժշկուեցան։

## ԿԱՓԱՌՆԱՈՒՄԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ

Յիսուս կը գտնուէր Գենեսարէթի ծովակին եզերքը՝ Կափառնաում քաղաքը, ուր շաբաթ օրերը կը քարոզէր Սինակոկայի մէջ և դուրսը, և ամէն մարդ կը զարմանար իր իմաստուն խօսքերուն վրայ։

Օր մը երբ Յիսուս կ'անցնէր, դիւահար մարդու մը հանդիպեցաւ, որ բարձր ձայնով սկսաւ գոչել.

— Զգէ՛ մեզ, ի՞նչ ունիս դուն մեզի հետ, ո՛վ Նազովրեցի, մեզ կորսնցնելո՞ւ համար աշխարհ եկած ես։

Յիսուս յանդիմանեց դևը որ այդ հիւանդ մարդուն բերնով կը խօսէր, և ըսաւ անոր.

— Լռէ՛, և ե՛լ այդ մարդուն մէջէն։

Դիւահարը կատղեցաւ, գետինն ինկաւ, փրփրեցաւ, և յետոյ հանդարտեցաւ։ Բժշկուած էր։





Յիսուս եւ դիւահարը։

Ամէնքը կը զարմանային ու կ'ըսէին.

— Ի՞նչ է աս, իշխանութեամբ կը հրամայէ չար ոգիներուն, և կը հնազանդին իրեն։

*** Շաբաթ օր մը Յիսուս Սինակոկայէն ելլելով մտաւ Սիմոն-Պետրոսի տունը։ Պետրոսի զոքանչը հիւանդ պառկած էր սաստիկ ջերմով։ Յիսուս մօտեցաւ, բռնեց ձեռքէն և ոտքի հանեց։ Կինը անմիջապէս բժշկուեցաւ, և սկսաւ սպասաւորել Յիսուսի և անոր աշակերտներուն։

Այդ օրը իրիկուան դէմ Պետրոսի տան դրան առջեւ բերին շատ մը հիւանդներ, դիւահարներ։ Կափառնաումի բոլոր բնակիչները հոն հաւաքուած էին։ Յիսուս ելաւ տունէն և բժշկեց հիւանդները, և յետոյ մեկնեցաւ։

Անկէ ետքը Յիսուս կը պտտէր Գալիլիայի բոլոր քաղաքները և կը քարոզէր։

## ՀԱՐԻՒՐԱՊԵՏԻՆ ԾԱՌԱՆ ԵՒ ՅԱՅՐՈՍԻ ԱՂՋԻԿԸ

Անգամ մը երբ նորէն Յիսուս Կափառնաում կը գըտնուէր. հարիւրապետ մը ներկայացաւ իրեն ու խնդրեց որ բժշկէ իր ծառան որ հիւանդ էր։ Յիսուս հաւանեցաւ երթալ անոր տունը՝ ծառան բժշկելու։ Բայց հարիւրապետը խոնարհութեամբ ըսաւ.

— Ո՛չ, Տէ՛ր, ես արժանի չեմ որ դուն իմ տունս գաս, բայց միայն հրամայէ և ծառաս պիտի բժշկուի։

Յիսուս տեսնելով անոր հաւատքը, ըսաւ իր չուրջիններուն.

— Իրաւ որ ես Իսրայէլացիներուն մէջ այսքան հաւատք չտեսայ. ճշմարիտ կ՚ըսեմ որ աշխարհի ամէն կողմէն պիտի գան երկինքի արքայութիւնը վայելելու, մինչդեռ Իսրայէլացիները արժանի պիտի չըլլան։

Յետոյ հարիւրապետին դառնալով ըսաւ.

— Գնա՛, հաւատքիդ պէս թող ըլլայ։

Այդ ըսած վայրկեանին ծառան արդէն բժշկուած էր։

* * *

Ուրիշ անգամ մը Յայրոս անուն ժողովրդապետ մը եկաւ ու խնդրեց Յիսուսէն որ բժշկէ մեռնելու վրայ եղող իր աղջիկը։

Յիսուս ճամբայ ելաւ, բայց դեռ տուն չհասած, լուր բերին որ աղջիկը մեռած է, պարապ տեղը չյոգնեցնէ Վարդապետը։

Բայց Յիսուս սրտապնդելով Յայրոսը, ըսաւ որ չվախնայ, միայն հաւատք ունենայ, ինք պիտի առողջացնէ աղջիկը։

Եւ իրաւ, երբ տուն հասան, տեսան որ աղջիկը մեռած էր ու ամէն ոք ողբ ու կոծի մէջ էր։ Այն ատեն Յիսուս հետը առնելով աղջկան հայրն ու մայրը և իր



աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, աղջըկան սենեակը ելաւ, ու բռնելով անոր ձեռքէն ըսաւ.

— Տալիթա կումի, որ ըսել է՝ աղջի՛կ, քեզի կ՚ըսեմ, ելիր։

Այն ատեն աղջիկը ոտքի ելաւ, մեծ զարմանքի մատնելով ծնողքը և բոլոր տան մէջ գտնուողները։

Յիսուս ըսաւ որ ուտելիք տան աղջկան, և պատուիրեց որ մէկուն բան մը չըսեն այս եղածին մասին։

## ԱՆԴԱՄԱԼՈՅԾԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Օր մը երբ Յիսուս Կափառնաում տան մը մէջ նըստած էր՝ Փարիսեցիներէ և դպիրներէ շրջապատուած, անդամալոյծ մը բերին. բայց տան դուռին առջեւ այնքան բազմութիւն հաւաքուած էր, որ կարելի չէր զայն ներս տանիլ։

Այդ տունը զառիվայրի վրայ շինուած ըլլալով, դիւրին պիտի ըլլար ետեւի կողմէն տանիքը ելլել. ուստի անդամալոյծը բերողները այդ կերպով տանիքը ելան ու բացուածքէ մը չուաններով զգուշութեամբ զայն իջեցուցին Յիսուսի առջեւ։

Յիսուս անոնց հաւատքը տեսնելով, ըսաւ անդամալոյծին.

— Թող մեղքերդ ներուած ըլլան։

Փարիսեցիները և դպիրները այս խօսքը լսելով, սկսան չարախօսել Յիսուսի մասին, ըսելով թէ հայհոյութիւն կ՚ընէ ան, քանի որ Աստուծմէ զատ մէկը չի կրնար մեղքերու թողութիւն տալ։ Յիսուս հասկնալով անոնց միտքը ըսաւ.

— Ի՞նչ կը խորհիք ձեր սիրտին մէջ. ո՞րը դիւրին է. «Թող մեղքերդ ներուա՞ծ ըլլան» ըսել, թէ «Ա՛ռ անկողինդ և տունդ գնա»։ Արդ, որպէս զի գիտնաք թէ Որդին Մարդոյ իշխանութիւն ունի մեղքերը ներելու, ահաւասիկ կ՚ըսեմ անդամալոյծին.

— Ելի՛ր անկողինէդ, և տունդ գնա։

Այն ատեն հիւանդը ելաւ անմիջապէս, ու ժողվելով իր անկողինը, գնաց՝ օրհնելով Աստուած։

Ամէնքը կը զարմանային այս պատահարէն և Աստուած կը փառաբանէին։

## ՆԱՅԻՆԻ ՊԱՏԱՆԻՆ

Յիսուս ՆայիՆ քաղաքին դրան մօտերը տեսաւ որ այրի կնոջ մը մէկ հատիկ զաւակը մեռած էր ու կը տանէին։ Խեղճ մայրը և ուրիշ բարեկամներ լալով կը հետեւէին դագաղին։ Յիսուս մեղքնալով՝ դագաղին մօտեցաւ և ըսաւ.

— Պատանի՛, ելի՛ր կանգնէ՛։

Մեռելը ելաւ և սկսաւ խօսիլ։

Հոն գտնուող բոլոր մարդիկը շատ վախցան այս տեսնելով, և զարմացած կ'ըսէին իրարու.

— Մեծ մարգարէ մը երեւցաւ մեր մէջ։

## ԲԵԹՀԵԶԴԱՅԻ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Երուսաղէմի մէջ Բեթհեզդա կոչուած աւազան մը կար, ուր տարին անգամ մը Աստուծոյ հրեշտակը կ'իջնէր և ջուրը կը խառնէր, և ով որ ամէնէն առաջ ջուրը նետուէր, իր հիւանդութենէն կը բժշկուէր։ Ուստի ամէն տեսակ հիւանդներ կը հաւաքուէին անոր չուրջ գտնուած հինգ սրահներուն մէջ, և կը սպասէին որ ջուրը յուզուի և իրենց մէջէն բախտաւորը հոն նետուելով բժշկութիւն գտնէ։

Յիսուս, որ Զատկի տօնին առթիւ Երուսաղէմ գացած էր, տեսաւ մարդ մը որ երեսունեւութ տարիէ ի վեր հիւանդ էր. մօտեցաւ անոր և ըսաւ.

— Կ'ուզե՞ս բժշկուիլ։



— Տէ՛ր, ըսաւ հիւանդը, մէկը չունիմ որ երբ ջուրերը յուզուին զիս աւազանին մէջ ձգէ, և մինչեւ որ ես տեղէս շարժիմ, ուրիշ մը ինձմէ առաջ կը նետուի։

Յիսուս հրամայեց անոր և ըսաւ.

— Ելի՛ր, ա՛ռ անկողինդ ու տունդ գնա։

Հիւանդը անմիջապէս ելաւ, ժողվեց անկողինը ու կ'երթար։

Այդ օրը շաբաթ ըլլալով Հրեաները կը տրտնջային. որովհետեւ անոնք շաբաթը սուրբ կը պահէին և ո և է գործ մը տեսնել մեղք կը սեպէին. բայց Յիսուս պատասխանեց անոնց ըսելով.

— Իմ հայրս միշտ կը գործէ, ես ալ անոր պէս կ'ընեմ։

Հրեաները այս խօսքին վրայ աւելի զայրացան ու կ'ուզէին սպաննել զայն. բայց Յիսուս իր պատասխաններով զանոնք լռեցնելով, հեռացաւ անոնց մէջէն։

## ՓՈԹՈՐԻԿԸ ԿԸ ԽԱՂԱՂԻ

Յիսուս վերադառնալով Երուսաղէմէն, Գալիլիա գնաց և Գեննեսարէթի ծովուն եզերքները պտտելով կը քարոզէր։

Օր մը Յիսուս աշակերտներուն հետ նաւակ նստաւ ծովակին միւս կողմը անցնելու համար, և այնտեղ քունը տարաւ։ Երբ ծովուն բացերն էին հասեր, յանկարծ փոթորիկ մը ելաւ ու ծովը ալեկոծիլ սկսաւ, այնպէս որ նաւակը ջուրով կը լեցուէր։

Աշակերտները՝ սաստիկ վախցած՝ Յիսուսը արթնցուցին ըսելով.

— Վարդապետ, տե՛ս, կ'ընկղմինք.

Իսկ Յիսուս պատասխանեց.

— Թերահաւատնե՛ր, ինչո՞ւ կը վախնաք։

Եւ հրամայեց հովին ու ծովին, որ անմիջապէս հանդարտեցան։

Աշակերտները, զարմանքով ու սարսափով լեցուած, կ'ըսէին իրարու.

— Ինչպիսի մէկն է աս, որ հովերն ու ծովն ալ կը հնազանդին իրեն։

## ԵՐԿՈՒ ԿՈՅՐԵՐՈՒ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Յիսուս անգամ մը Երիքով քաղաքէն ելլելով կ'երթար և իրեն կը հետեւէր շատ ժողովուրդ։

Ճամբուն վրայ նստած էին երկու կոյրեր, որոնք երբ իմացան թէ Յիսուս կ'անցնի, բարձրաձայն աղաղակեցին և ըսին.

— Յիսո՛ւս, Դաւիթի որդի՛, ողորմէ՛ մեզի։

Ժողովուրդը կը սաստէր անոնց որ լռեն, բայց անոնք աւելի բարձր կ'աղաղակէին ու կ'ըսէին։

— Ողորմէ՛ մեզի, Դաւիթի որդի։

Յիսուս կանգ առաւ, և զանոնք կանչելով հարցուց.



Երկու կոյրերու բժշկութիւնը.



— Ի՞նչ կ'ուզէք որ ձեզի ընեմ։

— Տէ՛ր, կը փափաքինք որ մեր աչքերը բացուին։

Յիսուս գթալով անոնց աչքերուն մօտեցաւ։

Եւ անմիջապէս կոյրերը սկսան տեսնել, և հետեւէն գացին։

## ԱՆՊՏՈՒՂ ԹԶԵՆԻՆ

Յիսուս առտու մը Բեթանիայէն Երուսաղէմ կ'երթար. ճամբան անօթեցած ըլլալով թզենի մը տեսաւ ու քովը գնաց. բայց անոր վրայ տերեւէ ուրիշ բան չգտնելով, ըսաւ.

— Այսուհետեւ բնաւ պտուղ չելլէ քեզմէ։

Անմիջապէս չորցաւ թզենին։



Անպտուղ թզենին.

Աշակերտները տեսնելով զարմացան ու ըսին.

— Ի՛նչպէս շուտով չորցաւ։

Յիսուս պատասխան տուաւ և ըսաւ անոնց.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, եթէ հաւատք ունենաք ու չտարակուսիք, ոչ միայն թզենիին պիտի կրնաք ընել, այլեւ եթէ լեռանը ըսէք. «Ելիր և ծովը ինկիր», այնպէս պիտի ըլլայ։ Ինչ որ ձեր աղօթքին մէջ հաւատքով խնդրէք, պիտի առնաք։

## ՂԱԶԱՐՈՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Ղազարոս Յիսուսի բարեկամն էր, որ Երուսաղէմի մօտ Բեթանիա գիւղը կը բնակէր իր երկու քոյրերուն՝ Մարիամի և Մարթայի հետ։

Անգամ մը, երբ Յիսուս Յորդանանի կողմերը կը գտնուէր, Ղազարոս ծանր հիւանդանալով, իր քոյրերը անոր իմացուցին իրենց եղբօրը հիւանդութիւնը։ Յիսուս երկու օր ալ ուշանալով, յետոյ աշակերտներուն հետ Բեթանիա եկաւ, Ղազարոսին գիւղը. ան չորս օր առաջ մեռած ու թաղուած էր։ Մարթա Յիսուսը դիմաւորեց ըսելով.

— Տէ՛ր, թէ որ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռնիր։ Հիմա ալ գիտեմ թէ Աստուծմէ ինչ որ խնդրես, պիտի տայ։

— Քու եղբայրդ յարութիւն պիտի առնէ, ըսաւ Յիսուս։

— Գիտեմ որ վերջին օրը յարութիւն պիտի առնէ, ըսաւ Մարթա։

— Ե՛ս եմ յարութիւնը և կեանքը, պատասխանեց Յիսուս. ով որ ինծի կը հաւատայ, եթէ մեռնի ալ, դարձեալ կ'ապրի. և ով որ կենդանի է և ինծի կը հաւատայ, յաւիտեան չի մեռնիր։ Կը հաւատա՞ս ասոր։

Եւ Մարթա պատասխանեց.

— Այո՛, Տէր, ես կը հաւատամ, թէ դուն Քրիստոն ես, Աստուծոյ Որդին, որ աշխարհ պիտի գայիր։



Յետոյ Մարթա գնաց լուր տուաւ իր քրոջը՝ Մարիամին, որ անմիջապէս ելաւ և Յիսուսի մօտ եկաւ։ Տանը մէջ, մխիթարելու եկող հրեաներն ալ միասին ելան, կարծելով թէ գերեզման կ'երթայ։

Մարիամ ևս Յիսուսը տեսնելուն, ըսաւ.

— Տէ՛ր, եթէ հոս ըլլայիր, եղբայրս չէր մեռնիր։

Յիսուս երբ տեսաւ որ Մարիամ կուլայ և հետը գտնուող Հրեաներն ալ կ'ուլային, ինք ալ յուզուեցաւ։

— Ո՞ւր դրիք զայն, հարցուց՝ ինք ալ արտասուելով։

— Տեսէ՛ք, որչափ կը սիրէր զայն, կ'ըսէին Հրեաները։

Եւ ուրիշներ ալ կ'աւելցնէին.

— Ան որ կոյրին աչքերը բացաւ, չէ՞ր կրնար այնպէս մը ընել որ ասիկա ալ չմեռնի։

Գերեզմանին մօտ էին, վրան քարէ կափարիչ մը դրուած.

— Քարը մեկդի՛ առէք, ըսաւ Յիսուս։

— Տէ՛ր, չորս օրէ ի վեր թաղուած է, հիմա հոտած ըլլալու է, ըսաւ մեռեալին քոյրը՝ Մարթա։

— Ես քեզի չըսի՞ որ եթէ հաւատաս, Աստուծոյ փառքը պիտի տեսնես, պատասխանեց Յիսուս։

Եւ երբ որ քարը վերցուցին, Յիսուս աչքերը վեր առնելով գոհութիւն տուաւ Հայր Աստուծոյ, և բարձր, տիրական ձայնով մը աղաղակեց.

— Ղազարո՛ս, դուրս ելիր։

Ղազարո՛ս դուրս ելաւ, ոտքերն ու ձեռքերը պատանքով կապուած, իսկ երեսը վարշամակի մէջ փաթթուած։

Յիսուս հրամայեց.

— Քակեցէ՛ք կապերը և թողէք որ երթայ։

Մարիամին հետ եկող Հրեաներէն շատեր երբ տեսան Յիսուսին ըրածը, հաւատացին անոր։

## ՅՈՎՀԱՆՆԷՍ ՄԿՐՏԻՉԻ ՄԱՀԸ

Մեծն Հերովդէս մեռած ըլլալով, իր որդին Հերովդէս կը թագաւորէր Գալիլիայի վրայ։ Ասիկա հաւնելով իր եղբօրը կնոջ՝ Հերովդիայի՝ բաժնեց զայն իր ամուսինէն և իրեն կին առաւ։

Յովհաննէս Մկրտիչ այս վարմունքը լսելով յանդիմանեց Հերովդէսն և Հերովդիան, որոնք այս յանդիմանութենէն զայրացած, ուզեցին սպաննել զայն. բայց որովհետեւ Յովհաննէս սիրուած էր ժողովուրդէն, վախցան անոր կեանքին դպչելու. ուստի Հերովդէս բանտ նետել տուաւ Յովհաննէսը։

Անգամ մը Հերովդէսի տարեդարձին առթիւ տրուած խնջոյքի մը մէջ, Հերովդիայի աղջիկը, Հերովդիադա, այնքան գեղեցիկ պարեց որ Հերովդէս, որ գինովցած էր, ուրախութենէն գոչեց.

— Ուզէ ինձմէ ինչ որ կը փափաքիս, նոյն իսկ թագաւորութեանս կէսը, ու պիտի տամ։

Այն ատեն աղջիկը՝ մօրմէն խրատուած՝ ըսաւ.

— Կը փափաքիմ որ Յովհաննէս Մկրտիչի գլուխը սկուտեղի մը մէջ դրուած ինծի տաք։

Հերովդէս տրտմեցաւ ասոր վրայ, բայց որովհետեւ խօսք տուած էր, հրաման ըրաւ որ Յովհաննէսի գլուխը կտրեն ու բերեն։ Դահիճը անմիջապէս կատարեց հրամանը, և Յովհաննէսի աշակերտներն ալ գալով վերցուցին անոր մարմինը։

## ՊԵՏՐՈՍԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Ժամանակ մը վերջը Յիսուս կը գտնուէր Կեսարիայ (Պաղեստին) Փիլիպպիա քաղաքը։ Այնտեղ իր աշակերտներուն կը հարցնէր.

— Մարդիկ ինծի համար ո՞վ է կ՚ըսեն։



Աշակերտները պատասխանեցին.

— Ոմանք կ՚ըսեն թէ Յովհաննէս Մկրտիչն ես, ոմանք Եղիան, ուրիշներ ալ՝ Երեմիան կամ մարգարէներէն մէկը կը կարծեն քեզ։

— Դո՞ւք ով է կ՚ըսէք ինծի համար։

Սիմոն Պետրոս միւսներէն առաջ փութաց պատասխանել.

— Դո՛ւն ես Քրիստոսը, կենդանի Աստուծոյ որդին։

— Երանի՛ քեզի, Սիմոն, որդի Յովնանի, ըսաւ Յիսուս, որովհետեւ մարմինը և արիւնը քեզի չյայտնեց, այլ իմ երկնաւոր Հայրս։ Ես ալ կ՚ըսեմ քեզի թէ դուն վէմ ես, այդ վէմին վրայ պիտի շինեմ իմ Եկեղեցիս, և դժոխքին դուռները չպիտի կրնան շարժել զայն։ Քեզի պիտի տամ երկինքի արքայութեան բանալիները, և ով որ երկրի վրայ կապես, երկինքի մէջ ալ կապուած պիտի ըլլայ. ու ով որ երկրի վրայ արձակես, երկինքի մէջ ալ արձակուած պիտի ըլլայ։

Այս խօսքով Յիսուս հասկցուց թէ Իր Եկեղեցին պիտի հաստատուի Քրիստոսի Աստուծոյ Որդի ըլլալու դաւանութեան վրայ որ եկեղեցիին հիմնաքարն է. բայց աշակերտներուն պատուիրեց որ մէկու մը չըսեն թէ ինք ՅԻՍՈՒՍ-ՔՐԻՍՏՈՍ է։

## ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Քանի մը օր վերջը Յիսուս միասին առնելով աշակերտներէն Պետրոսը, Յակոբոսը և Յովհաննէսը, Թաբօր լերան վրայ ելաւ աղօթելու։

Հոն աղօթելու ժամանակ, երեսին գոյնը սկսաւ փոխուիլ, դէմքը լուսաւորուեցաւ, արեւու պէս պայծառ եղաւ, և զգեստներն ալ ձիւնի պէս ճերմակ եղան։ Միեւնոյն ժամանակ երեւցան Մովսէս և Եղիա մարգարէները, որոնք Յիսուսի հետ՝ անոր մահուան վրայ կը խօսէին։

Այդ միջոցին երեք աշակերտները իրենց կէս քուն

վիճակէն արթննալով, վախով երկրպագութիւն կ'ընէին, առանց բնաւ գիտնալու թէ ի՛նչ պատահած է։

Երբ Մովսէս և Եղիա աներևոյթ եղան, Պետրոս դարձաւ և ըսաւ Յիսուսին.

— Հոս շատ աղէկ է, Տէ՛ր, եթէ կ'ուզես, երեք տաղաւար շինենք, մէկը Քեզի, միւսը Մովսէսին և երրորդն ալ Եղիային։

Պետրոս այնքան ապշած էր որ ըսածը չէր գիտեր։

Այս միջոցին լուսաւոր ամպ եկաւ մը և վրանին շուք ըրաւ. ձայն մըն ալ լսուեցաւ ամպին մէջէն որ կ'ըսէր. — «Ասիկա՛ է իմ սիրելի որդիս, որուն պէտք է մտիկ ընէք»։

Յեսո՛ւս իր աստուածային փառքը յայտնելու համար այս հրաշքը գործեց առաքեալներուն առջև. ու տեսնելով որ անոնք վախերնուն երեսի վրայ ինկած մնացեր են, անմիջապէս քովերնին գնաց, քաջալերեց, պատուիրեց որ մէկուն չյայտնեն եղածը, մինչև որ ինք յարութիւն առնէ։

---

## ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ

### ՓԱՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԱՔՍԱՒՈՐԸ

Յիսուս մէկ կողմէ հրաշագործութիւններով իր Աստուծոյ Որդի ըլլալուն մասին թէ՛ աշակերտներուն և թէ ժողովրդեան մէջ հաւատքը կը զօրացնէր, և միւս կողմէ գեղեցիկ և տպաւորիչ առակներով կը սորվեցնէր փրկութեան Աւետարանին մեծ սկզբունքները։

Այսպէս, Յիսուս, հպարտ և ուրիշները արհամարհող մարդուն համար սա առակը պատմեց.

Երկու մարդիկ տաճարը գացած էին աղօթելու։ Մէկը փարիսեցի էր և միւսը մաքսաւոր։ Փարիսեցին մէկ կողմ մը կեցած, ձեռքերը հպարտութեամբ տարածած և աչքերը վեր առած, այսպէս կ'աղօթէր։

— Շնորհակալ եմ քեզի, ո՛վ Աստուած, որ ես ուրիշ մարդոց նման յափշտակող, գող, կամ անիրաւ չեմ, ինչ-





Փարիսեցին եւ մաքսաւորը։

պէս է սա մաքսաւորը. այլ շաբաթը երկու անգամ ծոմ կը պահեմ, և իմ ստացուածքներէս տասանորդ կուտամ։

Իսկ մաքսաւորը անկիւն մը քաշուած, աչքերը վե՛ր երկինք բարձրացնել չէր համարձակեր, այլ կուրծքը կոծելով կ՚ըսէր.

— Աստուա՛ծ, քաւէ՛ իմ մեղքերս։

Յիսուս այս առակը պատմելէ ետքը, աւելցուց.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս վերջինը՝ առաջինէն աւելի արդարացած դուրս ելաւ. որովհետև ով որ իր անձը կը բարձրացնէ՝ կը խոնարհի, և որ կը խոնարհեցնէ՝ կը բարձրանայ։

## ԱՆԱՌԱԿ ՈՐԴԻԻՆ ԱՌԱԿԸ

Զղջացող մեղաւորներուն համար Աստուծոյ գթութիւնը ցուցնելու մտօք, Յիսուս սա սրտառուչ առակը պատմեց։

Մարդ մը երկու որդի ունէր։ Անոնցմէ պզտիկը հօրը ըսաւ.

— Հա՛յր, քու ինչքերէդ ինծի ինկած բաժինը տուր.

Հայրը անոնց բաժնեց իր ստացուածքը։

Քիչ ժամանակ ետքը, պզտիկը իր ունեցածը ժողվելով հեռաւոր երկիր մը գնաց, և այնտեղ ամբողջ հարստութիւնը վատնեց անառակութեամբ։ Երբ ունեցածը կերաւ լմնցուց, սաստիկ սով եղաւ այն երկրին մէջ, և ինքը չքաւոր մնաց. ստիպուեցաւ ծառայ ըլլալ այն երկրի քաղաքացիներէն մէկուն քով որ զինքը ագարակ մը ղրկեց խոզերը արածելու։ Կը փափաքէր որ փորը կշտացնէ խոզերուն կերած եղջիւրներով (քէչի պույնուզի), բայց տուող չէր ըլլար իրեն։ Այն ատեն ինքնիրեն ըսաւ. «Իմ հօրս տունը քանի՛ քանի վարձկաններ կան որոնց փորը կուշտ է, իսկ ես այստեղ անօթութենէ կը մեռնիմ. երթամ հօրս և ըսեմ անոր. — Հա՛յր, ես մեղք գործեցի քու և Աստուծոյ առջեւ. ա՛լ արժանի չեմ քու որդիդ կոչուելու, զիս ընդունէ իբրեւ քու վարձկաններէդ մէկը։»

Այսպէս ալ ըրաւ, ճամբայ ելաւ հօրը մօտ երթալու։ Հայրը հեռուէն տեսաւ զինքը, գթաց անոր վրայ, դիմաւորեց զայն, և վիզը պլլուելով համբուրեց։

—Հա՛յր, ըսաւ որդին, ես մեղք գործեցի Աստուծոյ և քու առջեւ, ա՛լ արժանի չեմ որդիդ կոչուելու։

Այն ատեն հայրը ծառաներուն ըսաւ.

— Շուտով հանեցէք առաջուան պատմուճանը և իրեն հագցուցէք. նաև կօշիկ՝ ոտքերուն։ Պարարտ եզն ալ մորթեցէք, ուտենք և ուրախանանք. որովհետև այս որդիս մեռած էր և ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ։





«Հայր, ես մեղք գործեցի Աստուծոյ եւ քու առջեւ»:

Եւ սկսան ուրախանալ։

Մեծ որդին ագարակ գացած էր. վերադարձին երբ տանը մօտեցաւ, երգելու և պարելու ձայներ լսեց. ուստի ծառաներէն մէկը քովը կանչելով հարցուց թէ ի՛նչ է ան։

Պատասխան տուին իրեն և ըսին.

— Եղբայրդ եկած է, և հայրդ պարարտ եզը մորթել տուաւ, անոր ողջ գտնուելուն համար։

Բարկացաւ մեծ եղբայրը չէր ուզեր ներս մտնել։

Հայրը դուրս ելաւ ու կ՚աղաչէր.

— Հա՛յր, ըսաւ տղան, այս քա՛նի տարիէ որ քեզի ծառայեմ, ու բնաւ քու պատուէրներէդ դուրս չելայ.

գոնէ ուլ մը չտուիր ինծի որ իմ բարեկամներուս հետ ուրախութիւն ընէի. երբ եկաւ այդ որդիդ, որ գէշ ընկերներու հետ կերաւ քու ստացուածքդ, պարարտ եզը մորթեցիր անոր համար։

Ու հայրը պատասխանեց.

— Որդեա՛կ, դուն ամէն ժամանակ իմ հետս ես, և ինչ որ ունիմ քուկդ է. բայց պէտք էր ուրախանալ և խնդալ, որովհետև այս քու եղբայրդ մեռած էր ողջնցաւ, կորսուած էր և գտնուեցաւ։

## ՈՂՈՐՄԱԾ ՍԱՄԱՐԱՑԻԻՆ ԱՌԱԿԸ

Անգամ մը հրեայ օրէնքի վարդապետ մը, Յիսուսը փորձելու համար հարցուց անոր.

— Ի՞նչ ընեմ որ յաւիտենական կեանքը ժառանգեմ։

Եւ Յիսուս պատասխանեց.

— Ի՞նչ գրուած է օրէնքին մէջ, ի՞նչպէս կը կարդաս։

Օրինականը պատասխանեց ու ըսաւ. — «Քու Աստուածդ սիրես բոլոր սրտովդ, զօրութիւնովդ ու մտքովդ, և քու ընկերդ ալ սիրես քու անձիդ պէս»։

— Շիտակ պատասխանեցիր, ըսաւ Յիսուս. ա՛յդ ըրէ և պիտի ապրիս։

Օրինականը ինքզինքը արդարացնելու համար, կրկին հարցուց.

— Ո՞վ է իմ ընկերս։

Յիսուս պատասխան տալով ըսաւ.

— Մարդ մը Երուսաղէմէն Երիքով քաղաքը կ՚երթար. ճամբան աւազակներու ձեռքը ինկաւ, որոնք մերկացուցին զինքը, վիրաւորեցին և կիսամեռ թողուցին այնտեղ։ Պատահեցաւ որ քահանայ մը անցնի այն ճամբէն. տեսաւ վիրաւորը և անցաւ գնաց։ Նոյնպէս Ղեւտացի մը (*) այնտեղէն անցաւ, տեսաւ զայն, ու թողուց գնաց։ Վերջապէս

(*) Հրէից մէջ քահանաները Ղեւտացիներուն մէջէն կ՚ընտրուէին։





Բարի Սամարացին։

Սամարացի մը (*) անցաւ հոնկէ, և վիրաւորը տեսնելով գթաց անոր վրայ, քովը եկաւ, պատեց անոր վէրքերը՝ վրան ձէթ և գինի դնելով, և իր ձիուն վրայ հանգչեցնելով պանդոկ մը տարաւ ու այնտեղ դարմանեց։ Յաջորդ առտուն երբ կը մեկնէր, պանդոկապետին երկու դահեկան տուաւ և ըսաւ. «Խնամք տար այս մարդուն, և վերադարձիս ի՛նչ ծախք որ ըլլայ, կը վճարեմ։» Արդ, այս երեքէն ո՞րը կը կարծես որ աւազակներուն ձեռքը ինկած մարդուն մօտաւոր ընկերը եղած ըլլայ։

— Ով որ անոր մեղքցաւ և դարմանեց, ըսաւ օրինականը։

— Գնա՛, դուն ալ այնպէս ըրէ, պատասխանեց Յիսուս։

(*) Սամարացիները Հրեաներուն կողմէ կ՚արհամարհուէին։

## ԿՈՐՍՈՒԱԾ ՈՉԽԱՐԸ, ԲԱՐԻ ՀՈՎԻՒԸ

Անգամ մը մաքսաւորներ ու մեղաւորներ Յիսուսի մօտ եկած էին, լսելու անոր քարոզութիւնները։ Փարիսեցիներ ու դպիրներ կը տրտնջային անկէ ու կ'ըսէին.

— Ինչո՞ւ ասիկա մեղաւորները կ'ընդունի և անոնց հետ կ'ուտէ։

Յիսուս սա առակը ըսաւ անոնց.

— Ձեր մէջէն ո՞վ է որ երբ հարիւր ոչխար ունենայ և անոնցմէ մէկը կորսնցնէ, իննսունևինը չի՞ ձգեր անապատին մէջ և այն կորսուածին ետեւէն չ՞երթար, մինչեւ որ զայն գտնէ։ Երբ որ գտնէ, ուրախանալով իր



Բարի հովիւը



ուսերուն վրայ կը դնէ. եւ տուն գալով կը կանչէ բարեկամներն ու դրացիները և անոնց կ'ըսէ. — «Ուրախ եղէք ինծի հետ, վասն զի իմ կորսուած ոչխարս գտայ։» Կ'ըսեմ ձեզի որ այսպէս ուրախութիւն պիտի ըլլայ երկինքը մէկ մեղաւորի համար որ կ'ապաշխարէ, քան թէ իննսունևինը արդարներու համար որոնք ապաշխարելու պէտք չունին։

⁂ Յիսուս ուրիշ անգամ մը դարձեալ ըսաւ Փարիսեցիներուն.

— Ես եմ բարի և քաջ հովիւը. բարի հովիւը իր կեանքը ոչխարներուն համար կը զոհէ. բայց վարձկանը որ հովիւ չէ և ոչխարները իրը չեն, երբ կը տեսնէ գայլը որ կուգայ, կը թողու ոչխարները և կը փախչի. և գայլը կը յափշտակէ ոչխարները և կը ցրուէ։ Եւ վարձկանը կը փախչի, որովհետեւ վարձկան է և հոգ չըներ ոչխարները։ Ես եմ բարի հովիւը, կը ճանչնամ իմիններս և կը ճանչցուիմ անոնցմէ։

## ԱՅՐԻ ԿՆՈՋ ԼՈՒՄԱՆ

Յիսուս անգամ մը տաճարին մէջ գանձանակին դիմացը նստած կը դիտէր գանձանակը դրամ ձգողները։ Շատ հարուստներ եկան ու շատ բան ձգեցին։ Այրի կին մըն ալ եկաւ և երկու լումայ ձգեց։ (Մէկ լուման հազիւ մէկուկէս փարա կ'արժէր)։ Այն ատեն Յիսուս կանչեց աշակերտները և ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, այս թշուառ այրին աւելի շատ բան ձգեց գանձանակին մէջ քան միւսները. որովհետեւ անոնց ամէնքը իրենց աւելորդներէն տուին. իսկ ասիկա իր աղքատութեամբը ինչ որ ունէր, բոլորն ալ տուաւ։

## ՉԱՐ ԾԱՌԱՅԻՆ ԱՌԱԿԸ

Անգամ մը Պետրոս Յիսուսի հարցուց.

— Տէ՛ր, եթէ իմ եղբայրս ինծի դէմ մեղք գործէ, քանի՞ անգամ ներեմ. եօ՞թն անգամ:

— Ոչ թէ մինչեւ եօթն անգամ, պատասխանեց Յիսուս, այլ մինչեւ եօթանասուն անգամ եօթը:

Եւ հետեւեալ առակը պատմեց.—

Աստուծոյ արքայութիւնը նմանեցաւ տանուտէրի մը որ ուզեց հաշիւ տեսնել իր ծառաներուն հետ. և երբ հաշիւը սկսաւ, իրեն մէկը բերին որ տասը հազար քանքար (*) պարտական էր. բայց որովհետեւ դրամ չունէր որ վճարէ, տէրը հրաման ըրաւ որ անոր կինը, զաւակները, և բոլոր ունեցածները ծախեն ու պարտքը վճարեն: Ծառան տիրոջը ոտքերուն իյնալով կ՚աղաչէր.

— Ժամանակ տուր ինծի, տէ՛ր, և բոլորն ալ կը վճարեմ.

Տէրը գթալով այդ ծառային, ազատ արձակեց զայն, և պարտքն ալ իրեն բաշխեց:

Տիրոջմէն բաժնուելէն ետքը, այդ ծառան գնաց գտաւ իր ծառայակիցներէն մէկը, որ հարիւր դահեկան պարտք ունէր իրեն: Բռնեց անոր օձիքէն, ու խեղդելու աստիճան կը սեղմէր ու կ՚ըսէր.

— Տո՛ւր, պարտքդ տուր:

Խեղճ ծառայակիցը անոր ոտքը իյնալով կ՚աղաչէր.

— Ժամանակ տուր ինծի, և պարտքս պիտի վճարեմ:

Բայց առնելիքւորը չուզեց սպասել, այլ գնաց բանտ նետել տուաւ զայն, մինչեւ որ պարտքը վճարէ:

Միւս ծառաները երբ որ տեսան պատահածը, շատ

(*) Մէկ քանքարը 200 ոսկի արժէք ունեցող դրամ մըն էր:





Չար ծառան

տրտմեցան.. և գացին իրենց տիրոջ իմաց տուին ինչ որ պատահեցաւ: Այն ատեն տէրը կանչեց զայն ու ըսաւ.

— Չա՛ր ծառայ, ես քու ամբողջ պարտքդ քեզի բաշխեցի, որովհետեւ աղաչեցիր ինծի. պէտք չէ՞ր որ դուն ալ ողորմէիր քու ծառայակիցիդ, ինչպէս որ ես քեզի ողորմեցայ:

Եւ տէրը բարկանալով, դահիճներուն՝ (բանտապետ) յանձնեց զայն, մինչեւ որ իր պարտքին յետին տասնոցն ալ վճարէ:

Յիսուս այս առակը պատմելէն ետքը, աւելցուց.

— Իմ երկնաւոր Հայրս ալ այդպէս պիտի ընէ ձեզի, եթէ ձեզմէ ամէն մէկը սրտանց չներէ իր եղբօրը յանցանքներուն:

## ԱՆՄԻՏ ՀԱՐՈՒՍՏԸ

Յիսուս մարդիկը ագահութենէ զգուշացնելու համար հետեւեալ առակը պատմեց. —

Հարուստ մարդու մը արտերը առատ բերք տուին։ Եւ ան կը մտածէր ինքնիրեն ու կ'ըսէր. «Ի՞նչ ընեմ, տեղ չունիմ որ բերքերս ժողվեմ։» Եւ աւելցուց. «Գիտեմ թէ ի՛նչ պէտք է ընեմ. շտեմարաններս քակեմ և աւելի մեծերը շինեմ, այնտեղ ժողվեմ իմ ցորեններս ու բոլոր բերքերս. և ըսեմ ինքնիրենս. — Ո՛վ իմ անձս, շատ բարիքներ ունիս շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ և ուրախ եղիր»։



Անմիտ հարուստը։



Բայց Աստուած ըսաւ անոր.

— Անմի՛տ, այս գիշեր հոգիդ պիտի պահանջուի. այս քու պատրաստածներդ որո՞ւ պիտի ըլլան։

Այսպէս է ան որ իր անձին համար գանձ կը դիզէ և Աստուծմով չի հարստանար։

## ՄԵԾԱՏՈՒՆԻՆ ԵՒ ԱՂՔԱՏ ՂԱԶԱՐՈՍԻՆ ԱՌԱԿԸ

Հարուստ մարդ մը կար որ ծիրանի և բեհեզ կը հագնէր, և ամէն օր ճոխ և ուրախ կեանք մը կ'անցընէր։ Այդ հարուստին դրանը սեմին վրայ ինկած մնացած էր Ղազարոս անունով վիրաւոր աղքատ մը, որ կը ցանկար փորը



Մեծատունը եւ աղքատ Ղազարոսը.

կշտացնել մեծատունին սեղանի փշրանքներէն, և շուները կուգային կը լիզէին անոր վէրքերը։

Այս աղքատը մեռաւ և հրեշտակները զինքը տարին Աբրահամի գիրկը։

Հարուստն ալ մեռաւ ու թաղուեցաւ. և երբ դժոխքին տանջանքներուն մէջ աչքերը բացաւ, հեռուէն տեսաւ Աբրահամը, և Ղազարոսը՝ անոր գիրկը հանգչած։ Աղաղակեց և ըսաւ.

— Հա՛յր Աբրահամ, ողորմէ՛ ինծի, և Ղազարոսը ղրկէ որ մատին ծայրը ջուրով թրջելով գայ զովացնէ լեզուս, որովհետեւ կը տանջուիմ այս կրակին մէջ։

— Որդեա՛կ, ըսաւ Աբրահամ, յիշէ որ կեանքիդ մէջ ամէն բարիք վայելեցիր, և Ղազարոս ալ չարչարանք քաշեց. հիմա անիկա կը մխիթարուի այստեղ, և դուն կը տանջուիս։ Ասկէ զատ մեծ անդունդ մը կայ մեր ու ձեր մէջտեղը, այնպէս որ ասկէ հոդ անցնիլ կարելի չէ, ոչ ալ ադկէ հոս գալ։

Այն ատեն հարուստը ըսաւ.

— Կ'աղաչեմ, հա՛յր, Ղազարոսը իմ տունս ղրկէ. այնտեղ երկու եղբայր ունիմ, թող անոնց հասկցնէ որ չըլլայ թէ անոնք ալ այս տանջանքի տեղը գան։

Աբրահամ պատասխանեց.

— Անոնք Մովսէսը և մարգարէները ունին, թո՛ղ անոնց մտիկ ընեն։

— Ոչ, հա՛յր, կրկնեց հարուստը, եթէ մեռելներէն մէկը երթայ անոնց, այն ատեն կ'ապաշխարեն։

— Եթէ Մովսէսի և մարգարէներուն մտիկ չընեն, մեռելներէն մէկն ալ յարութիւն առնէ, դարձեալ չեն հաւատար, ըսաւ վերջապէս Աբրահամ։



## ՏԱՍԸ ԿՈՅՍԵՐՈՒՆ ԱՌԱԿԸ

Յիսուս կը շարունակէր իր քարոզութիւնները մեծ բազմութեան մը ներկայութեանը։ Անգամ մը Երուսաղէմի մէջ քարոզած ատեն կ'ըսէր։

— Երբ Աւետարանը քարոզուի բոլոր ազգերու մէջ և ժամանակը հասնի, աշխարհի վերջը պիտի գայ։ Այն ատեն արեւը պիտի խաւարի և լուսինը լոյս չպիտի տայ, և աստղերը երկինքէն պիտի իյնան, ու սարսափ պիտի տիրէ երկրի վրայ։ Եւ այն ատեն երկինքին վրայ պիտի երեւայ Մարդու Որդիին Նշանը։ Բոլոր ազգերը պիտի տեսնեն Մարդու Որդին երկինքի ամպերուն վրայ. Անոր հրեշտակներն ալ աշխարհի չորս անկիւններէն պիտի հաւաքեն անոր ընտրեալները։ Ե՞րբ պիտի ըլլան ասոնք։ Մարդ չի գիտեր, Աստուած միայն գիտէ։

«Այն ատեն երկինքի արքայութիւնը պիտի նմանի տասը կոյսերու, որոնք իրենց լապտերները վառելով փեսային դիմաւորելու գացին։ Ասոնցմէ հինգը յիմար էին և հինգը իմաստուն։ Յիմարները իրենց լապտերները առին, բայց ձէթ չառին. իսկ իմաստունները ամաններով ձէթ առին միասին։ Եւ երբ փեսան ուշացաւ, ամէնուն ալ քունը տարաւ։ Կէս գիշերուան մօտ ձայն մը լսուեցաւ։ «Ահա՛ փեսան կուգայ, ելէք դիմաւորեցէք զայն.» Բոլորն ալ ելան, իրենց լապտերները պատրաստեցին։ Յիմարներն ըսին իմաստուններուն.

— Ձեր իւղէն մեզի տուէք, որովհետեւ ահա՛ կը մարին մեր լապտերները։

Իմաստունները պատասխանեցին.

— Գուցէ չբաւէ թէ՛ ձեզի և թէ մեզի. գացէք ծախողներուն և գնեցէք։

Երբ անոնք ձէթ գնելու գացած էին, փեսան եկաւ, և պատրաստ եղողները անոր հետ հարսնիք մտան, ու դուռը փակուեցաւ։



Յիմար կոյսերը

Յետոյ եկան միւս կոյսերն ալ և ըսին.

— Տէ՛ր, տէ՛ր, բա՛ց մեզի։

Փեսան պատասխանեց.

— Ճշմարիտ կ'ըսեմ որ ես ձեզ չեմ ճանչնար։

Արթո՛ւն կեցէք, զի չէք գիտեր թէ ո՛ր օր և ո՛ր ժամուն պիտի գայ Մարդու Որդին։



## ՅԻՍՈՒՍԻ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ

Երեք տարի շարունակ Յիսուս իր քարոզութիւններով և առակներով, ու մանաւանդ իր անձին գերազանց օրինակով ժողովրդեան սրտին մէջ կը զօրացնէր ճշմարիտ Աստուծոյ հաւատքը, և կը սորվեցնէր մեր երկնաւոր Հօր պատուէրները, կը մխիթարէր վշտացեալները։

Իր քարոզութիւններուն հիմը կը կազմէր Աստուծոյ և մարդոց սէրը, և մասնաւորապէս դէմ կը խօսէր կեղծաւորութեան, ու կը յանդիմանէր Հրեաներու մէջէն Փարիսեցիները, դպիրները, օրէնքի վարդապետները, որոնք ինքզինքնին ջերմեռանդ, բարեգործ կը ցուցնէին ժողովուրդը խաբելու համար, այնպէս կը կեղծէին թէ իրենք Աստուծոյ օրէնքը պահպանելու նախանձախնդիր են։ Յիսուս անոնց ամէնուն ալ «վա՜յ» կը կարդար, որովհետեւ անոնք Աստուծոյ օրէնքին ոգին ձգելով, աւելորդ բաներ կը սորվեցնէին ժողովուրդին։

Անոնք բոլորն ալ թշնամի էին Յիսուսի, որովհետեւ իրենց կեղծաւորի դիմակը վար կ՚առնէր։

Քահանաներն ու քահանայապետներն ալ թշնամի էին Փրկիչին, որովհետեւ անոնք կը կարծէին թէ Մեսիան պիտի գար Իսրայէլի թագաւորութիւնը վերականգնելու համար, մինչդեռ Քրիստոս կը քարոզէր թէ «Իմ թագաւորութիւնս այս աշխարհէն չէ»։

Բոլորն ալ Յիսուսի դէմ ատելութեամբ լեցուած էին, շարունակ ծուղակներ կը լարէին զինքը կորուստի մատնելու համար։ Բայց Յիսուս իր իմաստուն պատասխաններով կը շփոթեցնէր այդ չար մարդիկը։

## ՅԻՍՈՒՍ ԵՐՈՒՍԱՂԷՄ ԿԸ ՄՏՆԷ

*Իր թշնամիները այդ տրամադրութեան մէջ էին, երբ Յիսուս, իր քարոզութեան երրորդ տարին աւարտելէ ետքը, Զատիկը տօնելու համար Երուսաղէմ գնաց, և նոյն քաղաքը մտաւ իշու մը վրայ նստած, իրեն հետեւորդ ունենալով ժողովրդեան մեծ բազմութիւն մը։ Ժողովուրդէն*



Յիսուս Երուսաղէմ կը մտնէ ։

*շատեր իրենց զգեստները անոր ճամբուն վրայ կը փռէին, և շատեր ալ ձիթենիներու և արմաւենիներու ճիւղեր կը սփռէին։ Երբ Յիսուս Ձիթենեաց լեռան զառիվայրին մօտեցաւ, բոլոր աշակերտները սկսան փառաբանել Աստուած, և ժողովուրդը ու տղաքներ որ առջեւէն ու ետեւէն կ'երթային, սկսան աղաղակել.*



— Ովսաննա՛, Դաւիթի որդին, օրհնեալ ըլլայ ան որ Աստուծոյ անունով կուգայ։

*Բազմութեան մէջէն քանի մը փարիսեցիներ ըսին Յիսուսի.*

*— Վարդապե՛տ, յանդիմանէ աշակերտներդ որ լռեն.*

*— Ճշմարիտ կ'ըսեմ, եթէ ասոնք լռեն, քարերը պիտի աղաղակեն, պատասխանեց Յիսուս։*

*Երբ Երուսաղէմ մտաւ, ամբողջ քաղաքը դղրդեցաւ։*

*— Ո՞վ է աս, կ'ըսէին իրարու։*

*— Նազովրեցի Յիսուս մարգարէն է, կը պատասխանէին ժողովուրդէն շատեր։*

*Յիսուս նայեցաւ քաղաքին և լացաւ անոր վրայ, մարգարէանալով ապագային անոր ենթարկուելիք աղէտները, պաշարումը, հիմնայատակ կործանումը.*

## ՅԻՍՈՒՍ ԿԸ ՎԻՃԱԲԱՆԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ

*Յաջորդ օրը Յիսուս տաճարին մէջ կը քարոզէր նորէն. քահանայապետները, դպիրները և ժողովրդեան մէջէն ծերերը մօտեցան իրեն և ըսին.*

*— Ի՞նչ իշխանութեամբ կ'ընես այդ բաները. ո՞վ տուաւ քեզի այդ իշխանութիւնը։*

*— Ես ալ ձեզի բան մը հարցնեմ, պատասխանեց Յիսուս. Յովհաննէսի մկրտութիւնը երկինքէ՞ն էր թէ մարդոցմէ։*

*Անոնք սկսան իրենց մէջ մտածել և ըսել. «Եթէ ըսենք՝ երկինքէն է, պիտի պատասխանէ թէ ուրեմն ինչո՞ւ չհաւատացիք անոր. իսկ եթէ մարդոցմէ ըսենք, ժողովուրդէն կը վախնանք, որովհետեւ ամէնքն ալ Յովհաննէսը մարգարէ ճանչցած են։ Ուստի պատասխանեցին.*

*— Չենք գիտեր։*

*— Ես ալ ձեզի չեմ ըսեր թէ ի՛նչ իշխանութեամբ կ'ընեմ այս բաները, պատասխանեց Յիսուս։*



Յիսուս եւ Փարիսեցիները։

*** Փարիսեցիները յետոյ խորհեցան ուրիշ կերպով մը Յիսուսը ծուղակի մէջ ձգել։ Բանի մը մարդիկ ղրկեցին անոր որոնք եկան և ըսին.

— Վարդապե՛տ, գիտենք որ Աստուծոյ ճամբան կը սորվեցնես, մէկէն չես քաշուիր և երեսպաշտութիւն չես ըներ. ըսէ ուրեմն մեզի, կայսեր տուրք տալ պէ՞տք է թէ ոչ։

Յիսուս անոնց չար միտքը իմանալով ըսաւ.

— Ինչո՞ւ զիս կը փորձէք, կեղծաւորներ. դահեկան մը ցուցուցէք ինծի։

Անոնք դահեկան մը բերին և իրեն տուին։

— Որո՞ւնն է այս պատկերը կամ գիրը, հարցուց Յիսուս։



— Կայսերն է, ըսին անոնք։

— Գացէ՛ք, ուրեմն, կայսերը կայսեր տուէք և Աստուծոյն՝ Աստուծոյ։

Փարիսեցիները շփոթութեան մատնուեցան և հեռացան Յիսուսի քովէն։

*** Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ, և Փարիսեցիներուն ու դպիրներուն դէմ կարդացած «վայ»երը առիթ եղան Յիսուսի թշնամիներուն՝ կրկնապատկելու իրենց ատելութիւնը. ուստի միջոց փնտռեցին զինքը բռնելու։

Տասներկու առաքեալներէն մէկը, Յուդա Իսկարիովտացի, որ արծաթսիրութեան մոլութենէն բռնուած և չէր խրատուած Յիսուսի աստուածային պատուէրներէն և անոր անձին օրինակէն, գիտնալով Յիսուսի թշնամիներուն չար դիտումը, գնաց առաջարկեց իր Տէրը մատնել, երեսուն արծաթի փոխարէն։ Այս վատ սակարկութիւնը վերջանալէն ետքը, Յուդա յարմար առիթ կը փնտռէր իր մատնութիւնը ընելու։

## ԽՈՆԱՐՀՈՒԹԱՆ ԴԱՍԸ

Հրեաներու Զատիկին սովորութիւն էր որ ամէն տուն բաղարջ և գառ պիտի ուտէին։ Տօնին նախորդ օրը Յիսուս վերնատան մը մէջ պատրաստել տուաւ զատկական ընթրիքը։

Բայց նախ խոնարհութեան գերագոյն օրինակ մը տալու համար, Յիսուս ղենջակ մը կապեց մէջքին, և սկսաւ լուալ իր աշակերտներուն ոտքերը, և ղենջակովը սրբել։ Երբ լմնցաւ, Յիսուս սեղան նստաւ և ըսաւ աշակերտներուն.

— Գիտէ՞ք թէ ի՛նչ ըրի ձեզի. դուք զիս Վարդապետ և Տէր կը կոչէք. և լաւ կ'ընէք, որովհետև այնպէս ալ եմ։ Արդ, եթէ ես Տէր և Վարդապետ ըլլալով ձեր ոտքերը

լուացի, պէտք է դուք ալ իրարու ոտք լուաք։ Ես ձեզի օրինակ տուի. ինչպէս որ ես ձեզի ըրի, նոյնը ըրէք իրարու։

Այս խօսքերէն վերջը, Յիսուս տրտմութեամբ լեցուն ըսաւ.

— Ճշմարիտ կ'ըսեմ, ձեզմէ մէկը պիտի մատնէ զիս։

Աշակերտները յուզուելով իրարու երես կը նայէին և կ'ըսէին.

— Տէ՛ր, միթէ ե՞ս եմ։

Յիսուս պատասխանեց.

— Որո՛ւ որ պատառ թրջելով տամ, ա՛ն է։ Մարդու Որդին կ'երթայ, բայց վա՜յ անոր որու ձեռքով պիտի մատնուի. աւելի՛ լաւ էր որ այն մարդը ծնած չըլլար։

Այն ատեն Յուդա ալ ըսաւ.

— Միթէ ե՞ս եմ, Վարդապետ։

— Դուն քու բերնովդ ըսիր, պատասխանեց Յիսուս։

Եւ պատառը թրջելով անոր տուաւ։

Յուդա անմիջապէս դուրս ելաւ։

## Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ժամանակը եկած էր որ հրէական Զատիկը վերջանար։ Յիսուսի մահը պիտի ըլլար Զատիկը, և ինքը Յիսուս պիտի ըլլար Գառնուկը, Ս. Հաղորդութեան խորհուրդին մէջ։

Ընթրիքէն վերջ Յիսուս առաւ հացը, օրհնեց, կտրեց և աշակերտներուն տուաւ ըսելով.

— Առէ՛ք, կերէ՛ք, ա՛յս է իմ մարմինս։

Յետոյ բաժակը առաւ, գոհացաւ, տուաւ անոնց և ըսաւ.

— Խմեցէ՛ք ասկէ ամէնքդ ալ, Նոր Ուխտի բաժակն է այս, իմ արիւնովս լեցուած, որ ձեզի և շատերու մեղքերու թողութեան համար կը թափուի։



Եւ աւելցուց.

— Ասիկա ըրէք իմ յիշատակիս համար։

Այս կերպով Յիսուս հաստատեց Ս. Հաղորդութեան խորհուրդը, և իշխանութիւն տուաւ իր առաքեալներուն՝ կատարել աստուածային այս խորհուրդը, Ս. Պատարագը, զոր առաջին անգամ ինքը՝ Յիսուս՝ կատարեց, և որ մեծ ակնածանքով կը կատարուի միշտ Քրիստոնեայ Եկեղեցիներու մէջ, քահանաներու կողմէ։

## ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ԿՏԱԿԸ

Ընթրիքէն վերջ Յիսուս սրտաշարժ խօսքերով աւանդեց իր վերջին կտակը, սիրոյ մեծ պատուիրանը։

— Նոր պատուիրան մը կուտամ ձեզի, ըսաւ, սիրեցէք մէկզմէկ, ինչպէս ես ձեզ սիրեցի. մարդիկ այս բանով պիտի ճանչնան թէ իմ աշակերտներս էք, երբ սիրէք իրար։

«Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք։ Առանց ինծի մէկը չի կրնար գալ երկնաւոր Հօրը։ Ես Հօրս մէջն եմ, և Հայրս իմ մէջս. Ով որ կը հաւատայ ինծի, իմ կատարած գործերս ինք ալ պիտի կատարէ, և նոյն իսկ անկէ մեծերը պիտի գործէ. վասն զի ես իմ երկնաւոր Հօրս քով կ'երթամ, և ինչ որ իմ անունովս խնդրէք, պիտի կատարեմ, որպէս զի փառաւորուի երկնաւոր Հայրս։

«Եթէ զիս կը սիրէք, պատուէրներս պահեցէք. ու ես պիտի աղաչեմ երկնաւոր Հօրս, որ ձեզի ուրիշ Մխիթարիչ մը ղրկէ, այսինքն ճշմարտութեան Հոգին, որ ձեզի հետ պիտի բնակի մինչև յաւիտեան։

«Խաղաղութիւն կը թողում ձեզի. իմ խաղաղութիւնս կուտամ ձեզի. թող չյուզուին ձեր սիրտերը։ Եթէ զիս կը սիրէք, ուրախ եղէք ձեզմէ բաժնուելուս. վասն կ'երթամ երկնաւոր Հօր քով. և ով որ զիս կը սիրէ, երկնաւոր Հօրս հետ պիտի գանք, և անոր մօտ պիտի բնակինք։

«Դուք իմ բարեկամներս էք, թէ որ պատուէրներս

կատարէք: Ձեզ ծառայ չեմ կոչեր, որովհետեւ ծառան տիրոջը գործերը չի գիտեր: Ինչ որ ուզէք իմ անունովս երկնաւոր Հօրմէն, պիտի տայ ձեզի:

«Իմ երկնաւոր Հայրս ձեզ կը սիրէ, որովհետեւ դուք զիս սիրեցիք: Ասոնք կը խօսիմ, որպէս զի սիրտերնիդ խաղաղի: Այս աշխարհի մէջ նեղութիւն պիտի կրէք. բայց քաջալերուեցէք, որովհետեւ ես յաղթեցի աշխարհի:»

Յիսուս այս խօսքերէն վերջը, աչքերը երկինք բարձրացուց եւ աղօթեց. «Հա՛յր, ժամանակը հասաւ, փառաւորէ որդիդ, որպէս զի որդիդ ալ քեզ փառաւորէ: Ինչպէս որդիիդ իշխանութիւն տուիր ամէն բանի վրայ, ես ալ յաւիտենական կեանք կուտամ այն ամէնուն զոր ինծի տուիր: Յաւիտենական կեանքը այն է որ քեզ միայն ճանչնան ճշմարիտ Աստուած, եւ այն որ դուն ղրկեցիր Յիսուս Քրիստոսը:

«Ես աշխարհի վրայ քեզ փառաւորեցի. յանձնած գործդ կատարեցի, եւ հիմա փառաւորէ զիս, Հայր, այն փառքովը զոր քեզմէ ունէի աշխարհի ստեղծուելէն առաջ: Քու անունդ յայտնեցի մարդոց, զորս ինծի տուիր այս աշխարհէն. քուկդ էին, եւ դուն ինծի տուիր, եւ քու խօսքդ պահեցին: Ես ա՛լ աշխարհի մէջ չեմ. բայց անոնք աշխարհի մէջ են. ու ես քեզի կուգամ, ով սուրբ Հայր, քու անունովդ պահէ զանոնք որ դուն ինծի տուիր, որպէս զի մէկ ըլլան, ինչպէս որ մենք մէկ ենք: Ես քու խօսքդ անոնց տուի, եւ աշխարհ զանոնք ատեց. վասն զի աշխարհէն չեն, ինչպէս որ ես չեմ աշխարհէն: Սրբէ՛ զանոնք քու ճշմարտութիւնովդ. քու խօսքդ ճշմարտութիւն է: Ինչպէս որ դուն զիս աշխարհ ղրկեցիր, ես ալ զանոնք աշխարհ ղրկեցի: Ոչ թէ միայն անոնց համար կ'աղաչեմ, հապա անոնց խօսքովը բոլոր ինծի հաւատացողներուն համար ալ, որպէս զի ամէնն ալ մէկ ըլլան, ինչպէս դուն, ո՛վ Հայր, իմ մէջս ես եւ ես ալ քու մէջդ, որպէս զի ամէն մարդ հաւատայ թէ դուն զիս ղրկեցիր: «Ո՛վ արդար Հայր, աշխարհ քեզ չճանչցաւ. բայց ես քեզ ճանչցայ, եւ ասոնք ճանչցան թէ դուն զիս ղրկեցիր: Ես անունդ անոնց ճանչցուցի, որպէս զի այն սէրը որով դուն զիս սիրեցիր, անոնց մէջ ըլլայ, եւ ես ալ անոնց մէջ»:



Դ.

# ՅԻՍՈՒՍԻ

# ՉԱՐՉԱՐԱՆՔԸ, ՄԱՀԸ, ՅԱՐՈՒԹԻՒՆԸ, ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

## ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՄԷՋ

Տէրունական ընթրիքէն վերջ Յիսուս իր աշակերտներուն հետ Ձիթենեաց լեռը ելաւ, եւ այնտեղ ըսաւ անոնց.

— Այս գիշեր դուք ամէնքդ պիտի գայթակղիք եւ պիտի հեռանաք ինձմէ. որովհետեւ գրուած է թէ երբ հովիւը զարնուի, ոչխարները պիտի ցրուին:

Բայց Պետրոս պատասխանեց.

— Եթէ ամէնքն ալ հեռանան, ե՛ս չեմ բաժնուիր:

— Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, պատասխանեց Յիսուս, այս գիշեր տակաւին հաւը չխօսած երեք անգամ պիտի ուրանաս զիս:

— Եթէ քեզի համար մեռնիլ ալ պէտք ըլլայ, դարձեալ չեմ ուրանար, պատասխանեց Պետրոս:

Այսպէս կ'ըսէին միւս աշակերտներն ալ:

Յետոյ անցան Գեթսեմանիի պարտէզը, ուր Յիսուս սովորութիւն ունէր առանձնանալու: Աշակերտներուն հրամայեց որ արթուն կենան, աղօթեն եւ իրեն սպասեն. ու ինք հեռացաւ անոնց քովէն: Երբ առանձին մնաց, սաստիկ տրտմութեամբ մը լեցուեցաւ: Մեր մեղքերուն, եւ զանոնք քաւելու համար իր կրելիք չարչարանքներուն մտածումը տագնապի մատնեցին զինքը: Ամբողջ մարմինը արիւն քրտինք մտած էր:

— Հա՛յր, կ'ըսէր աղօթելով, եթէ հնար է, այս դառն բաժակը հեռացուր ինձմէ. բայց ոչ թէ իմ կամքս, այլ քու կամքդ թող ըլլայ:



Ձիթենեաց լեռը եւ Գեթսեմանիի պարտէզը :

Գիշերուան այդ պահուն, երեք անգամ աշակերտներուն քով եկաւ և քունի մէջ գտաւ զանոնք, և ըսաւ Պետրոսին.

— Այսպէս, ուրեմն, չկրցա՞ք ժամ մըն ալ արթուն կենալ. արթուն կեցէք և աղօթեցէք, որպէս զի փորձութեան չմտնուք: Հոգին յօժար է, բայց մարմինն տկար:

Տագնապի մէջ էր Յիսուս, և աւելի եռանդով կ'աղօթէր: Այդ միջոցին Աստուծոյ հրեշտակը երկինքէն իջաւ ու կը զօրացնէր զայն:

Վերջապէս Յիսուս աղօթքը լմնցուց, և աշակերտներուն քով երթալով ըսաւ.

— Ա՛լ ասկէ վերջը քնացէք ու հանգչեցէք. հասաւ ժամը, մարդու Որդին մեղաւորներու ձեռքը պիտի մատնուի: Ելէ՛ք երթանք, ահա՛ մատնիչը կը մօտենայ:





Յիսուս Գեթսեմանիի մէջ .

## ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ

Յիսուս հազիւ թէ այս խօսքերը ըսած, էր և ահա Յուդա երեւցաւ՝ զինեալ բազմութեան մը գլուխը անցած: Մատնիչը ըսած էր. «Ով որ համբուրեմ, անի բռնեցէք»: Ուստի Յիսուսի մօտենալով ըսաւ.

— Բարե՛ւ, վարդապետ:

— Յուդա՛, համբուրելո՞վ կը մատնես Մարդու Որդին, ըսաւ Յիսուս:

Եւ համարձակօրէն յառաջ եկաւ:

— Ո՞վ կը փնտռէք, հարցուց:

— Յիսուս Նազովրեցին, պատասխանեցին զինուորները:



Յուդայի մատնութիւնը ։

— Ե՛ս եմ։

Այս խօսքին վրայ անոնք ետ ետ գացին և գետինն ինկան։

Յիսուս կրկնեց իր հարցումը, և նորէն ըսաւ.

— Ձեզի ըսի թէ ե՛ս եմ. եթէ զիս կը փնտռէք թող տուէք որ անոնք երթան։

Այն ատեն զինուորները մօտեցան և բռնեցին Յիսուսը։

Սիմոն Պետրոս քաշեց սուրը, զարկաւ քահանայապետին ծառային, և անոր ականջը կտրեց։

— Սուրդ պատեանին մէջը դիր, Պետրո՛ս, ըսաւ Յիսուս. ով որ սուր կը վերցնէ սուրով կը կորսուի։

Եւ ձեռքը դնելով ծառային ականջին, բժշկեց զայն։

Յետոյ թողուց որ զինքը բռնեն, կապեն, և Աննա և Կայիափա քահանայապետներուն քով տանին։



## ՅԻՍՈՒՍ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ

Աննա քահանայապետը հարցաքննեց Յիսուսը՝ իր քարոզած վարդապետութիւններուն և աշակերտներուն վրայ, բայց չէր կրնար անոր դէմ ամբաստանութիւն մը գտնել։

Յետոյ մեր Տէրը դրկուեցաւ Կայիափա քահանայապետին, ուր դպիրներն ու ծերերը ժողվուած էին։ Ասոնք ալ Յիսուսի դէմ ամբաստանութիւն մը փնտռեցին բայց չգտան։ Սուտ վկաներ ալ եկած էին, բայց բան մը չկրցան հաստատել. Յիսուս լուռ կը մնար։

Այն ատեն Կայիափա ոտքի ելաւ և հարցուց.

— Դո՞ւն ես Քրիստոսը, Աստուծոյ Որդին։

— Դու ըսիր, պատասխանեց Յիսուս. կ'ըսեմ քեզի թէ ասկէ վերջը պիտի տեսնէք Մարդու Որդին, որ Զօրութեան աջ կողմը նստած՝ երկինքին ամպերուն վրայէն կուգայ։

Այն ատեն քահանայապետը գոչեց.

— Այս մարդը հայհոյեց, ալ ի՞նչ պէտք կայ վկայութեան, ձեր ականջովը լսեցիք, ի՞նչ կը մտածէք։

— Մահուա՛ն արժանի է, պատասխանեցին ամէնքը։

Այն ատեն սկսան թշնամանել Յիսուսը, ապտակ զարնել, երեսին թքնել և ծեծել, ու կ'ըսէին իրեն.

— Մարգարէացի՛ր, ո՞վ է քեզի զարնողը։

## ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՅՈՒԴԱՅԻ ՎԱԽՃԱՆԸ

Յիսուսի բոլոր աշակերտները ցրուեր էին։ Պետրոս միայն հեռուէն հետեւած էր անոր. ու մինչդեռ ան ներսը կը դառնէր, ինք դուրսը սրահը նստած էր։ Աղախին մը զայն ճանչնալ կարծելով հարցուց իրեն.

— Դո՞ւն ալ Գալիլիացի Յիսուսին հետ էիր։

Պետրոս ուրացաւ։ Ուրիշներ ալ նկան նոյն հարցումը ըրին, և Պետրոս երեք անգամ ուրացաւ Յիսուսի աշակերտը ըլլալը։ Երրորդ անգամուն հաւը խօսեցաւ։

Պետրոս այն ատեն յիշեց Յիսուսի խօսքը, անմիջապէս դուրս ելաւ և դառնապէս լացաւ։

*** Մատնիչ Յուդան երբ տեսաւ որ Յիսուսը դատապարտեցին, զղջաց, և առած երեսուն արծաթը, դարձուց քահանայապետներուն և ծերերուն, ըսելով.

— Ես մեղք գործեցի, անմեղի մը արիւնը մատնելով։

— Մեզ ի՞նչ փոյթ, քու գիտնալիք բանդ է, ըսին անոնք։

Յուդա արծաթը տաճարին մէջ նետեց, և յուսահատութենէն գնաց ինքզինքը կախեց։

Քահանայապետները չուզեցին այս ստակը գանձանակը ձգել, որովհետեւ արիւնի գին էր, և խորհուրդ ըրին անով գնել Բրուտի կոչուած ագարակը, այնտեղ թաղելու համար օտարականները։

## ՅԻՍՈՒՍ ՊԻՂԱՏՈՍԻ ԵՒ ՀԵՐՈՎԴԷՍԻ ԱՌՋԵՒ

Յաջորդ առտուն Յիսուս տարուեցաւ Պոնտացի Պիղատոսի առջեւ, որ Հրէաստանի կուսակալն էր Հռովմայեցւոց կողմանէ։ Հրէից քահանայապետներուն, դպիրներուն ու ծերերուն կողմէ ցուցուած սաստիկ բողոքներուն և ամբաստանութիւններուն հակառակ, Պիղատոս դատապարտութեան արժանի յանցանք մը չգտաւ անոր վրայ։ Յետոյ իմանալով որ Յիսուս Գալիլիացի է, ղրկեց զայն Գալիլիայի կուսակալ Հերովդէսին, որ այն միջոցին Երուսաղէմ կը գտնուէր։

Հերովդէս Յիսուսը տեսնելով շատ ուրախացաւ։ Կարգ մը հարցումներ ուղղեց անոր, որովհետեւ կը յուսար անոր մէկ հրաշագործութիւնը տեսնել։ Բայց Յիսուս լուռ մնաց։ Քահանայապետներն ու դպիրները միշտ կը չարախօսէին Յի-



սուսի վրայ։ Ուստի Հերովդէս ալ անարգեց Յիսուսը, ծաղրեց զայն և հրամայեց որ ճերմակ զգեստ հագցնեն, և ետ ղրկեց Պիղատոսին։

Պիղատոս, Յիսուսի անմեղութեանը համոզուած ըլլալով, փորձեց զայն ազատել։ Հրեաներուն մէջ սովորութիւն կար որ ամէն տարի Զատկի տօնին ազատ կ'արձակէին մահուան դատապարտուած յանցաւոր մը։ Այդ ժամանակ Բարաբբա անունով մարդասպան աւազակ մը կար բանտարկուած։

— Ո՞վ կ'ուզէք որ արձակեմ, հարցուց Պիղատոս, Բարաբբա՞ն թէ Յիսուսը։

Ամբոխը՝ քահանայապետներէն դրդուած՝ պատասխանեց.

— Բարաբբա՛ն արձակէ, Յիսուս պէտք է խաչը հանուի։

— Բայց ի՞նչ չարիք գործեր է ան, հարցուց նորէն Պիղատոս։

— Խա՛չը հանէ զայն, խաչը հանէ, կ'աղաղակէր միշտ բազմութիւնը։

Պիղատոս, գիտնալով որ Յիսուս անմեղ է, աշխատեցաւ համոզել Հրեաները, որ Յիսուսը թող տան և Բարաբբան դատապարտեն, բայց երբ անկարելի եղաւ, Յիսուսը յանձնեց անոնց ձեռքը։

## ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ

Այնուհետեւ Հրեաները առին Յիսուսը և սկսան ծեծել։ Զինուորները փուշէ պսակ մը դրին գլուխը. կարմիր զգեստ մը հագցուցին, աջ ձեռքը եղէգ մը տուին, առջին ծունկ չոքելով կը ծաղրէին ու կ'ըսէին.

— Ո՛ղջ եղիր, Հրէից թագաւորը։

Ձեռքէն կ'առնէին եղէգը և գլխուն կ'իջեցնէին. կ'ապտակէին ու կը թքնէին երեսը, ու գաւազանի հարուածներ կ'իջեցնէին։



Յիսուսի չարչարանքը ։

*Յիսուս համբերութեամբ և հեզութեամբ կը կրէր այս տանջանքներն և հայհոյութիւնները, առանց բառ մը ըսելու. այն աստիճան որ Պիղատոս գթալով՝ իր մօտ բերել տուաւ զայն արիւնաթաթաւ վիճակի մէջ։ Յուսալով ժողովրդեան գութը շարժել, Հրեաներուն ցուցուց զայն և ըսաւ.*

*— Ահա՛ ձեր մարդը ձեզի։*

*Այս տեսնելով ամբոխը, մինչ քահանայապետներէն դրդուած, կը գոչէր.*

*— Խա՛չը հանէ, խա՛չը հանէ զայն։*

*— Բայց ըսի ձեզի թէ անոր վրայ յանցանք չեմ գտներ, առէ՛ք և դուք խաչեցէք։*



*— Մենք օրէնք ունինք, ըսին Հրեաները, այդ օրէնքին համեմատ պէտք է մեռնի, որովհետև ինքզինքը Աստուծոյ Որդի կ'անուանէ։*

*Պիղատոս այս խօսքերուն վրայ նորէն առանձին հարցափորձեց Յիսուսը, և յանցանք մը չգտաւ վրան։ Աշխատեցաւ կերպով մը ազատել Յիսուսը, բայց Հրեաները կ'աղաղակէին շարունակ.*

*— Եթէ զանիկայ արձակես, կայսեր բարեկամ չես. ով որ ինքզինքը թագաւոր անուանէ, կայսեր հակառակ է։*

*Այս խօսքին վրայ Պիղատոս դուրս հանեց Յիսուսը, բեմին վրայ նստաւ և ըսաւ ժողովրդեան.*

*— Ահա՞ ձեր թագաւորը։*

*— Խա՛չը հանէ զայն, պատասխանեց ամբոխը։*

*— Ես ձեր թագաւորը խա՞չը հանեմ, հարցուց Պիղատոս։*

*— Մենք կայսրէն ուրիշ թագաւոր չունինք, պատասխանեցին անոր։*

*Պիղատոս տեսնելով որ հնար չկայ Հրեաները համոզելու, և խռովութիւնը կ'աւելնայ, ջուր բերել տուաւ, և ժողովրդեան առջև ձեռքերը լուաց՝ ըսելով.*

*— Ես այդ արդար մարդուն արիւնէն ազատ եմ, դուք գիտէք։*

*Բոլոր ժողովուրդը պատասխանեց և ըսաւ.*

*— Թո՛ղ անոր արիւնը մեր և մեր որդւոց գլուխը ըլլայ։*

*Վերջապէս Պիղատոս քաջութիւն չունեցաւ իր խղճի ձայնին հետևելու։ Աստուծոյ Որդիին մահուան վճիռը արձակեց, Բարաբբան ազատ թողուց և Յիսուսը Հրեաներուն ձեռքը յանձնեց։*

## ԳՈՂԳՈԹԱՅԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

*Զինուորները բռնեցին Յիսուսը, հանեցին անոր կարմիր հագուստը և իր զգեստները հագցնելով ծանր խաչ մը տուին ուսին, ու թափօրը ճամբայ ելաւ դէպ ի Գողգոթա։*

*Վախնալով որ իրենց զոհը ճամբան չմեռնի, դահիճները հարկադրեցին Սիմոն Կիւրենացի անուն մէկը որ խաչափայտը տանի Յիսուսի հետ։ Ճամբան բազմութիւն մը կը հետեւէր, և շատ մը կիներ սուգ մտած կուլային։*

*Յիսուս անոնց դարձաւ և ըսաւ.*

*— Երուսաղէմի աղջիկնե՛ր, մի լաք իմ վրայ, այլ լացէք ձեր և ձեր որդւոց վրայ. որովհետեւ օր պիտի գայ որ լեռներուն պիտի ըսէք թէ՛ ինկէք մեր վրայ, և բլուրներուն՝ թէ ծածկեցէք մեզ։*

## ՅԻՍՈՒՍԻ ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ

*Երբ Գողգոթայի գագաթը հասան, նորէն մերկացուցին Յիսուսը և խաչը հանեցին զայն՝ գամեր գամելով ձեռքերուն և ոտքերուն։ Այդ միջոցին խաչին վրայ Յիսուս կ'աղօթէր ու կ'ըսէր.*

*— Հա՛յր, ներէ՛ անոնց, որովհետեւ չեն գիտեր թէ ի՛նչ կ'ընեն։*

*Պիղատոս խաչին վրայ հաստատել տուած էր սա արձանագրութիւնը կրող տախտակ մը.* — Յիսուս Նազովրեցի թագաւոր Հրէից :

*Քահանայապետներն ու դպիրները Պիղատոսի ըսին.*

*— Մի՛ գրեր, «Թագաւոր Հրէից» այլ թէ ինքը կ'ըսէր որ «Թագաւոր եմ Հրէից»։*

*— Ինչ որ գրեցի՝ գրեցի, պատասխանեց Պիղատոս։*

*Զինուորները կը ծաղրէին զայն՝ ըսելով.*



*— Եթէ դուն Հրեաներուն թագաւորն ես, քու անձդ փրկէ՛։*

*Ուրիշներ գլուխնին շարժելով կ'անէծէին.*

*— Եթէ Աստուծոյ Որդի ես, խաչէն վար իջիր։*

*Նոյնը կ'ընէին քահանայապետներն ու դպիրները։*

*Երկու չարագործներ ալ խաչուած էին, մէկը Յիսուսի աջ և միւսը ձախ կողմը։ Ատոնցմէ մէկը հայհոյելով կ'ըսէր.*

*— Եթէ Քրիստոսն ես, փրկէ՛ քու անձդ և մեզ ալ։*

*Բայց միւսը՝ աջ կողմինը՝ իր ընկերը սաստելով ըսաւ.*

*— Աստուծմէ չե՞ս վախնար, միևնոյն պատիժին մէջ կը գտնուիս։ Մենք իրաւացի կերպով պատժուած ենք, բայց ասիկա բնաւ գէշ գործ մը ըրած չէ։*

*Եւ Յիսուսի դառնալով աւելցուց.*

*— Տէ՛ր, յիշէ զիս, երբ քու թագաւորութեամբդ գաս։*

*Յիսուս պատասխանեց.*

*— Ճշմարիտ կ'ըսեմ քեզի, դուն այսօր ինծի հետ դրախտին մէջ պիտի ըլլաս։*

*Յիսուսի խաչին քով կեցած էին շատ կիներ, նաև իր մայրը, Մարիամ Մագդաղենացի ևլն.։ Յիսուս տեսնելով իր մայրը, և իր սիրելի աշակերտը՝ Յովհաննէս, ըսաւ իր մօրը.*

*— Ո՛վ կին, ահա՛ քու որդիդ։*

*Յետոյ Յովհաննէսի դառնալով աւելցուց.*

*— Ահա՛ քու մայրդ։*

*Եւ այն օրէն սկսեալ նոյն աշակերտը իր քով առաւ Մարիամ Աստուածածինը։*

---



Յիսուս խաչուած ։

## ՅԻՍՈՒՍ Կ'ԱՒԱՆԴԷ ԻՐ ՀՈԳԻՆ

Յիսուս երեք ժամ գամուած մնաց խաչին վրայ։ Այդ միջոցին արեգակը խաւարեցաւ, և մութ եղաւ ամէն կողմ։ Յիսուս բարձրաձայն աղաղակեց.

— Էլի՛, Էլի՛, լամա սաբաքթանի, այսինքն, Աստուած իմ, Աստուած իմ, ինչո՞ւ թողուցիր զիս։

Անկէ վերջ Յիսուս «ծարա՛ւ եմ» գոչեց։



Զինուորներէն մէկը սպունգը քացախին մէջ թաթխեց, եղէգին ծայրը անցուց և անոր բերնին մօտեցուց։

Երբ Յիսուս քացախը ճաշակեց, ըսաւ.

— Ամէ՛ն բան կատարուած է։

Անգամ մըն ալ աղաղակեց ըսելով.

— Հա՛յր, քու ձեռքդ կ'աւանդեմ իմ հոգիս։

Եւ գլուխը խոնարհեցնելով հոգին աւանդեց.

Այդ միջոցին տաճարին վարագոյրը վերէն վար պատռելով երկու կտոր եղաւ. երկիրը շարժեցաւ և գերեզմաններ բացուեցան, և արդար մեռելներէն շատեր յարութիւն առին և Երուսաղէմ մտան։ Հեթանոս Հարիւրապետը և իրեն հետ գտնուող պահապանները երբ տեսան այս բոլորը, ըսին.

— Արդարեւ Աստուծոյ որդի էր այս։

## ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ

Յիսուսի մահուան օրը ուրբաթ էր։ Եւ որպէսզի մարմինները յաջորդ օրը՝ շաբաթ՝ որ մեծ տօն էր Հրէից, խաչերուն վրայ չմնան, Հրեաները Պիղատոսէն խնդրեցին որ հրաման տայ զանոնք խաչէն վար առնելու։ Զինուորները եկան և երկու աւազակներուն սրունքները կոտրեցին. բայց տեսնելով որ Յիսուս մեռած է արդէն, անոր սրունքներուն չդպան. միայն զինուորներէն մէկը, անոր մահը ստուգելու համար, նիզակը կողը խօթեց, և անկէ արիւն և ջուր դուրս ելաւ։

Անկէ վերջ Յովսէփ Արեմաթացի անուն մէկը, որ ծածուկ աշակերտ էր Յիսուսի, Պիղատոսէն արտօնութիւն առաւ զայն թաղելու։ Առին Յիսուսի մարմինը, և Հրեաներու օրէնքին համեմատ կտաւով պատեցին։ Հոն ուր Յիսուսի մարմինը թաղեցին, պարտէզ մը կար, և մէջն ալ նոր գերեզման մը ուր բնաւ մարդ չէր թաղուած։ Այնտեղ դրին Յիսուսի մարմինը, գերեզմանին վրայ ալ մեծ քար մը դրին։

Գալիլիացի կիներ որ անոնց ետեւէն կ'երթային, տե-



Յիսուս խաչէն վար կ'առնուի ։

սան գերեզմանը և Յիսուսի մարմինին ո՛ւր դրուիլը։ Ետ դարձան խունկ և իւղ պատրաստեցին, բայց օրը շաբաթ ըլլալով բան մը չըրին։

Քահանայապետներն և դպիրները շաբաթ առտու կանուխ Պիղատոսի մօտ երթալով ըսին.

— Կը յիշենք որ այն խաբեբան կ'ըսէր թէ երրորդ օրը յարութիւն պիտի առնէ. հրաման ըրէ որ երեք օր պահպանութիւն ընեն գերեզմանին. չըլլայ որ աշակերտները գողնան անոր մարմինը և ժողովուրդին մէջ լուր հանեն թէ յարութիւն առած է. ասով յետին մոլութիւնը առաջինէն աւելի գէշ պիտի ըլլայ։



Պիղատոս ալ հրամայեց որ պէտք եղածին չափ զինւոր առնեն և պահպանեն ուզածնուն պէս։

Անոնք ալ գացին, գերեզմանը կնքեցին և պահապաններ դրին։

## ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ

Յիսուսի թաղումին երրորդ օրը, արշալոյսին Յիսուս յարութիւն առաւ, իր ամենակարող զօրութեամբը։



Յիսուսի յարութիւնը ։

Այն ատեն մեծ շարժում մըեղաւ. լուսափայլ հրեշտակ մը երկինքէն իջաւ, գլորեց գերեզմանը ծածկող քարը, և նստաւ անոր վրայ։ Հրեշտակը տեսնելնուն՝ պահապանները զարհուրեցան և մեռելի պէս եղան։

Այն բարեպաշտ կիները, որոնք տեսեր էին Յիսուսի ո՛ւր թաղուիլը, կիրակի առաւօտ կանուխ գերեզման եկան, միասին առնելով անուշահոտ խունկեր և իւղեր, որպէս զի օծեն անոր մարմինը։ Ճամբան կ՚ըսէին իրարու.

— Ո՞վ պիտի գլորէ գերեզմանին ծանր քարը։

Եկան ու զարմացումով տեսան որ վերցուած է քարը, որ շատ մեծ էր, և լուսաւոր հրեշտակ մը նստած էր քարին վրայ։ Կիները շատ վախցան։

— Մի՛ վախնաք, ըսաւ հրեշտակը, դուք խաչուած Յիսուսը կը փնտռէք. հոս չէ անիկա, յարութիւն առաւ. կենդանի մարդը մեռելներուն մէջ ի՞նչ կը փնտռէք. ահաւասիկ այն տեղը որ դրած էին զինքը. գացէք ըսէք աշակերտներուն և Պետրոսին թէ ինք ձեզմէ առաջ Գալիլիա կը հասնի. հոն կը տեսնէք զինքը, ինչպէս որ ձեզի ըսած է։

Կիները շուտով գացին որ իմաց տան տասնըմէկ աշակերտներուն և ուրիշներու։ Մարիամ Մագդաղենացին ամէնէն առաջ անցաւ և գնաց ըսաւ Պետրոսին, և Յովհաննէսին զոր Յիսուս շատ կը սիրէր։

— Տէրը վերցուցե՞ր են գերեզմանէն և չեմ գիտեր ո՛ւր դրեր են զայն։

Այս խօսքերը ցնորքի պէս եկան անոնց. վազեցին գերեզման գացին, ու մեծ զարմանքով հաստատեցին իրողութիւնը։

Մարիամ Մագդաղենացի լուրը աշակերտներուն տալէն ետքը նորէն գերեզման դարձած էր և դուրսը կեցած կուլար։ Այդ միջոցին գերեզմանին մէջ նայեցաւ, և տեսաւ ճերմակներ հագած երկու հրեշտակներ, որոնցմէ մէկը մարմինին դրուած տեղին գլխու կողմը, միւսն ալ ոտքի կողմը նստած էին։ Հրեշտակները ըսին Մարիամին։

— Ո՞վ կ՚ուզես, ինչո՞ւ կուլաս.

— Իմ Տէրս գերեզմանէն վերցուցեր են, և չեմ գիտեր ո՛ւր են դրեր, ըսաւ Մարիամ։

Այս ըսելու ատեն գլուխը անդին դարձուց և տեսաւ Յիսուսը որ կեցած էր. բայց Մարիամ չէր գիտեր թէ ան է։





Մարիամ Մագդաղենացի եւ Յիսուս։

— Կին դո՛ւ, ինչո՞ւ կուլաս, ո՞վ կը փնտռես, ըսաւ Յիսուս։

Մարիամ կարծելով թէ պարտիզպանն է,

— Տէ՛ր, ըսաւ, եթէ դուն վերցուցիր, ըսէ՛ ինծի, ո՞ւր դրիր, որպէս զի երթամ առնեմ։

Յիսուս պատասխանեց.

— Մարիա՛մ։

Մարիամ դարձաւ անոր ու ըսաւ.

— Ռաբունի՛, որ կը նշանակէ՝ վարդապետ։

— Մի՛ մօտենար ինծի, ըսաւ Յիսուս, որովհետեւ տա՛կաւին Հօրս քով չեմ ելած։ Այլ գնա՛ եղբայրներուս ըսէ. — Ես պիտի ելլեմ իմ և ձեր Հօրը քով, իմ և ձեր Աստուծոյն քով։

Մարիամ Մագդաղենացի եկաւ աշակերտներուն պատմեց եղածը։

— Ես տեսայ Տէրը, ըսաւ, և այս խօսքերը ըսաւ ինծի։

## ՅԻՍՈՒՍ

## ԷՄՄԱՈՒՍԻ ՃԱՄԲՈՒՆ ՎՐԱՅ

Յիսուս յարութենէն ետքը քառասուն օր մնաց աշխարհի վրայ, և քանի՛ քանի անգամներ զանազան տեղեր երեցաւ առաքեալներուն, բարեպաշտ կիներուն, և ուրիշ բազմաթիւ հաւատացեալներու, և զանոնք միշտ քաջալերեց։

Յարութիւն առած օրը՝ իր աշակերտներէն երկուքը կ՚երթային Էմմաուս կոչուած գիւղը, և կը խօսէին պատահած բաներուն վրայ։ Այդ միջոցին Յիսուս մօտեցաւ անոնց և սկսաւ հետերնին երթալ։ Անոնք չճանչցան Յիսուսը, և զարմանքով պատմեցին բոլոր պատահածները, կիներուն առտուն կանուխ գերեզման երթալը բայց մարմինը չգտնելը, այնտեղ հրեշտակներ տեսնելը, որոնք ըսած էին թէ անիկա կենդանի է, և աւելցուցին․

— Մեզմէ ոմանք ալ գացին գերեզման, և ճիշտ կիներուն պատմածին պէս գտան, բայց զինքը չտեսան։

Այն ատեն Յիսուս պատասխանեց․

— Ո՜վ անմիտ և թուլասիրտներ, որ չէք հաւատար մարգարէներուն գուշակածներուն․ պէտք չէ՞ր որ, անոնց ըսածին պէս, Քրիստոս չարչարուէր և իր փառքին մէջ մտնէր։

Յետոյ սկսաւ Մովսէսէն սկսեալ բոլոր մարգարէներուն իր վրայ գրուածները բացատրել։

Երբ գիւղին մօտեցան, աշակերտներուն ստիպումին վրայ անոնց քով մնաց, ու երբ սեղան նստան, առաւ հացը, օրհնեց, կտրեց և տուաւ անոնց։ Այն ատեն աշակերտներուն աչքերը բացուեցան և զինքը ճանչցան։

Բայց Յիսուս աներեւոյթ եղաւ։

Աշակերտները զարմացած մնացին։ Անմիջապէս սեղանէն ելան և Երուսաղէմ դարձան։



## ՅԻՍՈՒՍ ԴԱՐՁԵԱԼ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ

Երկու աշակերտները Երուսաղէմի մէջ հաւաքուած գտան առաքեալները, որոնք ըսին անոնց․

— Տէրը երեւցաւ Պետրոսի։

Անոնք ալ պատմեցին թէ ի՛նչ պատահած էր իրենց Էմմաուսի ճամբուն վրայ, և թէ ի՛նչպէս ճանչցած էին Յիսուսը՝ հացը կտրած ատեն։

Այս խօսակցութեան միջոցին դուռները փակուած էին, Հրեաներէն ունեցած վախերնուն համար։ Յիսուս յանկարծ երեւցաւ անոնց մէջ և ըսաւ․

— Խաղաղութի՛ւն ձեզի։

Առաքեալները վրդոված ու սարսափած էին, կը կարծէին թէ ոգի մը կը տեսնեն։

— Ինչո՞ւ խռովեր էք, ըսաւ Յիսուս, և ինչո՞ւ մտածումներ կը պաշարեն ձեր սիրտը․ տեսէք ոտքերս և ձեռքերս, շօշափեցէք․ ոգին միս և ոսկոր չունենար, ինչպէս կը տեսնէք որ ես ունիմ։

Այս ըսելով անոնց ցուցուց իր ձեռքերն ու ոտքերը։ Յետոյ հարցուց․

— Ուտելիք ունի՞ք։

Անոնք ալ խորոված ձուկ և մեղր դրին անոր առջեւ։ Կերաւ և մնացորդն ալ իրենց յանձնեց։

Յետոյ սկսաւ Ս. Գիրքէն փաստեր բերելով համոզել զանոնք Մովսէսի և մարգարէներուն և Սաղմոսներուն մէջ իրեն վրայ գրուածներուն մասին, թէ պէտք էր որ Քրիստոս չարչարուէր և երրորդ օրը մեռելներէն յարութիւն առնէր։

## ՅԻՍՈՒՍ ԵՒ ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ

Երբ Յիսուս առաքեալներուն երեւցաւ, Թովմաս անոնց մէջ չկար: Ուստի երբ անոնք իրեն պատմեցին թէ տեսան Տէրը, թերահաւատ գտնուեցաւ և ըսաւ.

— Մինչեւ որ գամերուն տեղը չշօշափեմ և մատս կողը չխօթեմ, չեմ հաւատար:

Ութ օր ետքը առաքեալները դարձեալ հաւաքուած էին՝ դուռները փակուած: Յիսուս եկաւ կեցաւ անոնց մէջ և խօսքը Թովմասին ուղղելով ըսաւ.

— Մատդ հո՛ս բեր, և նայէ՛ իմ ձեռքերս. բեր քու ձեռքդ և իմ կողս խօթէ. ու մի՛ ըլլար անհաւատ, այլ հաւատացեալ:

Թովմաս ծունկի գալով, ըսաւ.

— Իմ Տէ՛րս և իմ Աստուածս:

Եւ Յիսուս պատասխանեց.

— Դուն տեսար ու հաւատացիր. երանի՜ անոնց որ տեսած չեն ու կը հաւատան:



Յիսուս եւ Թովմաս առաքեալ :



## ՅԻՍՈՒՍ ԳԱԼԻԼԻՈՅ ԾՈՎԵԶԵՐՔԻՆ ՎՐԱՅ

Փրկչին հրամանով աշակերտները Երուսաղէմէն ելլելով Գալիլիա գացեր էին: Այնտեղ Յիսուս երեւցաւ անոնց Գեննեսարէթի լիճին եզերքը, որոնց ձկնորսութիւնը և ճաշեց անոնց հետ: Յետոյ Պետրոսի հարցուց.

— Սիմո՛ն, Յովհաննու որդի, կը սիրե՞ս զիս:

— Այո՛ Տէր, դուն գիտես որ կը սիրեմ քեզ, ըսաւ Պետրոս:

— Արածէ՛ իմ գառնուկներս, պատասխանեց Տէրը:



Յիսուս Գալիլիոյ ծովեզերքը :

Յետոյ նորէն հարցուց.

— Սիմո՛ն, Յովհաննու որդի, կը սիրե՞ս զիս։

— Այո՛, Տէր, դուն ալ գիտես որ կը սիրեմ քեզ, պատասխանեց կրկին Պետրոս։

—Արածէ՛ իմ ոչխարներս, կրկնեց Յիսուս։

Յետոյ երրորդ անգամ հարցուց.

— Սիմո՛ն, Յովհաննու որդի, կը սիրե՞ս զիս։

Պետրոս տրտմեցաւ երեք անգամ նոյն հարցումը ուղղելուն համար, և պատասխանեց.

— Տէ՛ր, դուն ամէն բան գիտես, դուն գիտես որ ես քեզ կը սիրեմ։

— Արածէ՛ իմ ոչխարներս, ըսաւ Յիսուս երրորդ անգամ, և վերահաստատեց Պետրոսը իր առաքելական պաշտօնին մէջ։

## ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ

Յիսուս յարութիւն առնելէ ետքը, երկրի վրայ անցուցած քառասուն օրերու միջոցին Եկեղեցւոյ կազմակերպութեան և Ս. Խորհուրդներու մատուցման վրայ կը խօսէր անոնց հետ։

Հրէից Պենտէկոստէի տօնէն տասը օր առաջ, բոլոր աշակերտները ժողվուեցան Երուսաղէմի մէջ, ուր վերջին անգամ երեւցաւ իրենց Յիսուս, և պատուիրեց որ Երուսաղէմէն չմեկնին, այլ սպասեն Հօր աւետիսին։

— Յովհաննէս ջուրով մկրտեց, ըսաւ, բայց դուք շատ օր չանցած Ս. Հոգիով պիտի մկրտուիք.

Ու զանազան մխիթարական խօսքեր ընելէ ետքը, զանոնք տարաւ Երուսաղէմէն դուրս, Ձիթենեաց լեռը, և անոնց տուաւ իր վերջին պատուէրները, մինչ անոնք գլխահակ ականջ կը դնէին երկիւղածօրէն։

— Դուք պիտի զօրանաք, ըսաւ, երբ Ս. Հոգին ձեր վրայ իջնէ, և իմ վկաներս պիտի ըլլաք Երուսաղէմի, ամբողջ Հրէաստանի, Սամարիոյ մէջ, և մինչեւ երկրին ծայրերը։ Ամէն իշխանութիւն տրուած է ինծի երկինքի մէջ և երկրի վրայ։ Ինչպէս Հայրը ղրկեց զիս, ես ալ ձե՛զ կը ղրկեմ։ Գնացէք այսուհետեւ, սորվեցուցէք բոլոր ազգերուն, մկրտեցէք զանոնք՝ Հօր, Որդւոյ և Ս. Հոգւոյն



անունով։ Սորվեցուցէք անոնց ամէն ինչ որ պատուիրեցի ձեզի. և ես ձեզի հետ եմ ամէն օր, մինչեւ աշխարհի վերջը։

Այս խօսքերէն ետքը, ձեռքերը բարձրացուց և վերջին անգամ օրհնեց զիրենք։ Ու կամաց կամաց բաժնուեցաւ անոնցմէ, և սկսաւ երկինք վերանալ, ուր նստած է Հայր Աստուծոյ աջ կողմը։ Առաքեալները, տրտում և ապշահար, անոր կը նայէին, մինչեւ որ ամպ մը եկաւ ծածկեց Յիսուսը աշակերտներուն աչքէն։ Այն ժամանակ ճերմակներ հագած երկու հրեշտակներ երեւցան անոնց և ըսին.

— Գալիլիացինե՛ր, ինչու՞ այդպէս զարմացած կը նայիք. այն Յիսուսը որ հիմա երկինք համբարձաւ, նորէն պիտի գայ օր մը փառքով։

Աշակերտները երկրպագեցին աներեւոյթ եղած Փրկչին, և ուրախութեամբ դարձան Երուսաղէմ, և Աստուած կ'օրհնէին ու կը փառաբանէին։



Յիսուսի Համբարձումը։

## Դ.

# ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆԸ

## Ս. ՀՈԳԻԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ

*Յիսուս աշխարհ եկաւ հաստատելու համար ճշմարիտ Աստուծոյ թագաւորութիւնը այս աշխարհի վրայ։ Ուստի երկինք համբառնալու ատեն, երկրի վրայ թողուց փոքրիկ Եկեղեցի մը, որ պիտի ընդարձակուէր ու տարածուէր աշխարհի բոլոր մասերուն վրայ։ Քրիստոնէական հաւատքի ծաւալման այս գործը առաջին անգամ կատարուեցաւ իր Առաքեալներուն միջոցաւ, որոնց գործերը կը պատմուին համառօտ կերպով։*

*Յիսուսի Համբարձումէն ետքը, Ս. Կոյս Մարիամ, տասնըմէկ առաքեալները, և ուրիշ աշակերտներ, որոնց բոլորին թիւը կը հասնէր հարիւր քսանի, կը հաւաքուէին վերնատան մէջ։ Այնտեղ, Պետրոսի առաջարկութեամբ, մատնիչ Յուդայի տեղ, տասներկուերորդ առաքեալ ընտրուեցաւ եօթանասուն աշակերտներէն Մատաթիա։*

*Պենտէկոստէի տօնը եկած էր, զոր Հրեաները կը կատարէին Զատիկէն յիսուն օր ետքը, Սինայի օրէնսդրութեան յիշատակին, և այդ առթիւ երկրին ամէն կողմերէն բազմաթիւ ժողովուրդ Երուսաղէմ կուգար։ Արդ, Պենտէկոստէի տօնին օրը, այն է Յիսուսի Համբարձումէն տասը օր ետքը, երբ ամէնքը հաւաքուած կ'աղօթէին Սիոնի վերնատան մէջ, յանկարծ երկինքէն ձայն մը լսուեցաւ սաստիկ հովի նման և լեցուց վերնատունը, և իբր կրակէ լեզուներ եկան հանգչեցան հոն գտնուողներու գլխուն վրայ։ Բոլորը լեցուեցան Ս. Հոգիով, և սկսան խօսիլ զանազան լեզուներ՝ ինչպէս որ Հոգին խօսիլ կուտար անոնց։ Աշակերտները զգացին թէ հրաշալի փոփոխութեան*





Ս, Հոգիին գալուստը ։

*մը ենթարկուած են։ Նոր մարդիկ եղած էին իրենք, քաջութեամբ, գիտութեամբ և եռանդով լեցուն, Աստուծոյ փառքին համար։ Վերնատունէն ելան և սկսան քարոզել Քրիստոսի Յարութիւնը.*

*Երուսաղէմի մէջ գտնուող բազմաթիւ Հրեաներ վազեցին եկան՝ լսելու Առաքեալներու քարոզութիւնը, և մեծ զարմանքի ենթարկուեցան, տեսնելով որ Առաքեալները իրենց զանազան երկիրներու լեզուները կը խօսին։ Այն ատեն Պետրոս խօսք առնելով ըսաւ.*

*— Ձեզ զարմանքի մատնող այս հրաշքը կատարումն է այն մարգարէութեան որ կ'ըսէ. — «Ժամանակ պիտի գայ որ իմ Հոգիս պիտի սփռեմ ամէնուն վրայ. այն ատեն հրաշալիքներ պիտի երեւցնեմ երկինքի մէջ և երկրի վրայ, ու ձեր զաւակները պիտի մարգարէանան։» Ո՛վ Իսրայէլացիներ, Նազովրեցի Յիսուսը զոր չար մարդոց ձեռքով մեռ-*

ցուցիք, Աստուած յարութիւն առնել տուաւ մեռելներէն և մենք բոլորս վկայ ենք անոր յարութեան։

Այս իմաստով Պետրոս խօսեցաւ երկար, և հրաւիրեց ունկնդիրները՝ որ մկրտուին Յիսուս Քրիստոսի անունով, իրենց մեղքերուն թողութիւնը և Ս. Հոգիին շնորհքը ստանալու համար։

Այդ միեւնոյն օրը երեք հազար մարդիկ մկրտուեցան, և հաւատացեալներու թիւը երթալով կ'աճէր։

## ԿԱՂԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Առաքեալները իրենց քարոզութեանց հետ մէկտեղ շատ մը հրաշքներ ալ գործեցին։ Պետրոս և Յովհաննէս աղօթքի ժամանակ տաճար գացած էին։ Դրան առջեւ տեսան ի ծնէ կաղ մը, որ ողորմութիւն կը խնդրէր։



Կաղին բժշկութիւնը։



— Ոսկի և արծաթ չունիմ, պատասխանեց Պետրոս, բայց ինչ որ ունիմ, կուտամ քեզի։ Յիսուս-Քրիստոսի անունով, ոտքի ելի՛ր և քալէ։

Անմիջապէս բժշկուեցաւ կաղը, սկսաւ քալել, և տաճար մտաւ ուրախութեամբ և Աստուած փառաբանելով։

Այս հրաշքը իմանալով ժողովուրդը վազեց եկաւ։ Պետրոս երկրորդ անգամ քարոզեց և հաւատացեալներու թիւը հինգ հազարի հասաւ։

## ՀԱԼԱԾԱՆՔ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Մինչ Առաքեալները ժողովուրդին կը խօսէին, քահանաներ, տաճարին իշխանը և Սադուկեցիները վրայ հասան, և անոնց քարոզութեանը մեծ յաջողութենէն զայրանալով, բանտ նետել տուին զանոնք։ Յաջորդ օրը ժողվուեցան իշխանները, ծերերն ու դպիրները Երուսաղէմի մէջ, իրենց առջեւ բերել տուին առաքեալները և հարցուցին անոնց.

— Ի՞նչ իշխանութեամբ և ի՞նչ զօրութեամբ դուք ըրիք այս բանը։

Պետրոս՝ Ս. Հոգիով լեցուած՝ համարձակօրէն պատասխանեց.

— Այն զոր մեր առջեւ կը տեսնէք, բժշկուած է Նազովրեցի Յիսուսի անունով, զոր դուք խաչեցիք, բայց Աստուած մեռելներէն յարութիւն առնել տուաւ։

Ժողովին բոլոր՝ մասնակցողները կը հիանային տեսնելով Առաքեալներու համարձակութիւնը։ Ուստի բաւականացան անոնց արգիլելով քարոզել Յիսուս Քրիստոսի անունով։

Առաքեալները անվախ կերպով պատասխանեցին անոնց.

— Դո՛ւք դատեցէք, արդա՞ր է որ ձեզի հնազանդինք փոխանակ Աստուծոյ. որովհետեւ չենք կրնար լուռ մնալ մեր տեսածին ու լսածին վրայ, երբ Աստուած կը հրամայէ հռչակել զանոնք։

Այս պատասխանին վրայ, դատաւորները՝ ժողովուրդէն վախնալով, թողուցին անոնց որ երթան։

ցուցիք, Աստուած յարութիւն առնել տուաւ մեռելներէն և մենք բոլորս վկայ ենք անոր յարութեան։

Այս իմաստով Պետրոս խօսեցաւ երկար, և հրաւիրեց ունկնդիրները՝ որ մկրտուին Յիսուս Քրիստոսի անունով, իրենց մեղքերուն թողութիւնը և Ս. Հոգիին շնորհքը ստանալու համար։

Այդ միեւնոյն օրը երեք հազար մարդիկ մկրտուեցան, և հաւատացեալներու թիւը երթալով կ՚աճէր։

## ԿԱՂԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆԸ

Առաքեալները իրենց քարոզութեանց հետ մէկտեղ շատ մը հրաշքներ ալ գործեցին։ Պետրոս և Յովհաննէս աղօթքի ժամանակ տաճար գացած էին։ Դրան առջեւ տեսան ի ծնէ կաղ մը, որ ողորմութիւն կը խնդրէր։



Կաղին բժշկութիւնը։



— Ոսկի և արծաթ չունիմ, պատասխանեց Պետրոս, բայց ինչ որ ունիմ, կուտամ քեզի։ Յիսուս-Քրիստոսի անունով, ոտքի ելի՛ր և քալէ։

Անմիջապէս բժշկուեցաւ կաղը, սկսաւ քալել, և տաճար մտաւ ուրախութեամբ և Աստուած փառաբանելով։

Այս հրաշքը իմանալով ժողովուրդը վազեց եկաւ։ Պետրոս երկրորդ անգամ քարոզեց և հաւատացեալներու թիւը հինգ հազարի հասաւ։

## ՀԱԼԱԾԱՆՔ ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Մինչ Առաքեալները ժողովուրդին կը խօսէին, քահանաներ, տաճարին իշխանը և Սադուկեցիները վրայ հասան, և անոնց քարոզութեանը մեծ յաջողութենէն զայրանալով, բանտ նետել տուին զանոնք։ Յաջորդ օրը ժողվուեցան իշխանները, ծերերն ու դպիրները Երուսաղէմի մէջ, իրենց առջեւ բերել տուին առաքեալները և հարցուցին անոնց.

— Ի՞նչ իշխանութեամբ և ի՞նչ զօրութեամբ դուք ըրիք այս բանը։

Պետրոս՝ Ս. Հոգիով լեցուած՝ համարձակօրէն պատասխանեց.

— Այն զոր մեր առջեւ կը տեսնէք, բժշկուած է Նազովրեցի Յիսուսի անունով, զոր դուք խաչեցիք, բայց Աստուած մեռելներէն յարութիւն առնել տուաւ։

Ժողովին բոլոր մասնակցողները կը հիանային տեսնելով Առաքեալներու համարձակութիւնը։ Ուստի բաւականացան անոնց արգիլելով քարոզել Յիսուս Քրիստոսի անունով։

Առաքեալները անվախ կերպով պատասխանեցին անոնց.

— Դո՛ւք դատեցէք, արդա՞ր է որ ձեզի հնազանդինք փոխանակ Աստուծոյ. որովհետեւ չենք կրնար լուռ մնալ մեր տեսածին ու լսածին վրայ, երբ Աստուած կը հրամայէ հռչակել զանոնք։

Այս պատասխանին վրայ, դատաւորները՝ ժողովուրդէն վախնալով, թողուցին անոնց որ երթան։

## ԵՕԹԸ ՍԱՐԿԱՒԱԳՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Հաւատացեալներուն թիւը կը շատնար օրէ օր։ Անոնց վարմունքը հիանալի էր. ամէնքը միացած, մէկ սիրտ մէկ հոգի էին։ Բոլորին ստացուածքը հասարակաց էր։

Ինչ որ ունէին, կը ծախէին և գինը կը բերէին առաքեալներուն կը յանձնէին, միասին տաճար կ'երթային աղօթելու, և միասին կը ճաշէին։ Աղքատներուն ողորմութիւն կուտային, և միշտ կը կատարէին «հացի բեկումը» այն է Ս. Հաղորդութեան Խորհուրդը։ Զիրենք տեսնող հեթանոսները, հիանալով կ'ըսէին իրարու.

— Տեսէ՛ք, ո՛րչափ կը սիրեն մէկզմէկ։

Առաքեալները միևնոյն ժամանակ թէ՛ քարոզելու և թէ ողորմութիւն բաժնելու չհասնելով, այդ գործը կատարելու համար եօթը մարդիկ ընտրեցին աշակերտներուն մէջէն, և զանոնք սարկաւագ անուանեցին։ Այդ եօթը սարկաւագները եկան կանգնեցան Առաքեալներուն առջև, որոնք աղօթելով ձեռքերնին անոնց վրայ դրին։

Եւ Աստուծոյ խօսքը կ'աճէր և աշակերտներուն թիւը կը շատնար։

## Ս. ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԻԼԸ

Եօթը սարկաւագներուն գլխաւորն էր Ս. Ստեփաննոս, հաւատքով և զօրութիւնով լեցուն մարդ մը։ Հրեաները տեսնելով անոր գործած հրաշքները, անոր դէմ ելան, բայց չկրնալով ընդդիմանալ Ս. Հոգիին որ անոր բերնով կը խօսէր, սուտ վկաներ բերին որոնք զրպարտեցին զայն թէ կը հայհոյէ տաճարին և Մովսիսական օրէնքին.

Ս. Ստեփաննոս մեծ քաջութեամբ պաշտպանեց ինքզինքը. և յանդիմանեց Հրեաները՝ իրենց ամբարշտութեան համար։ Այս յանդիմանութիւնները կատղեցուցին զանոնք,





Ս. Ստեփաննոսի Նահատակութիւնը.

որ իր վրայ յարձակեցան, քաղաքէն դուրս քաշկռտեցին, և քարկոծելով մեռցուցին։ Իր նահատակութեան միջոցին, Ս. Ստեփաննոս կ'աղօթէր զինք հալածողներուն համար։ Անիկա փառքը ունեցաւ Քրիստոսի անունով սպաննուողներուն առաջինը ըլլալու, և կոչուեցաւ Նախավկայ։

Այն ատեն սաստիկ հալածանք մը ելաւ Յիսուսի աշակերտներուն դէմ, և քրիստոնեաները՝ բաց ի Առաքեալներէն՝ ստիպուեցան ելլել Երուսաղէմէն, ապաստանելու համար Փարիսեցիներու և օրէնքի վարդապետներու հետապնդումէն։

## ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԴԱՐՁԸ

Սաւուղ, որ ի վերջոյ Պօղոս կոչուեցաւ, ծնած էր Կիլիկիոյ Տարսոն քաղաքը։ Բենիամինի ցեղին կը պատկանէր, և կանուխէն հետեւած էր Փարիսեցւոց աղանդին, որ ամէնէն աւելի հակառակողն էր Յիսուսի կրօնքին։ Այն աս-



Պօղոս առաքեալի դարձը ։

տիճան եռանդուն էր Սաւուղ այդ աղանդին մէջ և ա՛յն աստիճան մոլեռանդ որ սաստիկ հալածող մը եղաւ նորածիլ Քրիստոնէական Եկեղեցիին։ Մեղսակից էր Ս. Ստեփաննոսի սպանութեան, և պահպանութիւնը կ'ընէր նոյն Սուրբը քարկոծող դահիճներուն հագուստին։

Քահանայապետէն գիրեր առած էր Դամասկոս երթալու, և այնտեղ գտնուող բոլոր Քրիստոնեաները բռնելու։ Նոյն քաղաքը երթալու ատեն, յանկարծ ճամբուն վրայ



երկնային փայլուն լոյսով մը շրջապատուեցաւ և գետին տապալեցաւ։ Միեւնոյն ատեն ձայն մը լսեց որ կ'ըսէր իրեն.

— Սաւո՛ւղ, Սաւո՛ւղ, ինչո՞ւ կը հալածես զիս։

— Ո՞վ էք դուք, Տէ՛ր, հարցուց Սաւուղ։

— Ես Յիսուսն եմ, զոր դուն կը հալածես, պատասխանեց ձայնը։

Սարսափէն դողահար, Սաւուղ գոչեց.

— Ի՞նչ կ'ուզես որ ընեմ, Տէ՛ր։

— Ոտքի՛ ելիր, յարեց Տէրը, քաղաք մտիր, այնտեղ պիտի ըսեն քեզի թէ ի՛նչ պիտի ընես։

Սաւուղ ոտքի ելաւ. թէև աչքերը բաց էին, բայց չէր տեսներ։ Իր ճամբու ընկերները ձեռքերէն բռնեցին ու Դամասկոս տարին, ուր մնաց երեք օր առանց ուտելու կամ խմելու։ Եւ սակայն Տէրը Անանիա անուն աշակերտի մը յայտնած էր թէ հալածիչ Սաւուղը «ընտրութեան անօթ» մը եղած էր։ Անանիա, Աստուծոյ հրամանով, մտաւ այն տունը ուր կը գտնուէր Սաւուղ, ձեռքերը անոր վրայ դրաւ, աչքերը բժշկեց, և յետոյ զայն մկրտեց։ Սաւուղ լեցուեցաւ Ս. Հոգիով, և Աւետարանի ամէնէն եռանդուն քարոզիչներէն մէկը եղաւ։

## ԿՈՒՌՆԵԼԻՈՍ ՀԱՐԻՒՐԱՊԵՏԸ

Հեթանոսներուն մէջէն առաջին անգամ քրիստոնէութիւնը ընդունողն եղաւ Հռոմայեցի հարիւրապետ մը՝ Կուռնելիոս, Պաղեստինի Կեսարիա քաղաքէն։ Բարեպաշտ, ողորմած մարդ մըն էր ան։ Օր մը երբ կ'աղօթէր, հրեշտակ մը երեւցաւ իրեն և ըսաւ.

— Կուռնելիոս, քու աղօթքդ և ողորմութիւններդ հասան մինչեւ երկինք, և Աստուած յիշեց քեզ։ Ուրեմն Յոպպէ մէկը ղրկէ Սիմոն-Պետրոսին. ան պիտի ըսէ քեզի թէ ինչ պիտի ընես։

Միւս կողմէ Պետրոս Ս. Հոգիին շնորհիւ տեղեկացաւ թէ պէտք է քրիստոնէութեան դարձող հեթանոսները ընդունի Եկեղեցիին մէջ։ Ուստի Կոռնելիոսի զրկած մարդոց հետ մեկնեցաւ Յոպպէէն և հասաւ Կեսարիա։

Հարիւրապետը իր տունը հաւաքած էր ազգականներ ու բարեկամներ։ Պետրոս անոնց քարոզեց ու սորվեցուց Յիսուս Քրիստոսի հրաշքներն ու վարդապետութիւնները։ Մինչ Պետրոս կը խօսէր, Աստուծոյ Ս. Հոգին յայտնապէս իջաւ ունկնդիրներուն վրայ, և Պետրոս մկրտեց բոլորն ալ։

Անկէ ետքը շատ մը Հեթանոսներ Քրիստոնեայ դարձան։

## ՀԵՐՈՎԴԷՍ ԱԳՐԻՊՊԱՍԻ ՀԱԼԱԾԱՆՔԸ

Յիսուսի Համբարձումէն իբր տասը տարի ետքը, Հրէից Հերովդէս Ագրիպպաս թագաւորը մեծ հալածանք մը հանեց Քրիստոնէից դէմ, Հրեաներու համակրութիւնը իր կողմը շահելու համար։ Գլխատել տուաւ Յովհաննէսի եղբայր Յակոբոսը (Գլխադիր), որ կը քարոզէր Պաղեստինի մէջ, և եղաւ Առաքեալներէն առաջին նահատակուողը։ Բանտարկել տուաւ նաև Պետրոսը, խստիւ պատուիրելով լաւ պահպանել զայն, որպէս զի սպաննել տայ Զատկի տօնէն ետքը։ Բայց Եկեղեցին կ'աղօթէր իրեն համար։ Այն գիշերն իսկ որուն յաջորդ օրը Հերովդէս չարչարանքի պիտի մատնէր Պետրոսը, ան չղթայակապ կը քնանար երկու զինուորներու մէջտեղ. դուռին առջև ալ երկու պահակներ կը սպասէին։ Եւ ահա Աստուծոյ հրեշտակը ներկայացաւ Պետրոսին, և երկնային լոյս մը ողողեց բանտը։ Հրեշտակը արթնցուց Պետրոսը և ըսաւ անոր.

— Գօտիդ կապէ՛, կօշիկներդ հագիր և ետևէս եկո՛ւր։

Պետրոս կատարեց հրեշտակին հրամանը, առանց գիտնալու թէ երա՞զ է թէ իրականութիւն։

Անցան երկու պահակներուն առջևէն, և եկան եր-



կաթէ դուռը, որ քաղաք կը տանէր։ Այդ դուռն ալ ինքնիրենը բացուեցաւ անոնց առջև։

Երբ փողոց ելան հրեշտակը աներևոյթ եղաւ։

Այն ատեն Պետրոս հասկցաւ իրականութիւնը և ըսաւ.

— Հիմա ճշմարտապէս գիտեմ որ Տէրը իր հրեշտակը ղրկեց, և զիս ազատեց Հերովդէսի ձեռքէն և Հրեայ ժողովուրդին ակնկալութենէն։

Շիտակ գնաց Մարկոսի տունը, ուր շատ մը հաւատացեալներ ժողվուած կ'աղօթէին, և անոնց պատմեց թէ ի՛նչպէս Տէրը զինքը ազատած էր բանտէն։ Բոլոր հաւատացեալները սաստիկ զարմացան և ուրախացան, ու սկսան փառաբանել Աստուած։

Երբ առտու եղաւ, զինուորները մեծապէս վրդովուեցան։ Չէին հասկնար թէ ի՛նչ եղած էր Պետրոս։ Հերովդէս հարցաքննեց պահակները և խստիւ պատժեց զանոնք։

Բայց ինք ալ երկար չապրեցաւ այս հալածանքէն ետքը։ Օր մը երբ Կեսարիա քաղաքին մէջ, շքեղ հագուստներ հագած, օտար դեսպաններ կ'ընդունէր և կը բանախօսէր, ու ժողովուրդն ալ զինքը շողոքորթելով կ'ըսէր՝ «Ասիկա Աստուծոյ ձայնն է և ոչ թէ մարդու», յանկարծ Աստուծոյ հրեշտակը հարուածեց զայն Աստուծոյ փառք չտալուն համար, և Հերովդէս մեռաւ որդնոտելով և սոսկալի չարչարանքներու մէջ։

Այս պատուհասը մեծ ազդեցութիւն գործեց հաւատացեալներուն վրայ, և Աստուծոյ խօսքը կ'աճէր ու կը տարածուէր։

## ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պօղոս իր հրաշալի դարձէն ետքը, մեծ խնդութեամբ ընդունուեցաւ Առաքեալներուն կողմէ։ Ժամանակ մը Դամասկոս մնաց, և յետոյ անցաւ Երուսաղէմ։ Հրեաները մեծ զայրոյթ զգացին տեսնելով որ Քրիստոնեաներու հալածիչը Քրիստոնեայ դարձեր է, և ուզեցին զայն սպաննել։ Բայց

Պօղոս յաջողեցաւ փախչիլ և երթալ իր քաղաքը՝ Տարսոն։ Յետոյ շատ տեղեր պտտեցաւ։ Քանիցս ճամբորդութիւններ ըրաւ, մերթ Բառնաբասի, մերթ Շիղայի, Ղուկասի և Տիմոթէոսի ընկերակցութեամբ։ Գնաց Անտիոք, Եփեսոս, Մակեդոնիա, Աթէնք, ամէն կողմ իր քարոզութիւններով և հրաշալի գործերով բազմաթիւ հեթանոսներ քրիստոնէական կրօնքին դարձնելով և Եկեղեցիներ հաստատելով։ Վերջապէս գնաց քարոզեց Հռոմ, ուր նահատակուեցաւ Ներոն կայսեր հալածանքին օրով և անոր հրամանով։

Պետրոս Առաքեալ նախ Երուսաղէմ մնաց։ Յետոյ գնաց հաստատուեցաւ Անտիոք, և ութ տարի մնաց նոյն քաղաքը։ Այնտեղ առաջին անգամ Քրիստոնեայ կոչուեցան Յիսուս Քրիստոսի հետեւողները։ Պետրոս հիմնեց նաև Պոնտոսի, Կապադովկիոյ, Բիւթանիոյ եւն. Եկեղեցիները։ Վերջապէս գնաց Հռոմ, կառավարութեան գլխաւոր կեդրոնը, ուր նահատակուեցաւ նոյնպէս Ներոնի հրամանով, գլխիվայր խաչուելով։

Միւս Առաքեալներն ալ ցրուեցան հռոմէական կայսրութեան զանազան կողմերը, և ուրիշ շատ երկիրներ ալ, տարածելու համար փրկութեան Աւետարանը։ Նոր կրօնքը ընդունողներու թիւը այնքան մեծ եղաւ որ, առաջին դարուն վերջը հռոմէական կայսրութեան գրեթէ ամէն կողմերը Քրիստոնեաներ կը գտնուէին։ Անդրէաս քարոզեց գլխաւորաբար Սև Ծովու եզերքը՝ Սկիւթացւոց աշխարհին մէջ, Թովմաս Հնդկաստան գնաց, Թադէոս և Բարթողիմէոս քարոզեցին Փոքր Ասիոյ, Հայաստանի և Պարսկաստանի մէջ, Յովհաննէս Փոքր Ասիոյ և Եփեսոսի մէջ, Փիլիպպոս՝ Վերին Ասիոյ մէջ, Մարկոս Աւետարանիչ՝ Աղեքսանդրիոյ մէջ, Մատթէոս՝ Պարսկաստանի մէջ, Մատաթիա՝ Եթովպիոյ մէջ։

---



## ՀԱԼԱԾԱՆՔՆԵՐ

Առաքեալներու քարոզութիւնները առանց դժուարութեան չէ որ կատարուեցան։ Անոնք ուր որ գացին, հալածանքի ենթարկուեցան։ Ճշմարտութիւնը միշտ կ'անտեսուի և կը հալածուի, որովհետև չի կրնար գոյութիւն ունենալ ստութեան և մոլորութեանց հետ, և մարդկային գէշ կիրքերը կ'ընդվզին զիրենք մէջտեղէն վերցնողներուն դէմ։

Հալածանքները սկիզբները մասնաւոր և տեղական բնոյթ ունէին․ բայց ի վերջոյ ընդհանուր եղան, և քրիստոնէական առաջին երեք դարերուն մէջ տասը մեծ և ընդհանուր հալածանքներ հանուեցան Քրիստոնէից դէմ, աշխարհի մեծագոյն մասին տէրը եղող հռոմէական կայսրերու կողմէ։

Առաջին ընդհ․ հալածանքը եղաւ Քրիստոսի Ծնունդէն ետք 64 թուականին, Ներոն կայսեր օրով, որ նշանաւոր եղաւ իր անգթութիւններով, մասնաւորապէս Քրիստոնէից դէմ։ Քրիստոնեաները սպաննելը ամենամեծ հաճոյքն էր իրեն։ Երբ սոսկալի հրդեհ մը աւերակ դարձուց Հռոմ քաղաքին մեծ մասը, Ներոն յանցանքը Քրիստոնէից վրայ ձգեց, և ահաւոր տանջանքներու մատնեց զանոնք․ ոմանք վայրի կենդանիներու մորթով պատելով շուներու և գազաններու առջև կը ձգէր որոնք կը գիշատէին զանոնք․ ուրիշներ՝ ձէթով օծուած հագուստներ հագցնելով կանթեղի պէս կը վառէր, և ինք պարտէզին մէջ անոնց լոյսովը կը զուարճանար, մինչ խեղճերը բոցերու մէջ սոսկալի չարչարանքներով կը գալարուէին։

Այդ օրէն սկսեալ յաջորդաբար տասը հալածանքներ եղան Քրիստոնէից դէմ, և հարիւր հազարաւոր վկաներ քաջութեամբ նահատակուեցան․ բայց անիկա փոխանակ վհատեցնելու և վախ ազդելու, աւելի կը գրգռէր անոնց եռանդը և կը քաջալերէր զանոնք Քրիստոսի կրօնքին հետեւելու, այնպէս որ Քրիստոնեաներուն թիւը շարունակ կը բազմանար։

## ԵԿԵՂԵՑԻԻՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Այս հալածանքները՝ հետզհետէ իրենց սաստկութիւնը կորսնցնելով հանդերձ՝ տեւեցին մինչեւ 312 թուականը, երբ Հռոմի կայսերական թագը վէճի առարկայ էր Մաքսենտիոս բռնակալին եւ Մեծն Կոստանդիանոսի միջեւ։ Այս վերջինը արդէն համակիր էր Քրիստոնէից, եւ անոնց Աստուծմէն կը խնդրէր որ ինքզինքը յայտնէ իրեն։ Օր մը, երբ Հռոմը պաշարած էր եւ Կոստանդիանոս զօրքերուն գլուխը կը գտնուէր, երկինքին վրայ լուսաւոր խաչ մը տեսաւ սա արձանագրութեամբ. — «Ասով պիտի յաղթես»։ Ամբողջ բանակը տեսաւ այս նշանը. Կոստանդիանոս, այս տեսիլէն քաջալերուած, զօրաւոր յարձակում մը ըրաւ Հռոմի մէջ ամրացած Մաքսենտիոսի վրայ, որ պարտութեան մատնուեցաւ, ու փախչելով գնաց խեղդուեցաւ Տիբեր գետին մէջ։ Հռոմ իր դուռները բացաւ յաղթականին։ Կայսրը ուզեց որ իր արձանը կանգնուի՝ Խաչը ձեռքը բռնած։ Յիշատակարանին վրայ արձանագրութիւն մը եղաւ յիշեցնող թէ յաղթութիւնը տարուած է փրկութեան այս նշանին միջոցաւ։ Յետոյ Կոստանդիանոս ուզելով դարմանել իր նախորդներուն կողմէ քրիստոնէութեան հասցուած վնասները, տարի մը վերջ (313) Միլանի քաղաքէն հրովարտակ մը հանեց, որով ազատ կը հռչակէր Քրիստ. կրօնի պաշտամունքը, եւ հրամայեց վերադարձնել Քրիստոնեաներէն գրաւուած եկեղեցիներն եւ ստացուածքները։

## ԱՌԱՔԵԼՆԵՐՈՒ ՎԱԽՃԱՆԸ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Պօղոս եւ Պետրոսէն զատ, որոնք Հռոմի մէջ նահատակուեցան, միւս բոլոր Առաքեալներն ալ մարտիրոսութեան պսակն ընդունեցան։ Յակոբոս տեառնեղբայր առաքեալը, Ալփէոսի որդին որ Երուսաղէմի Եկեղեցիին տեսուչ (Եպիսկ.) կարգուած էր, Հրեաներու կողմէ տաճարին աշտարակին վրայ



հանուեցաւ եւ անկէ վար ձգուեցաւ, եւ որովհետեւ չէր մեռած, քարկոծելով ու ծեծելով սպաննեցին։ Ասիկա պատահեցաւ 62 թուականին։ Յովհաննէս Աւետարանիչին համար կը պատմուի թէ Եփեսոսէն, ուր հաստատած էր իր աթոռը, Հռոմ տարուեցաւ սպաննուելու համար, եւ այնտեղ եռացող իւղի կաթսայի մը մէջ ձգուեցաւ, բայց ոեւէ վնաս չկրեց։ Այս հրաշքէն ետքը, Պաթմոս կղզին աքսորուեցաւ։ Ի վերջոյ Եփեսոս դարձաւ, ուրկէ կառավարեց Ասիոյ Եկեղեցիները, եւ այնտեղ վախճանեցաւ յառաջացեալ տարիքի մէջ (դէպի 100 թուականին)։

*** Յիսուսի աշակերտները՝ Մեծ Վարդապետին գործերն ու աւանդութիւնները հետեւեալ կերպով մեզի աւանդեցին. —

Մատթէոս իր Աւետարանը գրեց եբրայեցերէն լեզուով Երուսաղէմի մէջ, Յիսուսի Համբարձումէն ութ տարի ետքը։

Մարկոս՝ Պետրոսի աշակերտ եւ Պօղոսի ընկերակից, իր Աւետարանը գրեց Աղեքսանդրիոյ մէջ եգիպտական լեզւով, Փրկչին համբառնալէն տասնեհինգ տարի ետքը։

Ղուկաս, եօթանասուն աշակերտներէն մէկը, Պօղոս առաքեալին հրամանով իր Աւետարանը գրեց Անտիոքի մէջ ասորի լեզուով, Փրկչին համբառնալէն տասնեօթը տարի ետքը։ Ղուկաս գրեց նաեւ Գործք Առաքելոցը։

Իսկ Յիսուսի սիրելի աշակերտը, Յովհաննէս, որ եղբայրն էր Յակոբոս Զեբեդեայի, իր Աւետարանը Եփեսոսի մէջ գրեց Յունարէն, Փրկչին համբառնալէն յիսուն երեք տարի վերջը։ Յովհաննէս Պաթմոսի մէջ գրեց Յայտնութեան գիրքն ալ։

Պետրոս, Յովհաննէս, Յակոբոս եւ Յուդա Առաքեալները գրեցին եօթը «կաթողիկեայց» թուղթերը։ Իսկ Պօղոս Առաքեալ զանազան Եկեղեցիներու եւ մասնաւորներու գրեց տասնըչորս թուղթեր։

Այս բոլորը կը կազմեն Նոր Կտակարանը, որմէ կը քաղուի ՆՈՐ ՈՒԽՏԻ սրբազան պատմութիւնը։

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՒ ՏԱՃԱՐԻՆ ԿՈՐԾԱՆՈՒՄԸ

Քրիստոնէական Նոր Օրէնքի հաստատումէն ետքը պէտք է դադրէր հրէական Հին Օրէնքը։ Աստիկա պիտի ըլլար Երուսաղէմի տաճարին կործանումովը, Յիսուսի մարգարէութեան համաձայն, որ կատարուեցաւ փրկչական 70 թուականին։

Այդ ժամանակ Հրեաները ապստամբեցան Հռոմայեցւոց դէմ, որոնց լուծը չէին ուզեր կրել։ Այդ ըմբոստութիւնը պատճառ եղաւ իրենց կործանումին։ Կարգ մը հետասեր Հրեաներ Թողուցին քաղաքը և հեռացան։ Քրիստոնեաներն ալ մեկնեցան, ու գացին հաստատուեցան Սուրիա։

Հրէական ըմբոստութեան դէմ, Հռոմայեցիք անյաջողութիւններ ունեցան։ Երեք միլիոն Հրեաներ հաւաքուած էին Երուսաղէմի մէջ Զատկի տօնին առթիւ։ Վեսպասիանոս կայսեր որդին՝ Տիտոս՝ խստացուց Երուսաղէմի պաշարումը, քաղաքին բոլոր ճամբաներն ու անցքերը գոցելով։ Շուտով սով ծագեցաւ քաղաքին մէջ. պաշարուած ժողովուրդը զարհուրելի թշուառութեան և չարչարանքի մատնուեցաւ։ Շատեր մեռնողներու դիակները կ՚ուտէին. մայր մը իր զաւակը մեռցուց ու կերաւ։

Տիտոս մէկիկ մէկիկ գրաւեց ու քանդեց քաղաքին բոլոր պարիսպներն ու ամրութիւնները, և հասաւ մինչեւ միջնաբերդը, ուր կը գտնուէր տաճարը։ Շատ չանցած քաղաքը ինկաւ իր ձեռքը, թէև մեծ մասամբ այրած ու կործանած։ Հռոմայեցի զինուոր մը բռնկցուց նաև տաճարը, և Տիտոս ի զուր աշխատեցաւ ազատել հոյակապ շէնքը, որ ամբողջովին այրեցաւ, և այս կերպով իրականացաւ Յիսուսի մարգարէութիւնը։

Երուսաղէմի պաշարումը տեւեց եօթը ամիս։ Հռոմայեցիք մէկ միլիոն հարիւր հազար Հրեայ կոտորեցին այս պաշարման միջոցին, և եօթանասուն և ինը հազար Հրեայ գերի տարին։

Հրեաները այնուհետեւ դադրեցան գոյութիւն ունենալէ իբրեւ ուրոյն ազգ մը, և ցրուեցան աշխարհի չորս կողմը։



Ե.

# ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑԻ

## Ի՞ՆՉ Է ԵԿԵՂԵՑԻՆ

Եկեղեցի բառը, իր բուն իմաստով, կը նշանակէ ժողով կամ հաւաքոյթ հաւատացեալներու։

Երկրորդական իմաստով է որ եկեղեցի բառով կը հասկընանք հաւատացեալներու հաւաքումին համար շինուած նուիրական շէնքը։

Հետեւաբար երբ կ՚ըսենք Հայ. Ս. Եկեղեցի, կը հասկնանք ամբողջութիւնը բոլոր այն Հայերուն, որոնք Ս. Աւետարանի և Առաքեալներու և անոնց հետեւողութեամբ մեր երանաշնորհ Նախնիքներու կողմէ աւանդուած Քրիստոնէական Ս. Կրօնքին կը հաւատան, և անոր դաւանութիւնները, պատուէրները կ՚ընդունին։

Եկեղեցիին գլուխը Քրիստոս է. ան միացման կապն է Աստուծոյ հետ, և միջոցը բոլոր հաւատացեալներու եղբայրութեան։

Հաւատացեալները իրենց իբրեւ հաւաքման և Աստուծոյ պաշտամունքին և փառաբանութեան յատկացուած տեղեր՝ շինեցին ու կը շինեն Տաճարներ, որոնք Եկեղեցի կոչուեցան։

Այդ եկեղեցիներուն մէջ ամէն օր օրհնութիւն և փառաբանութիւն կ՚ուղղուի Աստուծոյ, կը կարդացուին Աստուածաշունչէն (Հին և Նոր Կտակարան) պատշաճ հատուածներ, կ՚երգուին Սաղմոսներ, Շարականներ, Տաղեր, Մեղեդիներ։

Եկեղեցիներու մէջ կը կարդացուին աղօթքներ, որով քահանան՝ ժողովուրդին աղաչանքները, խնդրուածքները և փառաբանութիւնները կը մատուցանէ մեր երկնաւոր Հօր։

Եկեղեցիներու մէջ կը մատուցուի Ս. Պատարագ, որ յիշատակութիւնն է Յիսուս Քրիստոսի՝ Տէրունական ընթրիքի առեն հաստատած Հաղորդութեան Ս. Խորհուրդին։

Ուստի բոլոր հայ հաւատացեալները, մասնաւորապէս հայ տղաք, գոնէ շաբաթը անգամ մը, կիրակի օրերը, պէտք է ներկայ գտնուին եկեղեցի, և երկիւղով և հաւատքով մասնակցին կատարուած արարողութեանց։

Եկեղեցիին նիւթական շէնքն ալ, ուրեմն, նուիրական, սուրբ տեղ մըն է, Աստուծոյ Տունն է։ Հայ տղաք պէտք է միշտ մտքերնին պահեն անիկա, և եկեղեցիին մէջ պարկեշտ, խելօք, քաղաքավար կենան, և զգուշանան անվայել ընթացքներէ, բարձր ձայնով խօսելէ, աղմուկ հանելէ, գիտնալով որ եթէ պատկառանքով չկենան եկեղեցիին մէջ, Աստուծոյ առջեւ մեծ մեղք կը գործեն, և մարդոց ալ կ'արհամարհուին՝ իբրեւ անքաղաքավար։

## ՄԵՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉՆԵՐԸ

Հայերը առաջին անգամ քրիստոնէական լոյսով լուսաւորողները եղան Ս. ԹԱԴԷՈՍ և Ս. ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Առաքեալները։ Անոնք Յիսուս Քրիստոսի երկինք համբառնալէն քիչ տարիներ ետքը Հայոց մէջ եկան քրիստոնէութիւնը քարոզելու։ Թադէոս նախ գնաց Կապադովկիոյ Կեսարիա քաղաքը, և անկէ Հայերու բնագաւառը գալով քարոզեց, և նահատակուեցաւ։

Ս. Բարթողիմէոս առաքեալ սկիզբէն Նաթանայել կը կոչուէր, և առաջին անգամ վկայեց Քրիստոսի աստուածութեան։ Քարոզեց զանազան ազգերու, նաև Հայոց, և նոյնպէս նահատակուեցաւ։ Իր գերեզմանին վրայ շինուեցաւ նշանաւոր վանք մը՝ Ս. Բարթողիմէոսի վանքը :

Թովմաս առաքեալի համար ալ կ'աւանդուի թէ Հայոց մէջ քարոզութիւններ ըրած է։

Առաքեալներու այս քարոզութիւններուն հետեւան-



քով մեծամեծներ և շատ մարդիկ Քրիստոնեայ եղան։ Բայց ի վերջոյ երկրին պետերուն կողմէ հալածանք ելաւ Քրիստոնեաներուն դէմ։ Շատեր նահատակուեցան. անոնց առաջինը եղաւ Ս. Սանդուխտ կոյսը՝ որ Քրիստոնէութիւնը չուրանալուն համար նահատակուեցաւ, իր հօրը՝ Սանատրուկի հրամանով։

Հայոց մէջ Քրիստոնէութիւնը երեք դար շարունակ իր հետեւողները ունեցաւ, որոնք գաղտնապէս կը պաշտէին ճշմարիտ Աստուածը։



Ս. Գ. Լուսաւորիչ

Սակայն տեւեց մինչեւ 302 թուականը, երբ Անակի որդին՝ Ս. ԳՐԻԳՈՐ, որ Կեսարիա քաղաքին մէջ սորված էր քրիստոնէական ճշմարիտ կրօնքը, եկաւ քարոզեց Հայոց մէջ, և սոսկալի չարչարանքներ կրելէ ետքը, հրաշալի պարագաներու մէջ Քրիստոնեայ ըրաւ ու մկրտեց Տրդատը և ուրիշ մեծամեծները ու բոլոր ժողովուրդը, և զանոնք կռապաշտութենէ դարձուց քրիստոնէութեան, որ պաշտօնական կրօնք եղաւ ամբողջ երկրին մէջ։

Ս. Գրիգոր յետոյ Կեսարիա երթալով Եպիսկոպոսական աստիճան առաւ, և եկաւ շինեց Ս. Էջմիածնի Տաճարը, որ Հայ ժողովուրդի Մայր Եկեղեցին է և Աթոռ Հայրապետութեան Ամենայն Հայոց։

Ս. Գրիգոր Կաթողիկոս եղաւ Հայոց, և կոչուեցաւ Հայոց Երկրորդ Լուսաւորիչը, Հոգիներու Լուսաւորիչը :

## ՀԱՅՈՑ ՆՇԱՆԱՒՈՐ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐԸ

Ս. Գրիգորի յաջորդեցին իբրեւ Հայ Եկեղեցւոյ Հայրապետ կամ Կաթողիկոս, շատ մը բարեպաշտ և խստակրօն հոգեւորականներ։

Ս. ԱՐԻՍՏԱԿԷՍ և Ս. ՎՐԹԱՆԷՍ, Ս. Գրիգոր Լուսաւորիչի զաւակները, իրենց հօրը մաքուր կեանքին հետեւեցան, և կրթեցին ժողովուրդը քրիստոնէական հաւատքի մէջ։

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ, Ս. Գրիգոր Լուսաւորչի ցեղէն, Հայոց ամէնէն նշանաւոր մէկ հայրապետը եղաւ։ Հաստատեց աղքատանոցներ, որբանոցներ, հիւանդանոցներ, վանքեր, դպրոցներ, և ուրիշ բարեխնամական հիմնարկութիւններ։ Արգիլեց մինչեւ իր ժամանակը տակաւին մնացած կռապաշտական սովորութիւնները։



Մեծն Ներսէս

Մեծն Ներսէս քրիստոնէական սէրը և գթութիւնը տարածեց ժողովուրդին մէջ, և կոչուեցաւ Սիրտերու Լուսաւորիչը

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ. — Ս. Սահակ Պարթեւ, Մեծն Ներսէսի որդին, ուրիշ նշանաւոր և սուրբ Հայրապետ մը եղաւ Հայ Եկեղեցիին։ Իրեն գործակից ունեցաւ Ս. Մեսրոպ գիտնական վարդապետը, որ մինչեւ այն ատեն Հայերու սեփական գիր չունենալուն հետեւանքով դժուարութիւն կը կրէր Ասորերէն և Յունարէն բնագրէն թարգմանելով ժողովուրդին հասկցնելու Ս. Գիրքի ճշմարտութիւնները։ Ուստի մտածեց սեփական գիր գտնել. շատ աշխատեցաւ, շատ տեղեր պտտեցաւ, աղօթքի դիմեց, և վերջապէս հրաշալի տեսիլքով մը, որ «ոչ քունի մէջ երազ էր և ոչ արթնութեան մէջ տեսիլ», գտաւ Հայոց գիրերը։ Ս. Սահակ մեծ քաջալերող մը և օժանդակող մը եղաւ Ս. Մեսրոպի ջանքերուն։

Գիրի գիւտէն ետքը Ս. Սահակ և Ս. Մեսրոպ սկսան թարգմանել Աստուածաշունչը և ուրիշ եկեղեցական գիրքեր, որով Հայ Եկեղեցիներու մէջ իրենց շնորհիւ առաջին անգամ





Ս. Սահակ



Ս. Մեսրոպ

սկսաւ հայերէն կարդացուիլ Ս. Գիրքը։ Ս. Մեսրոպ ձեռնարկեց բարեկարգել եկեղեցիները, դպրոցներ բանալ։ Ուշիմ պատանիներ ղրկուեցան մտաւորական կեդրոններ՝ Բիւզանդիոն, Եդեսիա, Աղեքսանդրիա, Աթէնք, ևլն.։ Միւս կողմէ Ս. Սահակ կը զբաղէր թարգմանութիւններ ընելով։

Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ և իրենց ժամանակի գործակիցները կոչուեցան Երեց Թարգմանիչներ. իսկ անոնք որ պատանեկան հասակի մէջ օտար ուսումնական կեդրոններ երթալէ ետք վերադարձան՝ կոչուած են Կրտսեր Թարգմանիչներ։ Անոնք բոլորն ալ՝ իբրեւ հոգեւորական և իբրեւ մատենագիր՝ մեծ ծառայութիւններ ըրած են Հայ Եկեղեցիին և ժողովուրդին։

Ս. Սահակ և Ս. Մեսրոպ գրի գիւտով առաջ բերին կրթական բեղուն շարժում մը, և իրաւամբ հանդիսացան Հայոց Մտքի Լուսաւորիչները։

# ՈՒՐԻՇ ՆՇԱՆԱՒՈՐ ԴԷՄՔԵՐ ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

Վերոյիշեալներէն զատ, Հայ Եկեղեցւոյ ծառայող նշանաւոր հոգեւորականներ եղած են հետեւեալները.

ԳԻՒՏ և ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ կաթողիկոսները (Ե. Դար) մեծ դեր ունեցած են ժամագիրքի կարգաւորութեան մէջ։ Յովհան Մանդակունի կրօն. ուրիշ նշանաւոր գիրքեր ալ գրած է։

ՆԵՐՍԷՍ ՇԻՆՈՂ, ՍԱՀԱԿ ՁՈՐԱՓՈՐԵՑԻ (Է. Դար), և ՅՈՎՀԱՆ ՕՁՆԵՑԻ (Ը. Դար) կաթողիկոսները ժողովրդասէր հովիւներ եղած և հոգեւոր գիրքեր ու շարականներ գրած են։



Գրիգոր Նարեկացի

ԽՈՍՐՈՎ ԵՊՍ. ԱՆՁԵՒԱՑԻ (Ժ. Դար) ժամագիրքի մեկնութիւն մը գրած է, լեցուն բարեպաշտական օգտակար խրատներով։ Իր զաւակը՝ ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴ. ՆԱՐԵԿԱՑԻ, ճգնողական կեանքի նուիրուած սուրբ մարդ մը, գրած է Նարեկ անունով ծանօթ աննման աղօթագիրքը։

Ս. ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ (ԺԲ. Դար) հոգեւոր ուսմամբ և բանաստեղծական ներշնչումով լեցուն մեծ կաթողիկոս մը եղած է։ Հայ. Եկեղեցիին դաւանութիւնները և օրէնքները ճանչցնելու համար գրած է Ընդհանրական թուղթեր, ճոխացուցած է ժամագիրքն ու Շարականը շատ մը հոգեւոր երգերով, ինչպէս Առաւօտ Լուսոյ, Աշխարհ Ամենայն, Այսօր Անճառ, Արարչական, Նորաստեղծեալ, ևլն.։ Գրած է նաև ընտիր շարականներ, և ուրիշ գիրքեր։ Անոր կը պարտինք Հաւատով խոստովանիմ քսանեչորս տուն աղօթքը, զոր ամէն հայ քրիստոնեայ պէտք է գոց գիտնայ և օրը գոնէ մէկ անգամ ընէ այդ աղօթքը։



ԺԴ. Դարուն մէջ նշանաւոր եղած են ՅՈՎՀԱՆ ՈՐՈՏՆԵՑԻ և ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՒԱՑԻ, որոնք իրենց ժամանակին հզօրապէս պաշտպանած են Հայ Եկեղեցիի ուղղափառ վարդապետութիւնները։ ԺԸ. Դարու սկիզբները նշանաւոր եղան ԳՐԻԳՈՐ ՇՂԹԱՅԱԿԻՐ, որ Երուսաղէմի Պատրիարք կ'ըլլայ և վիզէն շղթայ մը անցուցած կը մնայ ութ տարի, յայտարարելով որ պիտի չհանէ զայն վիզէն մինչև որ Երուսաղէմի վանքը չազատուի պարտքի շղթայէն։ Եւ կը յաջողի այդ նպատակին մէջ։ Նշանաւոր է նաև ԿՈԼՈՏ ՅՈՎՀԱՆՆԷՍ, որ նոյն շրջանին Կ. Պոլսոյ Պատրիարք կ'ըլլայ, և կառուցանել կուտայ քանի մը եկեղեցիներ, կը հաստատէ Դպրանոց և Ընծայարան, ուսեալ հոգեւորականներ հասցնելու համար։

ԺԹ. Դարուն մէջ իբրև ժողովրդասէր և գրագէտ հոգեւորականներ նշանաւոր են եղած ՆԵՐՍԷՍ Ե. ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ԳԷՈՐԳ Դ. և ՄԿՐՏԻՉ Ա. կաթողիկոսները, և Պոլսոյ Պատրիարք ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ։ Ներսէս Ե. Աշտարակեցի հիմնեց Թիֆլիզի Ներսիսեան դպրոցը, իսկ Գէորգ Դ.՝ Էջմիածնի Գէորգեան ճեմարանը, որոնք մեծ արդիւնք տուին մտաւոր և հոգեւոր կրթութեան։ Մկրտիչ Ա. կաթողիկոս և Ներսէս Պատրիարք Վարժապետեան գրած են հոգեշունչ գիրքեր։ Ներսէս Պատրիարք հիմնած է Ղալաթիոյ Կեդրոնական Վարժարանը։ ՄԱՂԱՔԻԱ ԱՐՔԵՊ. ՕՐՄԱՆԵԱՆ 1889ին հիմնեց Արմաշի Դպրեվանքը, ուսեալ հոգեւորականներ հասցնելու համար, և նոյն Դըպրեվանքին տեսուչ եղաւ մինչև 1896, երբ Պատրիարք ընտրուեցաւ Կ. Պոլսոյ։ Իբրև Դպրեվանքին տեսուչ իր գործը շարունակեց մինչև 1904, Ամեն. Տ. ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊ. ԴՈՒՐԵԱՆ, որ 1921ին Պատրիարք ընտրուեցաւ Ս. Երուսաղէմի։ Վերջին երկուքն ալ մեծ և հեղինակաւոր դէմքեր եղած են Հայ. Եկեղեցականութեան մէջ։

# ՀԱՅ. ԵԿԵՂԵՑՒՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

*Եկեղեցւոյ պաշտօնեաներու զանազան աստիճանի դասակարգութիւնը կը կոչուի* Նուիրապետութիւն։

*Քրիստոս հաստատեց Եկեղեցւոյ նուիրապետութիւնը, ընտրելով տասներկու Առաքեալները, որոնք սկիզբէն իրենք կը կատարէին ամէն պարտականութիւն։ Յետոյ, երբ հաւատացեալները շատցան և իրենք չկրցան հասնիլ ամէնուն, Եկեղեցւոյ կառավարութիւնը յանձնեցին իրենց կողմէ ընտրուած անձերու, որ ձեռնադրուելով կոչուեցան* սարկաւագ, երէց, եպիսկոպոս։ (*Եպիսկոպոս, յունարէն բառ է և կը նշանակէ* տեսուչ)։

*Հայ. Եկեղեցւոյ նուիրապետութիւնը ունի եօթը աստիճաններ։ Վարէն վեր բարձրանալով՝ առաջին չորս աստիճանները ունեցողը կը կոչուի* Դպիր, *որ կը կարդայ Մարգարէներուն և Առաքեալներուն Գիրքը, կ'երգէ Շարական, Տաղ, Մեղեդի։*

*Հինգերորդ աստիճանը ունեցողը կ'ըլլայ* կիսասարկաւագ, *որ օգնականն է սարկաւագին. իր պաշտօնն է զգեստաւորել ժամարար քահանան,* պարապ Սկիհը խորհրդանոց տանիլ *և* սպասաւորել *Ս. Պատարագին։*

*Վեցերորդ աստիճանը ստացողը կ'ըլլայ* սարկաւագ, *որուն պաշտօնն է սպասաւորել Ս. Պատարագին, Ս. Աւետարան կարդալ,* Հաւատամքը *ըսել, և Ս. Խորհուրդը* Ընծայարանէն (*Ս. Սեղանին դրուած խորշը*) *«վերաբերում»ով մատուցանել ժամարար քահանային։*

*Եօթներորդ աստիճանը ունեցողը կը կոչուի* երէց *կամ* քահանայ։ *Քահանայութիւնը լրումն է եկեղեցական աստիճաններուն։ Քահանան իրաւասութիւն ունի Ս. Պատարագ մատուցանելու, և Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները մատակարարելու (բաց ի ձեռնադրութենէն որ Եպիսկոպոսներուն իրաւունքն է)։ Քահանայացուն մարմնական պակասութիւն ունենալու չէ, և պէտք է տէր ըլլայ ուսումի, և կոչումի։ Քահանան ժողովուրդէն կ'ընտրուի, ինչպէս միւս*



*բոլոր եկեղեցական պաշտօնեաները։ Քահանան կրնայ ըլլալ ամուսնացեալ կամ կուսակրօն։ Ամուսնացեալ քահանան ընտանիքներու մէջ ազատ մուտք ունի իբրև տանէրէց կամ* խոստովանահայր, *և անոնց հոգևոր պէտքերը կը մատակարարէ։*

Կուսակրօն քահանան *կը կոչուի* վարդապետ, *որ միայն քարոզելու իշխանութեամբ քահանայէն կը տարբերի. գլուխը* վեղար *կը դնէ, որ նշան է կրօնաւորութեան և ամբիծ կեանքի։* Ծայրագոյն վարդապետ *կը կոչուին անոնք, որ մասնաւոր արարողութեամբ ստացած են այդ իշխանութիւնը։ Վարդապետները կը կրեն* օձագլուխ գաւազան, *իբրև օրինակ Մովսէսի գաւազանին որ օձ դարձաւ։*

Եպիսկոպոսը *հոգևոր տեսուչն է եկեղեցական վիճակի մը, և կ'ըլլայ անոր* Առաջնորդը։ *Իր պաշտօնն է հսկել իր հօտին հոգևոր գործերուն։ Կը ձեռնադրէ վարդապետ, քահանայ, սարկաւագ ևլն. եկեղց. պաշտօնեաներ, կ'օծէ եկեղեցիի պատկերներ և անօթներ։ Եպիսկոպոսը կ'ընտրուի ժողովուրդէն և կը ներկայացուի Ընդհանրական Հայրապետին, որ ընտրուածը կը ձեռնադրէ Ս. Էջմիածնի Մայր Տաճարին մէջ, անոր տալով հովուական գաւազան և ճկոյթ մատը դնելով* Եպիսկոպոսական մատանի։

Արքեպիսկոպոսութիւնը *տիտղոս մըն է զոր Հայրապետը կ'ընծայէ մասնաւոր կոնդակով։*

*Արքեպիսկոպոսներ են Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ* Պատրիարքները։

Հայրապետ *կամ* Ընդհանրական Կաթողիկոսն *է Հայ Եկեղեցւոյ ծայրագոյն պետը. անոր անունը կը յիշատակուի Հայոց բոլոր եկեղեցիներուն մէջ. անոր կը հնազանդին բոլոր հայ հոգևորականները, ան կը կառավարէ Հայ. Ս. Եկեղեցին, կը կարգադրէ հոգևոր գործեր, կը ձեռնադրէ Եպիսկոպոսներ, կ'օրհնէ Ս. Միւռոնը, կը վարձատրէ կամ կը պատժէ հոգևորականները, կը գումարէ Եկեղց. Ընդհ. ժողով, կը գրկէ կանոնական թուղթեր, կոնդակներ ևլն.։*

Հայոց Հայրապետը կ'ընտրուի ամբողջ հայ ժողովուրդին կողմէ։ Ս. Էջմիածնի տաճարին մէջ՝ աստուածադիր օրէնքները, Հայ. Եկեղեցւոյ դաւանութիւնը և հայրապետական կանոնները անխախտ պահել ուխտելէ ետքը՝ կ'օծուի տասներկու եպիսկոպոսներու ձեռքով։ Ասոնք Ս. Միւռոնով կ'օծեն Հայրապետին գագաթը, ու վրան կը ձգեն հայրապետական քօղ, որ Ս. Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ կը գործածուի՝ իբրև նշան Հայրապետութեան։ Իր աթոռն է Ս. Էջմիածին։ Ան կը կոչուի նաև Ծայրագոյն Պատրիարք, Քահանայապետ, եւ Կաթողիկոս ամենայն Հայոց։

Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետէն զատ, կայ նաև Սիսի Կաթողիկոսը, որ իր թեմի շրջանակին մէջ ունի հայրապետական ամէն իրաւասութիւն, բայց ենթակայ է Ս. Էջմիածնի Ընդհանրական Հայրապետին իշխանութեան։

## ԵԿԵՂԵՑՒՈՅ Ս. ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐԸ

Եկեղեցին ունի եօթը խորհուրդներ, որով հաւատացեալներուն կը բաշխուին աստուածային շնորհքներ։

1. ՄԿՐՏՈՒԹԻՒՆ. — Քահանան Մկրտութեան խորհուրդը կը կատարէ, Աւազանին՝ Խաչով և Աւետարանով օրհնուած և Ս. Միւռոնով սրբուած ջուրին մէջ երեք անգամ մխրճելով երեխան՝ Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որով ան կը սրբուի սկզբնական մեղքերէն, և հոգեւոր կեանքի մէջ կը վերածնի Ս. Հոգիով, և այդ ատեն է որ մանուկին անունը կը դրուի։

2. ԴՐՈՇՄ. — Մկրտութենէ ետքը, քահանան մկրտուածին բոլոր զգայարանքները կ'օծէ Ս. Միւռոնով որով անիկա կը ստանայ Ս. Հոգիին շնորհքը, ինչպէս որ Յիսուսի վրայ, — Յորդանանի մէջ մկրտուելէն ետքը — Ս. Հոգին իջաւ աղաւնիի կերպարանքով։

3. ԱՊԱՇԽԱՐՈՒԹԻՒՆ. — Քրիստոնեան մկրտուելէ ետքը գիտակցաբար գործած մեղքերը կը խոստովանի քա-



հանային, և զղջում կը յայտնէ ու թողութիւն կը խնդրէ մեղայ ըսելով։ Քահանան խրատներ կուտայ, աղօթք և ապաշխարանք կը յանձնարարէ, և արձակում կուտայ։ Խոստովանողը պէտք է անկեղծ ըլլայ իր զղջումին մէջ, որպէսզի Աստուծոյ թողութեանը արժանանայ։

4. Ս. Հաղորդութիւն. — Այս խորհուրդը հաստատեց մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, Տէրունական Ընթրիքին ատենը, (տես էջ 68—69)։ Ս. Պատարագը որ կը մատուցուի քահանային կողմէ, կատարումն է Յիսուսի պատուէրին, «ասիկա ըրէք իմ յիշատակիս համար»։ Քահանան յատկապէս անխմոր հացէ պատրաստուած նշխարքը կը թաթխէ անապակ գինիին մէջ, որ կը փոխակերպուին Յիսուսի Մարմինին և Արիւնին, ու զղջումով և ապաշխարութեամբ մաքրուած հաւատացեալները անով հաղորդուելով, կը ստանան թողութիւն իրենց մեղքերուն։ «Հաղորդութիւն» կը նշանակէ մասնակցութիւն (Յիսուսի մարմինին և արիւնին)։

5. Պսակ կամ ամուսնութիւն.— Ամուսնութիւնը նուիրագործած է մեր Տէրը Աւետարանին մէջ։ Պսակը ամուսնացողներուն տրուած օրհնութիւնն է։ Քահանան՝ փեսացուն և հարսնցուն խոստովանցնելով կը հարցնէ թէ հաճա՞յն են այս ամուսնութեան, կը յիշեցնէ Ս. Պսակին նուիրականութիւնը, և կը յորդորէ մաքուր սիրով ապրիլ իրարու հետ։ Յետոյ կ'օրհնէ անոնց միութիւնը՝ Շարականի, Ս. Գիրքի և Ս. Աւետարանի ընթերցումներով և աղօթքով։ Պսակի ատեն փեսին և հարսին գլուխը նարօտ կը կապէ, և անոնց կուտայ օրհնեալ գինիէն որ յիշատակ է Գալիլիոյ Կանա քաղաքի հարսնիքին մէջ Յիսուսի ջուրը գինիի փոխելու հրաշքին։

6. Կարգ կամ ձեռնադրութիւն. — Այս խորհուրդը կը կատարէ Եպիսկոպոսը, ընծայացուին տալով դպրութեան, սարկաւագութեան և քահանայութեան աստիճաններ։ Դպրութեան և սարկաւագութեան աստիճանները ձեռնադրութեամբ կը տրուին, իսկ քահանայութեան աստիճանը որ կարգին լրումն է, կը տրուի նաև Ս. Միւռոնի օծումով, որով

Քրիստոսի Յարութեան ի պատիւ, շաբթուան միաշաբաթ օրը առաքելական դարուն Կիրակի = Տէրունի անունը առաւ, և փոխանակ Հրեաներու շաբաթին, ընդհանուր քրիստոնէութեան համար հանգիստի օր հռչակուեցաւ։

Զատիկին յաջորդող յիսուն օրերը Յիսուսի յարութեան նուիրուած են, և Յարութեան չարականներ կ'երգուին։ Այդ յիսուն օրերը կը կոչուին Յինունք։

Գ. ՎԱՐԴԱՎԱՌ. — Երրորդ տաղաւարն է Վարդավառը, յիշատակ Յիսուսի Պայծառակերպութեան՝ Թաբոր լեռան վրայ։ (Տես էջ 47-48)։ Այդ տօնը Վարդավառ կոչուած է մեր մէջ, զուգորդուելով Հայոց նախաքրիստոնէական կրօնքի նշանաւոր մէկ տօնին, որ կը կատարուէր տարւոյն նոյն եղանակին։ Հայոց հեթանոսութեան ատեն սովորութիւն էր Վարդավառին ջուր սրսկել և աղաւնի թռցնել։ Քրիստոնէութեան ատեն ջուր սրսկելը նկատուեցաւ յիշատակ Ջրհեղեղի, և աղաւնի թռցնելը՝ Նոյի տապանէն դուրս աղաւնի թռցնելուն։ (Տես Հին Ուխտի Պատմ. էջ 16)

Վարդավառի տօնը երեք օր կը տեւէ։

Դ. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — Աստուածածին Ս. Կոյս՝ Յիսուսի համբառնալէն ետքը մինչև իր մահը ապրեցաւ Յովհաննէս Աւետարանիչին մօտ, ինչպէս յայտարարած էր Յիսուս Խաչին վրայէն (Տես էջ 81)։ Ս. Կոյս Մարիամ բարեպաշտութեամբ վարեց իր կեանքը, և իբր 60 տարեկանին աւանդեց իր մաքուր հոգին։ Եկեղեցական հաստատուն աւանդութիւն է թէ Ս. Կոյսին մարմինը գերեզման դրուելէ ետքը Քրիստոս եկաւ և երկինք վերափոխեց իր մայրը։ Ահա՛ ասոր յիշատակն է որ կը տօնէ Հայ. Եկեղեցին, ամէն տարի, Օգոստ. 15ին ամէնէն մօտ Կիրակի օրը, և նոյն օրը կը կոչուի Վերափոխումն Ս. Աստուածածնի, կամ պարզապէս Աստուածածին։

Աստուածածնի տաղաւարին օրը Հայ. Եկեղեցիներու մէջ կ'օրհնուի խաղողը. աւանդապահ Հայ-Քրիստոնեաներ այդ օրէն առաջ խաղող չեն ուտեր։

Տաք կլիմաներու մէջ երբեմն խաղողօրհնէքը կը կատարուի Վարդավառին։

Վերափոխման տօնը ինը օր կը տեւէ։



Ե. ԽԱՉՎԵՐԱՑ. — Քրիստոսի 614 թուականին Պարսիկները մեծ արշաւանք մը ընելով գերի տարած էին Խաչը, որ Երուսաղէմ կը գտնուէր։ Բայց տասնևհինգ տարի ետքը Բիւզանդիոնի Հերակլ կայսրը պատերազմելով ետ առաւ խաչափայտը, որ մեծ հանդէսով Երուսաղէմ տարուեցաւ 629 Սեպտեմբեր 14ին։ Ասոր յիշատակն է որ Հայ. Եկեղեցին կը տօնէ մեծահանդէս Սեպտ. 14ի ամէնէն մօտ Կիրակին, և իրիկուան ժամերգութեան ատեն ռեհանով (փէսլէյէն) կը զարդարուի Խաչը, և մեծ թափորով կը պտտցուի եկեղեցիին մէջ կամ բակը, խաչի նուիրուած յուզիչ չարականներ երգելով, Աւետարան կարդալով, և խնկարկելով։

Խաչվերացի տօնը եօթը օր կը տեւէ։

* Այս մեծ տօները կը կոչուին Տաղաւար։ Կը կարծուի թէ ինչպէս որ Հին Ուխտի մէջ մեծ տօն մըն էր Տաղաւարահարացը, (Տես Հին Ուխտի, էջ 59), նոյնն են քրիստոնէութեան մէջ այս մեծ տօները, որ քանի մը օր կը տեւեն, և այդ ժամանակ վանքերու մօտ, դաշտերու մէջ տաղաւարներ կը հաստատէին, և տօնավաճառներու նման հանդէսներ կը կազմակերպուէին։ Անկէ առաջ եկած է Տաղաւար անունը, որ կը նշանակէ Վրան (չադր)։

## ՄԻՒՍ ՏԷՐՈՒՆԻ ՏՕՆԵՐԸ

ՈՒԹՕՐԷՔ կամ Տօն Անուանակոչութեան, կուգայ Ծնունդին ութերորդ օրը (Յունուար 13ին), և այդ օրն ալ Կիրակի կը բռնուի։ Կը կատարուի հանդիսաւոր արարողութիւն և կը կարդացուի Լոյս ի լուսոյ չարականը։

ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ. — Յիսուսի Ծննդեան քառասուներորդ օրը տաճարը ընծայուելուն յիշատակն է, երբ Սիմէոն Ծերունին ընդառաջ եկաւ Յիսուսի, և զայն գիրկը առնելով օրհնեց (Տես էջ 13—14)։ Կը կատարուի միշտ Փետրուար 14ին։

**ԱՒԵՏՈՒՄ**.— Յիշատակն է Գաբրիէլ հրեշտակին Ս. Մարիամ կոյսին աւետիս տալուն թէ որդի մը պիտի ունենայ Ս. Հոգիին շնորհիւ։ (Տես էջ 6-7)։ Կը կատարուի միշտ Ապրիլ 7ին։

**ԾԱՂԿԱԶԱՐԴ**.— Հայ. Եկեղեցին այս անունով կը տօնէ Յիսուսի փառքով Երուսաղէմ մտնելուն և ովսաննաներով դիմաւորուելու յիշատակը (Տես էջ 64-65), որ կը կատարուի Զատիկին նախընթաց կիրակին։

**ԴՌՆԲԱՑԷՔ**.— Ծաղկազարդի իրիկունը Հայ. Եկեղեցին հանդիսաւորապէս կը կատարէ Դռնբացէք, հաւատացեալներուն յիշեցնելու համար թէ Յիսուս երկրորդ անգամ պիտի գայ փառքով, և մենք պէտք է պատրաստ գտնուինք անոր՝ բարի գործերով։ Այդ առթիւ ապաշխարութեան սրտառուչ Շարականներ կ'երգուին, և Եպիսկոպոսը կամ Աւագերէցը՝ գոց վարագոյրին առջեւ կ'երգէ աղերսելով. «Բա՛ց մեզ, Տէ՛ր, զդուռն ողորմութեան, որ ողբալով կարդամք առ քեզ»։

**Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ՏՕՆ**.— Ծաղկազարդէն մինչեւ Զատիկ եղող շաբաթը կը կոչուի Աւագ Շաբաթ, որովհետեւ այդ օրերուն կը կատարուին Յիսուսի Մատնութեան, Չարչարանքի, Խաչելութեան, Թաղման յիշատակները։ Աւագ Հինգշաբթի օրը ծանր կիրակի է, որովհետեւ այդ օր առաւօտեան ժամերգութեան ատեն կը կատարուի Ապաշխարութեան խորհուրդը։ Կէս օրուան Ս. Պատարագով հանդիսաւորապէս կը յիշատակուի Տէրունական Ընթրիքը, որով մեր Փրկիչը հաստատեց Ս. Հաղորդութեան խորհուրդը։ (Տես երես 68-69)։

**ՈՏՆԼՈՒԱՅ**.— Աւագ Հինգշաբթի իրիկուան ժամերգութեան ատեն կը կատարուի Ոտնլուայի յիշատակը, որով մեր Տէրը խոնարհութեան օրինակի դաս մը տուաւ մեզի։ (Տես էջ 67)։ Այս առթիւ կ'երգուին Սիրտ իմ սասանի ևլն. յուզիչ տաղերը։

**ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆ ԵՒ ԹԱՂՈՒՄ**.— Աւագ Ուրբաթ գիշերային ժամերգութեան միջոցին կը կատարուի Յիսուսի Մատնութեան և Չարչարանաց յիշատակը և կը կարդացուին



Աւետարանները։ Կ'երգուին Այսօր անճառ, Տարածեալ, Արծաթսիրութեամբն մոլեալ Յուդա ևլն. սրտառուչ Շարականները, և աւարտելուն՝ Խաչի քո Քրիստոս Շարականը։ Ժողովուրդին մէջ այդ ժամերգութիւնը կը կոչուի Խաւարման կամ Լացի գիշեր։

Աւագ Ուրբաթ ցորեկուան ժամերգութեան կը կա- կատարուի Յիսուսի Խաչելութեան յիշատակը՝ սաղմոսերգութիւններով և Գիրք և Աւետարան կարդացուելով։

Աւագ Ուրբաթ իրիկուան ժամերգութեան ատեն կը կատարուի Յիսուսի Թաղման նախատօնակը՝ մեծ թափօրով։

Աւագ Շաբաթ առաւօտուն կը կատարուի Յիսուսի Թաղման կարգը, կարդացուելով Դասեա Տէր զայնոսիկ սաղմոսերգութիւնը, որ «Մանու գառնա» կոչուած է, նաև Յիսուսի թաղման նուիրուած «Պարգեւատուն ամենեցուն» և «Զքեզ օրհնեմք» Շարականները։

Նախատօնակ Յարութեան.— Աւագ Շաբաթ իրիկուն Ճրագալոյց կամ Խթում կը կոչուի, և հանդիսաւորապէս կը կատարուի նախատօնակը Յիսուսի հրաշափառ Յարութեան։

**ՀԱՄԲԱՐՁՈՒՄ**.— Յիսուսի Յարութեան քառասուներորդ օրը, որ միշտ Հինգշաբթի կ'իյնայ, կը տօնուի մեր Փրկչին Համբարձման յիշատակը (Տես երես 92—93)։ Այդ օրը կը կոչուի նաև Վիճակ՝ ժողովրդեան մէջ։

**ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ**.— Զատկի յիսուներորդ օրը և Համբարձումէն ետք տասներորդ օրը, կիրակի, կը կատարուի Հոգեգալստեան կամ Պենտեկոստէի տօնը։ Այդ օրն է որ կը հիմնուի Քրիստոնէական Եկեղեցին, և առաքեալները Ս. Հոգիով լեցուած (Տես երես 94) կը սկսին քարոզել Ս. Աւետարանը։ Հոգեգալստեան յիշատակին օրը, Պատարագի միջոցին կը կարդացուին Ամենասուրբ Երրորդութեան երեք անձերուն (Հայր, Որդի և Ս. Հոգի) ուղղուած աղօթքներ, և եօթը օր կ'երգուին Շարականներ՝ Ս. Հոգիին] գալստեան նուիրուած։

**Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ՄԻՒՍ ՏՕՆԵՐԸ**.— Ս. Աստուածածնի Վերափոխման տօնէն զատ, կը կատարուին նաև

*Ս. Կոյսին նուիրուած ուրիշ տօներ։* — Յղութիւն Ս. Աստուածածնի (*Դեկտ.* 9), Ծնունդ Ս. Աստուածածնի (*Սեպտ.* 8), Երից ամաց Ընծայումն Ս. Աստուածածնի (*Նոյ.* 21)։ *Այդ օրերը* Կիրակի *կը պահուին (հանգիստի օր)։ Կը տօնուին նաև Ս. Աստուածածնի* Գիւտ Տփոյ *և* Գիւտ Գօտւոյ *տօները որոնք Կիրակի օրեր կուգան։*

*ԽԱՉԻ ՄԻԻՍ ՏՕՆԵՐԸ.* — *Խաչվերացի տօնէն զատ, որ մեծ տաղաւար է, Եկեղեցին կը կատարէ Խաչի ուրիշ երեք տօներ ալ։*

*Ս.* Երեւման Խաչ. — *Երուսաղէմի Կիւրեղ Հայրապետը պաշտօնի անցած առնեն տեղի ունեցաւ* խաչի երեւումը *Երուսաղէմի մէջ. 351 տարւոյ Հոգեգալստեան օրը, առաւօտեան ժամ 3ին, երեւցաւ հսկայ մեծութեամբ լուսաւոր Խաչ մը՝ մէկ ծայրը Գողգոթայի միւս ծայրը Ձիթենեաց լերան վրայ։ Ասիկա շատ ժամեր տեւեց, և տեսնուեցաւ Երուսաղէմի բոլոր բնակիչներուն կողմէ, որոնք զղջումով ու բարեպաշտութեամբ սկսան եկեղեցի դիմել։ Այս դէպքին պատմութիւնը գրած է Կիւրեղ Հայրապետ՝ Կոստանդիանոս Բ.ի ուղղած նամակով մը, որ եկեղեցիներու մէջ կը կարդացուին։ «Երեւման Խաչ»ի տօնը կը կատարենք Յինունքի հինգերորդ Կիրակին։*

Վարագայ Խաչ. — *Ս. Գրիգոր Լուսաւորչին Հայերը Քրիստոնեայ ընելէն առաջ, Տրդատ որ հեթանոս էր, նահատակել տուաւ* Հռիփսիմեան *և* Գայիանեան *Ս. Կոյսերը։ Ասոնցմէ Ս. Հռիփսիմէ կոյսը իրեն քով ունէր Քրիստոսի Խաչափայտէն պզտիկ մաս մը, զոր ի վերջոյ պահած էր Վարագ լեռան վրայ ժայռի մը մէջ։ Այդ Խաչափայտի մասը՝ լուսաւոր տաճարի տեսիլքով յայտնուեցաւ Թոդիկ և Յովել ճգնաւորներուն՝ 653 թուականին, և տեղէն ելլելով եկաւ հանգչեցաւ Վարագայ վանքի եկեղեցւոյն տեղը։ Հոն վանք մը շինուեցաւ որ կոչուեցաւ* Ս. Նշան*։ Այս տօնը, որ միայն Հայ. Եկեղեցիին յատուկ է, կը կատարուի Վերացման Խաչ. տօնէն 15 օր ետքը, Կիրակի օրը։ Կ'երգուի «*Նշանաւ ամենայաղթ Խաչիւդ քո*» ծանօթ Շարականը։*



*ԳԻՒՏ ԽԱՉ.* — *Յիսուսի և միւս երկու աւազակներու խաչերը՝ ըստ սովորութեան մնացած էին տեղւոյն վրայ, Գողգոթա։ Քրիստոնեաներուն նախատինք ըլլալու համար, այդ տեղը իբրեւ աղբանոց գործածուեցաւ, ինչ որ շարունակեց 300 տարի։ Մեծն Կոստանդիանոսի քրիստոնէութիւնն ընդունելէն ետքը, մայրը՝ բարեպաշտ Հեղինէ թագուհին՝ 326 թուականին Երուսաղէմ երթալով, այցելեց այն տեղերը ուր Քրիստոս ծնած, քարոզած, չարչարուած և խաչուած էր, և փափաքեցաւ գտնել այն Խաչը որուն վրայ բարձրացած էր Յիսուս։ Յուդա անուն Հրեայ մը Գողգոթայի տեղը յայտնեց, և թագուհին հրամանով այն տեղը փորուելով, քանի թզաչափ խորութեամբ գտնուեցան երեք խաչեր, բայց կարելի չեղաւ որոշել Քրիստոսի Խաչը՝ աւազակներու խաչերէն։ Այդ պահուն մեռած պատանիի մը դիակը գրին հետզհետէ խաչերուն վրայ, հրաշք սպասելով։ Երբ երրորդին վրայ դրին, մեռելը յարութիւն առաւ, որով ճանչցուեցաւ Քրիստոսի* բուն Խաչը*։ Յուդա Հրեան Քրիստոնէութիւնը ընդունեց և Երուսաղէմի Պատրիարքը՝ Մակար՝ Փրկչի Խաչը կանգնեց բարձր տեղ մը, և ժողովուրդը ծնրադիր երկրպագեց։ Յետոյ Ս. Խաչը զետեղուեցաւ Երուսաղէմի մայր տաճարին մէջ։*

*Հայ. Եկեղեցին կը տօնէ* Գիւտ Խաչը՝ *Խաչվերացի եօթներորդ Կիրակին, որ կրնայ հանդիպիլ Հոկտ. 23էն 29։ Այդ օր կ'երգուին* Ուստի բուրելով, Ապաւինեցաք ի խաչ քո, *ևլն. շարականները։*

*ՏՕՆ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.* — *Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայոց մէջ Ս. Աւետարանը քարոզելու միջոցին տեսիլք մը ունեցաւ։ Տեսաւ լուսեղէն անձ մը, հրաշալի տեսիլք մը երկինքէն վար իջաւ. ձեռքը բռնած ոսկի ուռ (մուրճ) մը։ Վաղարշապատ քաղաքին մէջ լոյսերու մէջ երկինքէն վար իջաւ... ձեռքը բռնած ոսկի ուռ (մուրճ) մը։ Վաղարշապատ քաղաքին մէջտեղը այդ մուրճով գետնին զարկաւ, և անոր ձայնէն թրնդաց անդունդը։ Այդ լուսեղէն մարդը, Հայր Աստուծոյ միածին Որդին էր։ Անոր իջած տեղը շինուեցաւ Հայոց Մայր*



Ս. Էջմիածին.

Եկեղեցին, որ կոչուեցաւ Էջմիածին: Քրիստոսի աւանդած յատակագծով շինուած է Էջմիածինը, ինչպէս նաև մեր միւս եկեղեցիները: Էջմիածնի մէջ հաստատուեցաւ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան աթոռ: Հոն կ'օրհնուի Ս. Միւռոն, և հոն կը ձեռնադրուին ու կ'օծուին Հայոց Կաթողիկոսներն և Եպիսկոպոսները:

Հայ. Եկեղեցին մեծ հանդէսով կը տօնէ Ս. Էջմիածնի տօնը, որ կուգայ միշտ Հոգեգալուստէն ետքը՝ երկրորդ կիրակին:

## ՍՈՒՐԲԵՐՈՒ ՏՕՆԵՐ

Հայ. Եկեղեցին կը տօնէ Քրիստոսի կրօնքը քարոզող, անոր համար նահատակուող Առաքեալներու, Հայրապետներու և ուրիշ սուրբերու տօները արժանաւոր հանդէսներով:

Սուրբերու տօները կը կատարուին շաբթուան մէջ երկուշաբթի, երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերը.



որովհետեւ կիրակի օրը Քրիստոսի Յարութեան նուիրուած տէրունական օր է, և չորեքշաբթի և ուրբաթ օրերը պահք են և Աստուածածնի և Խաչի յիշատակին նուիրուած: Երկուշաբթի, երեքշաբթի և հինգշաբթի սուրբի տօն չի կատարուիր նաև երբ Մեծ Պահք է կամ Տաղաւարներու պահք:

Յիշենք սուրբերու գլխաւոր տօները.—

ԱՒԱԳ ՏՕՆԵՐ.— Աստուածայայտնութեան պահքէն առաջ կը կատարուին չորս տօներ.— 1. Դաւիթ Մարգարէ եւ Յակոբ (Ալփեան) տեառնեղբայր Առաքեալ.— 2. Ստեփաննոս Նախավկայ.— 3. Պօղոս եւ Պետրոս Առաքեալներ. — 4. Որդիք Որոտման՝ Յակոբոս գլխադիր եւ Յովհաննէս Աւետարանիչ (Զեբեդէոսի որդիները):

Այս տօներուն նախորդ կիրակին կը յատարուի Նախատօնակ, և տաւուտուն կ'երգուի Այսօր Դաւիթ:

ԹԱԴԷՈՍ ԵՒ ԲԱՐԹՈՂԻՄԷՈՍ Առաքեալներու, Հայոց առաջին Լուսաւորիչներու տօնը կը կատարուի Նոյ. ի վերջը կամ Դեկտ. ի սկիզբը եկող շաբաթ օր մը:

Հայ. Ս. Եկեղեցին առանձին կը տօնէ նաև Ս. Թադէոս Առաքեալին յիշատակը, Հայոց առաջին վկայուհի Ս. Սանդուխտ կոյսին հետ, Վարդավառին յաջորդող շաբաթ օրը:

Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉԻ յիշատակը երեք անգամ կը տօնէ Հայ. Եկեղեցին.— 1. Անոր խոր Վիրապ մտնելու յիշատակը՝ Մեծ Պահքի հինգերորդ շաբթուան շաբաթ օրը: 2. Խոր Վիրապէն ելլելը՝ Հոգեգալստեան յաջորդ շաբթուան շաբաթ օրը, և 3. Անոր Նշխարաց գիւտը (այսինքն Սեպուհ լերան վրայ անոր մարմինին գտնուիլը), «Ելն ի Վիրապէն»էն երկու շաբաթ վերջը, և այդ շաբաթ օրը կիրակի կը բռնուի:

ՄԵԾՆ ՆԵՐՍԷՍ Հայրապետը կը տօնուի Հոգեգալուստէն ետքը. երրորդ շաբթուան շաբաթ օրը:

Ս. ՍԱՀԱԿ ԵՒ Ս. ՄԵՍՐՈՊ կը տօնուին Մեծն Ներսէսի տօնին յաջորդող հինգշաբթին: Այդ օրը Դպրոցական և Գրական մեծ տօն է: Ս. Սահակ Հայրապետ առանձին կը տօնուի նաև Մեծ Պահոց Բարեկենդանէն ինը օր առաջ, շաբաթ օրը:

Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՔ, Ս. Սահակ ու Ս. Մեսրոպի աշակերտ Եպիսկոպոս և քահանաներ էին, և քրիստոնէութեան համար նահատակուեցան կրակապաշտ Պարսիկներէն. կը տօնուէին Բարեկենդանի շաբթուան, երեքշաբթի օրը:

Ս. ՎԱՐԴԱՆԱՆՔ, 1036 վկաներ, նոյնպէս կռուեցան և նահատակուեցան 451 թուականին Պարսիկներէն: Կը տօնուին Բարեկենդանի Հինգշաբթի օրը, որ Կիրակի կը բռնուի և Ցիշատակ է մեռելոց:

⁂ Հայ. Եկեղեցին կը տօնէ նաև յիշատակը Ցիսուսի 12 Առաքեալներուն, 72 աշակերտներուն, 4 Աւետարանիչներուն, Յովհ. Մկրտիչի, մարգարէներուն և քրիստոնէական Ս. Կրօնքը քարոզող Հայ և օտարազգի Հայրապետներու, վարդապետներու, մարտիրոսներու, կոյսերու ևլն. առանձին օրերու մէջ, որոնք կը ցուցուին Տօնացոյցին, և անկէ առնելով՝ ամէն տարի տպուող Օրացոյցին մէջ.

## ՀԱՅ. Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ

Հայ. Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնը հիմնուած է Ս. Աւետարանի աւանդած վարդապետութեանց վրայ: Իր հիմնական սկզբունքն է Աւետարանի քարոզած սէրը, և կ'աղօթէ բոլոր Եկեղեցիներուն համար, որոնք կ'ընդունին Քրիստոսի Աստուածութիւնը:

325 թուականին Բիւթանիոյ Նիկիա քաղաքին մէջ գումարուած մեծ ժողովին հաւատոյ Հանգանակին մէջ կ'ամփոփուին Եկեղեցւոյ դաւանութեան հիմերը: Անիկա կը կոչուի

### ՆԻԿԻԱԿԱՆ ՀԱՆԳԱՆԱԿ

Հաւատամք ի մի Աստուած, ի Հայրն ամենակալ, յԱրարիչն երկնի և երկրի, երևելեաց և աներևութից:

Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս, յՈրդին Աստուծոյ, ծնեալն յԱստուծոյ Հօրէ միածին, այսինքն յէութենէ Հօր:



Աստուած յԱստուծոյ, լոյս ի լուսոյ, Աստուած ճշմարիտ յԱստուծոյ ճշմարտէ ծնունդ և ոչ արարած:

Նոյն ինքն ի բնութենէ Հօր, որով ամենայն ինչ եղև յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներևոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և վասն մերոյ փրկութեան իջեալ յերկնից, մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ Սրբոյ Կուսէն Հոգւովն Սրբով:

Որով էառ մարմին, հոգի և միտ, և զամենայն որ ինչ է ի մարդ, ճշմարտապէս և ոչ կարծեօք:

Չարչարեալ, խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յարուցեալ, ելեալ ի յերկինս նովին մարմնովն, նստաւ ընդ աջմէ Հօր:

Գալոց է նովին մարմնովն և փառօք Հօր, ի դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին, յանեղն և ի կատարեալն, որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յԱւետարանս, որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալսն և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի միմիայն ընդհանրական և առաքելական Ս. Եկեղեցի, ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քաւութիւն և ի թողութիւն մեղաց, ի յարութիւն մեռելոց, ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց, յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

*Մինչեւ ցաստ են հաւատոյ բանք։*

*Իսկ որք ասեն՝ էր երբեմն յորժամ ոչ էր Որդին. կամ էր երբեմն յորժամ ոչ էր Սուրբ Հոգին, կամ՝ թէ յոչէից եղեն, կամ յայլմէ էութենէ ասեն լինել զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին, և թէ փոփոխելիք են կամ այլայլելիք, զայնպիսիսն նզովէ կաթողիկէ և Առաքելական Ս. Եկեղեցի։*

Ի Սուրբ Լուսաւորչէն մերմէ ասացեալ.

*Իսկ մեք փառաւորեսցուք որ յառաջ քան զյաւիտեանս, երկիրպագանելով Սրբոյ Երրորդութեանն և միոյ Աստուածութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ և միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։*

**Նիկիական Հանգանակին**

**մեր այսօրուան աշխարհաբարով թարգմանութիւնը**

*Կը հաւատանք մէկ Աստուծոյ, ամէն բան իր ձեռքին մէջ ունեցող Հօրը, երկինքն ու երկիրը, երեւցածներն ու չերեւցածները ստեղծողին։*

*(Կը հաւատանք) Եւ մէկ Տիրոջ մը՝ Յիսուս Քրիստոսին, Աստուծոյ Որդիին, որ Հայր Աստուծմէ ծնած է՝ Միածին, այսինքն Հօրը էութենէն։*

*Աստուած է՝ Աստուծմէ, լոյս է՝ լոյսէն, ճշմարիտ Աստուած է, ճշմարիտ Աստուծմէ ծնած և ոչ թէ ստեղծուած։*

*Նոյն ինքն Հօր (Աստուծոյ) բնութենէն է, որով ամէն բան եղաւ երկինքի մէջ և երկրի վրայ, երեւցածներն և չերեւցածները։*

*Որ մեզի՝ մարդոցս համար, և մեր փրկութեան համար, երկինքէն իջնելով մարմին առաւ, մարդ եղաւ, ծնաւ կատարեալ կերպով Ս. Կոյս Մարիամէն՝ Սուրբ Հոգիով։*

*Որով (Ս. Հոգիով) առաւ մարմին, հոգի և միտք, և*



*ամէն ինչ որ կայ մարդուս մէջ, ճշմարտապէս և ոչ թէ կարծիքով։*

*Չարչարուեցաւ, խաչուեցաւ, թաղուեցաւ, երրորդ օրը յարութիւն առաւ, և նոյն մարմինով երկինքը ելլելով, Հօրը աջ կողմը նստաւ։*

*Պիտի գայ նոյն մարմինով և Հօրը փառքովը, դատելու համար ողջերն ու մեռածները, որուն թագաւորութեանը վերջ չկայ։*

*Կը հաւատանք նաև Ս. Հոգիին, որ անեղ է (մէկէ մը չեղած) և կատարեալ Աստուած է, որ խօսեցաւ Օրէնքի և մարգարէներու գիրքերուն և Աւետարաններուն միջոցաւ, որ Յորդանան գետը իջաւ, Առաքեալը (Աստուծմէ ղրկուած Քրիստոսը) քարոզեց, և սուրբերուն մէջ բնակեցաւ։*

*Կը հաւատանք նաև մէկ ընդհանրական և առաքելական Եկեղեցիին, մէկ Մկրտութեան, ապաշխարութեան, մեղքերու քաւութեան ու թողութեան, մեռելներու յարութեան, հոգիներու և մարմիններու վերջին դատաստանին, երկինքի արքայութեան և յաւիտենական կեանքին։*

(Մինչեւ հոս է Հաւատոյ դաւանութիւնը)

*Իսկ անոնք որ կ'ըսեն թէ կար ժամանակ երբ չկար Աստուծոյ Որդին, կամ կ'ըսեն թէ կար ժամանակ երբ չկար Ս. Հոգին, կամ կ'ըսեն թէ Աստուծոյ Որդին կամ Ս. Հոգին ոչինչէ գոյացած, կամ ուրիշ էութենէ եղած են, և կամ թէ կրնան փոփոխուիլ և այլայլուիլ, կ'ըսեն, այդպէս ըսողները կը նզովէ կաթողիկէ և առաքելական Սուրբ Եկեղեցին։*

(Մեր Ս. Լուսաւորիչն ալ ըսած է.)

*Մենք ալ փառաւորենք ան որ յաւիտեաններէն առաջ կար, երկրպագելով Սուրբ Երրորդութեան և մէկ Աստուածութեան, Հօր, Որդիին և Ս. Հոգիին, հիմա, և միշտ և յաւիտեան, ամէն։*

*(Հայ տղաք պէտք է գոց սորվին «Հաւատամք»ը որ ամէն օր կը կարդացուի Եկեղեցիին մէջ, և անոր աշխարհա-*

բար թարգմանութիւնն ալ ուշադրութեամբ կարդալով նշանակութիւնը լաւ մը հասկնան ու ըմբռնեն Քրիստոնէական Եկեղեցիին ուղղափառ, չխառնակ դաւանութիւնը, ու չմոլորին)։

## ԱՂՕԹՔՆԵՐ

### «ՀԱՅՐ ՄԵՐ»Ը

Գերագոյն բարութեան, սիրոյ, գթութեան աղբիւրը եղող Աստուծոյ հետ մտերիմ հաղորդակցութեան միջոցն է Աղօթքը, որով Քրիստոնեան ամէն օր իր խնդրուածքը, աղաչանքները կը ներկայացնէ Ստեղծողին, և անկէ կը խնդրէ ներում և թողութիւն իր մեղքերուն։

Ամէնէն գլխաւոր աղօթքն է Տէրունական Աղօթքը, զոր Քրիստոս սորվեցուց մեզի, Հայր Մերը, զոր քրիստոնեան պէտք է գոց գիտնայ և ըսէ ամէն օր, առտու և իրիկուն, ճաշի սկսած և վերջացուցած ատեն, և ուրիշ զանազան պարագաներու մէջ։ «Այսպէ՛ս աղօթեցէք» ըսաւ Քրիստոս և սորվեցուց Հայր Մերը։

Տղաք այս գիրքէն (Տես էջ 29) սորված են Հայր Մերը և անոր աշխարհաբար թարգմանութիւնը. բայց օգտակար է որ քիչ մը աւելի բացատրութիւն ստանան. —

**Հայր մեր որ յերկինս ես.** — *Ասով կը սորվինք թէ երկինքի Աստուածը մեր Հայրն է, և վստահութեամբ կրնանք իրեն դիմել միշտ։ Ան կը սիրէ, կը խնամէ մեզ, մեր մարմնաւոր հօրմէն շատ աւելի գութով։ Մենք բոլորս Աստուծոյ որդիները՝* **իրարու եղբայր** *ենք, ու պէտք է անկեղծօրէն սիրենք մէկզմէկ, և Աստուծոյ՝ մեր Հօրը՝ բարութեան հասնիլ աշխատինք։*

**Սուրբ եղիցի անուն քո.** — *Երբ կ'ըսենք թէ* **սուրբ ըլլայ քու անունդ,** *մենք խօսք տուած կ'ըլլանք սուրբ պահել Անոր անունը։ Ոչ միայն պէտք է միշտ փառաբանենք Աստուած, այլև պէտք հեռու կենալ աղտոտ և սուտ գործերէ, և պէտք չէ պարապ բաներու համար բերան առնենք Աստուծոյ անունը, ոչ ալ երդում ընենք։*



**Եկեսցէ արքայութիւն քո.** — *Աստուծոյ թագաւորութիւնը՝ խաղաղութեան, եղբայրսիրութեան, գթութեան, ներողամտութեան տարածումն է։ Մեր այդ խնդրուածքովը կը խոստովանինք որ մենք այդ առաքինութիւններէն չպիտի հեռանանք, ատելութեան զգացում չպիտի ունենանք, կռիւ չպիտի ընենք մեր ընկերներուն հետ.*

**Եղիցին կամք քո, որպէս յերկինս եւ յերկրի.** — *Աստուծոյ կամքն է կատարել բոլոր բարի գործերը որոնք Աւետարանով սորվեցուած են մեզի։ Երկինքի մէջ իր կամքը կը կատարուի միշտ. երկրի վրայ ալ իր կամքը ըլլալու խընդրանքնիս ա՛յն ատեն միայն անկեղծ կ'ըլլայ, երբ ուշադիր կ'ըլլանք մեր կամքը համապատասխանեցնելու Աստուծոյ կամքին։*

**Զհաց մեր հանապազորդ, տուր մեզ այսօր.** — *«Ամէն օրուան հացը» բացատրութեամբ պէտք է հասկնալ մեր բոլոր նիւթական պէտքերը՝ ուտելիք, հագուստ, բնակարան ևլն.։ Այս խնդրուածքով կը խոստովանինք որ բոլոր բարութեանց աղբիւրը Աստուած է, և անոր մեզի տուած խելքը, ուժը, աշխատութիւնը պարկեշտօրէն գործածելով մէկտեղ, պէտք է միշտ խնդրենք Աստուծմէ որ պակաս չընէ մեր հացը և զայն ձեռք բերելու միջոցները։*

**Եւ թող մեզ զպարտիս մեր, որպէս եւ մեք թողումք մերոց պարտապանաց.** — *Յիսուս ինքը բացատրեց* **Հայր մերի** *այս համարը, ըսելով որ «Եթէ դուք չներէք ձեր եղբօր յանցանքները, ձեր երկնաւոր Հայրն ալ չպիտի ներէ ձեր յանցանքները», Եթէ մենք մեր ընկերին դէմ ոխ պահենք և չներենք անոր, և Աստուծոյ ըսենք թէ «կը ներենք մեզի դէմ յանցանք գործողներուն», կեղծաւորաբար խաբել ուզած կ'ըլլանք ամենագէտ Աստուածը, և մեր մեղքը կը ծանրացնենք։*

**Եւ մի տանիր զմեզ ի փորձութիւն, այլ փրկեա ի չարէն.** — *Ասով կը խոստովանինք որ եթէ Աստուած իր հայրական*

պահպանութիւնը չընծայէ մեզի, և մենք մեր խելքին մնանք, փորձութիւնը պատրաստ է։ Փորձութեան մէջ չիյնալու, չարէն փրկուելու համար, Աստուծոյ օգնութեան պէտք ունինք։

Զի քո է արքայութիւն եւ զօրութիւն եւ փառք յաւիտեանս, ամէն : — Աշխարհի գերագոյն տէրը և թագաւորը Աստուած է. անորն է թագաւորութիւնը, ուժը, և փառքը՝ միշտ և յաւիտեան։ Քրիստոնեան խոնարհ համակերպութեամբ պէտք է խոստովանի ասիկա, և ըսէ Ամէն, որ կը նշանակէ թող ըլլայ :

---

## ԱՌԱՒՕՏԵԱՆ ԱՂՕԹՔ

Գոհանամք զՔէն, Տէր Աստուած մեր, որ զարթուցեր զմեզ ի հանգստենէ քնոյ շնորհիւ ողորմութեան քո ։ Զարթո զմիտս մեր արդարութեամբ առ քեզ, Տէր Աստուած մեր, զի տեսցեն աչք մեր զփրկութիւն քո․ եկեսցէ և բնակեսցէ առ մեզ Աստուածութիւն քո, և ողորմութիւն քո հովանի և պահապան լիցի ի վերայ պաշտօնէից քոց։ Եւ զմեզ՝ զծառայս քո արժանի արա ի տուէ և ի գիշերի և յամենայն ժամու միշտ խորհիլ ի սէր պատուիրանաց Քոց, և գոհանալով փառաւորել զՀայր և զՈրդի և Ս. Հոգին, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

### Թարգմանութիւն

Կը գոհանանք քեզմէ, ով մեր Տէր Աստուածը, որ քու ողորմութեանդ շնորհիւ արթնցուցիր մեզ քունի հանգիստէն։ Արթնցուր մեր միտքերն ալ արդարութիւնով դէպ ի Քեզ, ո՛վ Տէր Աստուած, որպէս զի մեր աչքերը տեսնեն Քու



փրկութիւնդ։ Քու Աստուածութիւնդ թող գայ մեր մէջ, և քու ողորմութիւնդ հովանի և պահապան ըլլայ քու պաշտօնեաներուդ վրայ։ Եւ մեզ՝ քու ծառաներդ՝ արժանի ըրէ գիշեր ցորեկ ու ամէն ժամանակ միշտ խորհիլ քու պատուիրաններդ սիրելու վրայ, և գոհութիւն տալով փառաւորել Հայրը և Որդին և Ս. Հոգին, հիմա և միշտ և յաւիտեան։

## ԻՐԻԿՈՒԱՆ ԱՂՕԹՔ

Տէր Աստուած մեր, դու պահեա զմեզ խաղաղութեամբ ի գիշերիս յայսմիկ և յամենայն ժամանակի. ընդ սուրբ երկիւղ քո բեւեռեալ պահեա զմիտս և խորհուրդս մեր, որպէս զի յամենայն ժամ քեւ պահպանեալ լիցուք յորոգայթից թշնամւոյն, և Քեզ հանցուք զօրհնութիւն և զփառս, Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

### Թարգմանութիւն

Տէր Աստուած մեր, դուն պահէ մեզի խաղաղութիւնով այս գիշերուան մէջ և ամէն ժամանակ. քու սուրբ երկիւղիդ վրայ գամուած (հաստատուն) պահէ մեր միտքն ու խորհուրդները, որպէս զի ամէն ժամանակ քեզմով պահպանուինք թշնամիին ծուղակներէն, և քեզի օրհնութիւն մատուցանենք, Հօր և Որդիին և Ս. Հոգիին, հիմա և միշտ և յաւիտեան։

* * *

Պահապան ամենայնի, Քրիստոս, աջ քո հովանի լիցի ի վերայ իմ, ի տուէ և ի գիշերի, ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ, ի ննջել և ի յառնել,

*զի մի երբեք սասանեցայց, և ողորմեա քո արարածոց և ինձ բազմամեղիս ։*

Թարգմանութիւն

*Դուն որ ամէնուն պահապանն ես, Քրիստոս, քու աջդ (ձեռքդ) թո՛ղ հովանի ըլլայ իմ վրաս գիշեր ու ցերեկ, տան մէջ նստած ատեն, ճամբայ գացած ատեն, և քնանալու և արթննալու ատեն, որ բնաւ չսասանիմ, և ողորմէ քու արարածներուդ, և ինծի՝ շատ մեղաւորիս ։*

## ՃԱՇԷՆ ԱՌԱՋ

*Ճաշակեսցուք խաղաղութեամբ զկերակուրս որ պատրաստեալ է մեզ ի տեառնէ, օրհնեալ է Տէր ի պարգևս իւր, ամէն ։*

Թարգ.— *Խաղաղութեամբ ճաշակենք Տիրոջմէն պատրաստուած կերակուրը ։ Օրհնեալ է Տէրը իր պարգևներով ։*

*Աչք ամենեցուն ի քեզ, Տէր, յուսան, և դու տաս նոցա կերակուր ի ժամու, բանաս զձեռն քո, և լցուցանես զամենեսին քաղցրութեամբ կամօք քով ։*

*Ամէնուն աչքը քեզի կը նայի, ով Տէր, դուն ժամանակին անոնց կերակուր կուտաս, կը բանաս ձեռքդ և քու քաղցր կամքովդ կը լիացնես ամէնքը ։*

## ՃԱՇԷՆ ԵՏՔԸ

*Զլիութիւն սեղանոյս անհատ և աննուազ արասցէ Քրիստոս Աստուած մեր, որ զմեզ կերակրեաց և լիացոյց. Նմա փառք յաւիտեանս, ամէն ։*

*Այս սեղանին լիութիւնը անպակաս ընէ Քրիստոս, մեր Աստուածը, որ մեզ կերակրեց և լիացուց. անոր փառք յաւիտեանս, ամէն ։*

**ՎԵՐՋ**

# ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐՈՒՆ

ԵՐԿՈՒ ԱՒԵՏՈՒՄՆԵՐԸ. — Առաջին անգամ չէ որ Աստուած իր հրեշտակին միջոցաւ կ'աւետէր զաւկի մը ծնունդը ։ Աբրահամի եւ Սառայի, Սամփսոնի հօրը եւ մօրը (Դատաւորաց ԺԳ. Գլուխ) նոյնպէս՝ Սամուէլի մօրը, (Ա. Թագ. Ա. 1—20) որոնք հաւատացին ։ Զաքարիա կասկածեցաւ եւ պատժուեցաւ՝ համր մնալով մինչեւ իր զաւկին՝ Յովհ. Մկրտչի ծնունդը ։ Եւ այն ատեն զգաց իր սխալը, խոստովանեցաւ, եւ հաւատքով զօրացած, մարգարէացաւ ։ Բայց ամէնէն հրաշալին էր Կոյս Մարիամին տրուած աւետիսը թէ Ս. Հոգիով զաւակ մը պիտի ունենայ ։ Մարիամ **զարմացաւ բայց չկասկածեցաւ** ։ Հաւատաց՝ թէեւ անկարելի կը թուէր մարդոց. եւ հրաշալի դէպքը կատարուեցաւ ։ Հաւատքը Աստուծոյ վրայ՝ հեզութեան եւ խոնարհութեան միացած՝ մեծագոյն առաքինութիւններն են, զորս վարձատրեց Աստուած, եւ Մարիամ. այդ խոնարհ կոյսը, **Աստուածամայր** ըլլալու փառքին արժանացաւ ։

ՅԻՍՈՒՍԻ ԾՆՈՒՆԴԸ. — Յղացնել Յիսուսի Ծնունդին մեծ խորհուրդը ։ Երկինքն ու երկիրը, ամբողջ տիեզերքի սքանչելիքները մէկ խօսքով ստեղծող Աստուածը կը հաճէր փոքրիկ մանուկ մը ըլլալ, խանձարուրի մէջ փաթթուիլ եւ մսուրի մէջ դրուիլ ։ Ան աշխարհ չեկաւ մեծազօր թագաւորի մը պէս ։ Սիրտերո՛ւ թագաւորն էր ան, եւ իրեն հետ բերաւ խաղաղութիւնը եւ սէրը ։ Իր փառքը՝ լուսաւոր հրեշտակներուն միջոցաւ յայտնուեցաւ աղքատիկ եւ խոնարհ հովիւներուն ։ **Աստուած մարդուն սիրտը կը նայի.** արտաքին փայլը, ճոխութիւնը նշանակութիւն չունին ։ Քրիստոս երկինքէն երկիր իջաւ, որպէս զի զմեզ երկինքի բարձրութեան հասցնէ ։ Քրիստոսի ծնունդը այն ատեն արժէք կ'ունենայ, երբ հաւատանք իրեն, երբ ինք մեր սրտին մէջ ծնի. երբ մեր սրտին մէջ ունենանք անոր քարոզած եղբայրսիրութիւնը, երբ մեզմէ հեռացնենք ատելութեան, չարութեան ամեն զգացում ։

ՄՈԳԵՐՈՒ ԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆԸ. — Մեսիայի գալուստը գուշակուած էր մարգարէներէն ։ Հրեաները գիտէին նոյն իսկ թէ Բեթղեհէմի մէջ պիտի ծնի ան ։ (Միքիա Ե. 2) ։ Հեռաւոր Արեւելքի մէջ ալ հեթանոսներ տեղեակ էին այս գուշակութեան, Բաբելոնի գերութեան, Դանիէլի ժամանակէն ։ **Մոգ** կը նշանակէր իմաստուն մարդիկ որ կ'ուսումնասիրէին աստղերը, խորհելով որ անոնցմէ կը սորվին մարդոցմէ ծածկուած խորհուրդները ։ Յիսուսի ծննդեան ժամանակ [illegible] հրաշալի երեւոյթ մը [illegible] ըլլալը կը հաստատէ նշանաւոր աստղագէտը՝ Քէպլէր ։ Տիեզերքի երբ [illegible]

Աստուած իր հրաշալիքները յայտնելու համար մեր խելքէն վեր միջոցներ ունի ։ Եւ մոգերը՝ աստղէն առաջնորդուած՝ եկան երկրպագելու Յիսուսին եւ անոր մատուցանելու իրենց բանկագին նուէրները, որոնք մարդկային նշաններն էին իրենց հաւատքին եւ խոնարհ հպատակութեան — Բնական էր որ վախնար Հերովդէս որ առաջին օտարազգի իշխանն էր Հրեաներուն ։ Ինք ալ Հրեաներուն նման կը կարծէր որ երկրաւոր թագաւոր մը պիտի ըլլար Յիսուս ։ Վայրագ բնաւորութեան տէր, մեքենայութիւններ կը նիւթէ, Բեթղեհէմի մանուկները կը կոտորէ, բայց չի յաջողիր իր վատ ծրագրին մէջ ։ Քրիստոսի Եկեղեցին պիտի հիմնուէր, եւ մարդկային հնարքներ չէին կրնար արգելք ըլլալ աստուածային տնօրինութեան ։ Բեթղեհէմի մանուկները առաջին անմեղ զոհերը եղան Քրիստ. Կրօնքի հաստատութեան ․ Առանց զոհի արդիւնք չկայ։

ՅԻՍՈՒՍԻ ԸՆԾԱՅՈՒՄԸ.— Հրէից մէջ անդրանիկ մանչ զաւակները Տաճար տանելով Աստուծոյ նուիրելու սովորութիւնը յիշատակն էր Եգիպտոսի անդրանիկներու սպաննութեան ։ Ընծան էր գառն մը ողջակէզի համար. բայց աղքատները կրնային տանիլ երկու տատրակ. Մարիամ եւ Յովսէփ աղքատի նուէրը կուտան.—Կ'աւանդուի թէ Սիմէոն մէկն էր այն 72 Թարգմանիչներէն, որոնք Քրիստոսէ առաջ 275 թուականին Ս. Գիրքը Յունարէնի թարգմանեցին ․ Սիմէոն կարդալով մարգարէներուն գրածը Մեսիային հրաշալի ծնունդին մասին, կը բաղձայ ականատես ըլլալ այդ մեծ իրողութեան, եւ ողջ կը մնայ, ապրելով իբր 300 տարի ․ — Աննա մարգարէուհին մէկն էր Տաճարին մէջ ապրող այրիներէն, որ պաշտամունք կատարելով մէկտեղ, խնամք կը տանէին Տաճարին նուիրուած կոյսերուն եւ աղջիկներուն ։ Մարիամ ալ ինը տարի այդ այրիներու եւ թերեւս Աննայի խնամքը վայելած էր ։ Ուստի Աննա սըրտագին կը հրճուէր իր սանուհիին եղած շնորհքը տեսնելով ․

ՅԻՍՈՒՍ 12 ՏԱՐԵԿԱՆ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ. — Հրէից մէջ 12 տարեկան տղան չափահաս կը նկատուէր ։ Ամէն ճշմարիտ Իսրայէլացի այդ տարիքէն սկսեալ պէտք է ուխտի երթար Երուսաղէմ տարին երեք անգամ, այն է Զատկին (Պասեք), Պենտեկոստէին եւ Տաղաւարահարաց տօնին ։ Կիներն սովորաբար Զատիկին կ'երթային ։ Նազարէթէն Երուսաղէմ երեք օրուան ճամբայ է ։ Խմբովին կ'երթային, զանազան սաղմոսներ երգելով, եւ ամէն իրիկուն վրան կը կանգնէին ։ Տաճարի գաւիթին մէջ կար ժողովարան մը, ուր հասակաւորները կը լսէին դպիրներու ըմբռնումներին ։ Յիսուս կը սիրէ Տաճարը ուր Աստուած կը փառաբանեն, եւ հնազանդ է իր ծնողաց ․ Սրտանց կը սիրէ ինչ որ իր Հօրն է, ինչ որ աստուածային եւ իմաստուն ։ Իբրեւ Որդի Մարդոյ ձգտում ունի սորվելու, մարդոց օրինակ ըլլալու համար ։ Մենք պէտք է ձգտինք մեր Տիրոջը նմանիլ. սիրել իմաստութիւնը, սիրել Աստուծոյ տունը եւ Աստուծոյ խօսքը ։ Իրաւ է որ արտաքին աստուածպաշտութիւնը բաւական չէ (եկեղեցի երթալը) ․ Աստուած աւելին կ'ուզէ, մեր սի՛ր՛տը ։ — Յովսէփ եւ Մարիամ, երբ տեսան թէ Յիսուս իրենց հետ չէր, զգացին կորուստին մեծութիւնը։ Անոնք որ իրենց կեանքին եւ սրտին մէջ զգացած են Յիսուսի ներկայութիւնը, կը լեցուին նման վիշտով, երբ կորսնցնեն այդ զգացումը, եւ



պէտք է փնտռեն նոյն եռանդով: — Յիսուսի պատասխանը իր մօրը, պէտք է տպաւորուի տղոց մտքին մէջ: Տղաք պէտք է գիտնան ու բնա՛ւ չմոռնան թէ **Եկեղեցին Աստուծոյ տունն է:**

ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉԻ ՔԱՐՈԶՈՒԹԻՒՆԸ. — Յիսուսի ժամանակ տարածուած սովորութիւն էր անապատական կեանքի մէջ ճգնութիւն ընել եւ առանձնութեան մէջ քարոզութեան պատրաստուիլ: Նոյնը կ'ընէր Յովհաննէս, որ կը քարոզէր թէ երկինքի արքայութիւնը մօտեցած է, բայց կը յայտնէր թէ ինք չէ Քրիստոսը, այլ անոր **Կարապետը** [Կարապետ կը նշանակէ առջեւէն գացող]: Երբ իշխան մը, թագաւոր, կաթողիկոս, պատրիարք եւն. տեղ մը երթան առաջուընէ մէկը կ'երթայ եւ իմաց կուտայ որ մարդիկ պատրաստ ըլլան զայն ընդունելու: Հիւսն Յովսէփի որդին՝ Յիսուս, Աստուծոյ Որդի էր, երկինքի թագաւորը. եւ Անոր **կարապետը** պէտք է մարդոց յայտնէր Աստուածորդիին գալուստը: Յիսուս մարդոց սիրտերը պիտի փոխէր, ուստի մարդիկ պէտք է պատրաստէին իրենց սիրտը, որպէսզի կարող ըլլային Անոր խօսքերը հասկնալ ու կատարել: Յովհաննէսի քարոզութենէն ազդուած, շատեր կը ցանկան երկինքի արքայութեան: Կ'ամբոխին եւ կը սաստուին միայն Փարիսեցիներն ու Սադուկեցիները, իրենց կեղծաւորութեան եւ անհաւատութեան համար:

ՅԻՍՈՒՍԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ. — Ջուրով ձեռք բերուած արտաքին մաքրութիւնը գրաւական մըն է ներքին մաքրութեան: Յիսուս պէտք չունէր անշուշտ ատոնց: Յիսուս իր մկրտութեամբ կը սրբէ ջուրը, կը լուայ կը մաքրէ մարդոց ապականութիւնը: Մկրտութենէն ետքը երկինք բացուեցաւ: Յիսուս պատռեց երկինքի եւ երկրի միջեւ գտնուած անջրպետը՝ մեղքը, յանցանքը, որ մարդիկը կը բաժնէր երկինքէն: Յիսուս երկինքը բացաւ իր հաւատացեալներուն, զինք սիրողներուն համար: Իր ջանքն էր Աստուծմէ հեռացած մարդը նորէն Անոր մօտեցնել: Յիսուս միջնորդ է Աստուծոյ եւ մարդոց մէջտեղ: Հայր Աստուծոյ խօսքը՝ «Դա է որդի իմ սիրելի, դմա լուարուք» կը ցուցնէր Յովհ.ի թէ Յիսուս խոստացուած Մեսիան է, որուն համար ինք ճամբայ կը պատրաստէ: Ասով հաստատուեցաւ Յիսուսի Աստուածորդի ըլլալը: Յիսուս 12 տարեկանին տաճարին մէջ կ'ըսէր թէ Հօրը տունը կը գտնուի: Ուրեմն Հայր ունէր. իսկ այստեղ Հայրը կը վկայէ երկինքէն թէ Իր Որդին է Յիսուս: Եւ Սուրբ Հոգին աղաւնիի կերպարանքով կ'իջնէ Յիսուսի վրայ: Եւ այսպէս աչքերու առջեւ կը պարզուի **Երրորդութիւն եւ մի Աստուածութիւն** անիմանալի խորհուրդը:

ՅԻՍՈՒՍԻ ՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ.— Յիսուս քառասուն օր առանձնութեան մէջ եւ պահեցողութեամբ կը պատրաստուի իր կատարելիք մեծ գործին, մարդոց օրինակ ընծայելու համար: Այսպէս, Եկեղեցւոյ նուիրուող քահանան ձեռնադրուելէն ետք 40 օր պահեցողութեամբ կը պատրաստուի պաշտօնին: — Ասկէ վերջ է որ, իբրեւ մարդ, Յիսուս փորձուեցաւ սատանայէն [Աստուած չի փորձուիր] եւ յաղթեց անոր: Սատանային երեք փորձութիւնները նպատակ ունէին գրգռել Անոր մարմնական կիրքերը, շահամոլութիւնը եւ փառասիրութիւնը: Յիսուս յաղթեց սատանային, Ս. Գիրքի

սկզբունքներուն դիմելով, եւ աստուածային պատգամները անոր դէմ իբրեւ զէնք գործածելով: Մենք ալ երբ Աստուծոյ խօսքերը եւ պատուէրները մեզի առաջնորդ եւ ապաւէն ունենանք, պիտի կրնանք դիմադրել սատանային չար թելադրութեանց: Պէտք է միշտ յիշենք **Հայր մերին** մէջի հատուածը եւ կրկնենք. «Մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն»:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱՋԻՆ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ.— Փորձութենէն անմիջապէս ետք Յիսուս կը սկսի քարոզել եւ կ'ունենայ իր հետեւողները, որոնք հաւատացողներէն են Անոր մեսիայութեան: Նաթանայէլ-Բարթողիմէոս [Հայոց առաջին Լուսաւորիչներէն մէկը] առաջին անգամ խոստովանողը կ'ըլլայ Յիսուսի Աստուածորդի ըլլալուն:

ԿԱՆԱՅԻ ՀԱՐՍՆԻՔԸ.— Յիսուս այս հարսնիքին գտնուելով կը ցուցնէ թէ Աստուած չ'արգիլեր անմեղ զուարճութիւնը: Ջուրը գինիի փոխելու առաջին հրաշքը կը զօրացնէ իրեն մասին գոյացուած հաւատքը: Բայց շատ աւելի մեծ հրաշք է միլիոնաւոր մարդոց սիրտը դէպի բարին, դէպի ճըշմարիտ Աստուածը առաջնորդելը:

ՀՐԱՇԱԼԻ ՁԿՆՈՐՍՈՒԹԻՒՆԸ.— Տղոց մտքին մէջ շփոթութիւն չձգելու համար, բացատրել թէ **Գալիլիայի** ծով, **Տիբերիականի** ծով, **Գեննեսարէթի** լիճ եւլն. միեւնոյն լիճն են՝ իրեն շուրջը գտնուած քաղաքներու անունով տարբեր տարբեր կոչուած: Հրաշալի ձկնորսութիւնը առիթ մըն է արծարծելու աշակերտներու հաւատքը, որով զօրացած՝ ձկնորս Պետրոս մարդերու որսորդ կ'ըլլայ:

ԼԵՌԱՆ ՔԱՐՈԶԸ.— **Երանի**ներու մէջ շեշտել **հոգիով աղքատ**ներու մասին տրուած բացատրութիւնը, այն է աւելի՛ բարիք ընելու աշխատիլ, մեր ըրած բարիքին վրայ չհպարտանալ: **Սգաւոր**ները իրենց գործած մեղքերուն վրայ զղջացողներն, լացողներն են: Ծանրանալ **սիրտի մաքրութեան եւ խաղաղարարութեան** վրայ: **Արդարութեան համար անօթի եւ ծարաւ ըլլալ**՝ քրիստոնէային մեծ պարտականութիւնն է, Նոյնիսկ եթէ ատոր համար հալածուին. մեծ վարձատրութիւն կը խոստանայ անոնց Յիսուս: — Շեշտել թէ իր ընկերը զրպարտել կամ վարկաբեկելն ալ սպանութիւն մըն է: — Բացատրել թէ բարիք պէտք է գործենք ո՛չ թէ ցոյցի համար եւ կեղծաւորաբար, այլ **սրտանց**, Աստուծոյ հաճելի ըլլալու համար: **Հայր մերը** գոց սորվեցնել, եւ աշխարհաբարը մտադրութեամբ կարդալ տալ: Պատշաճ է որ 134—136 էջերուն մէջ Հայր մերի բացատրութիւնը ա՛յս դասին մէջ տրուի աշակերտներուն:

ՅԻՍՈՒՍ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐԸ.— Յիսուս մանուկները կ'օրհնէ՝ իրենց մաքուր սիրտին, խոնարհութեան, հաւատքին համար, որոնք անհրաժեշտ պայմաններն են Աստուծոյ թագաւորութեան արժանանալու: Առիթն է տղոց շեշտելու թէ պէտք է աշխատին պահել իրենց մանկական անմեղութիւնը:

ՅԻՍՈՒՍ ՏԱՃԱՐԸ ԿԸ ՄԱՔՐԷ.— Հեզութեան, խոնարհութեան տիպար Յիսուսը՝ արդար զայրոյթ մը կը զգայ Աստուծոյ տաճարին սրբութիւնը անարգողներուն դէմ: Միշտ շեշտել թէ Եկեղեցին Աստուծոյ տունն է ուր պէտք է ակնածութեամբ կենալ:



ՀԱՐՈՒՍՏ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ.— Բացատրել թէ հարուստ ըլլալը արգելք չէ արքայութիւն երթալու. այլ հարստութիւնը լաւ չգործածելը, յոյսը միմիայն հարստութեան վրայ դնելը, խեղճերուն, աղքատներուն նկատմամբ գութ չունենալը դատապարտելի են:

ՅԻՍՈՒՍԻ ՀՐԱՇՔՆԵՐԸ.— Հինգ հազար հոգիի կերակրումը, ծովուն խաղաղիլը, կոյրերու եւլն. բժշկութիւնը, մեռեալներ ողջնցնելը եւ միւս բոլոր հրաշքները՝ արտայայտութիւնն են Յիսուսի գութին եւ կարեկցութեան տառապող մարդկութեան նկատմամբ: Բայց անոնք միջոցներ են մանաւանդ մարդոց սիրտը դարձնելու դէպի ճշմարիտ Աստուածը, անոնց հաւատքը արծարծելու: Կոյրերու աչքը բանալէն շատ աւելի մեծ հրաշք է անոնց հոգիին լուսաւորումը ճշմարտութեան լոյսով: Դիտել տալ որ Յիսուս հրաշալի բժշկութիւն մը ընելէ առաջ հաւատք կը փնտռէր ենթակային վրայ. այդ հաւատքն է որ պիտի փրկէ մարդիկը յաւիտենական կորուստէ:

ՊԵՏՐՈՍԻ ԴԱՒԱՆՈՒԹԻՒՆԸ.— Բացատրել, լուսաբանել թէ հիմնաքարը որուն վրայ կանգնուած է Քրիստոսի Եկեղեցին, **Քրիստոսի՝ Աստուծոյ Որդի** ըլլալու դաւանութիւնն, հաւատքն է, եւ ոչ թէ **Պետրոսի անձը**, որովհետեւ անոր ունեցած հաւատքը միւս առաքեալներն ալ ունէին, եւ անոնց մէջ մեծ ու պզտիկ չկար: Բոլորը եղբայր, հաւասար էին մէկմէկու:

ՅԻՍՈՒՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ.— Յիսուս փառքով երեւցաւ աշակերտներուն, իր աստուածային մաքրութիւնը փայլեցաւ դէմքին վրայ: Մարդիկ երբ պայծառ եւ մաքուր սիրտ մը կ'ունենան, անիկա կը փայլի իրենց դէմքին վրայ: Դէմքը սիրտին հայելին է: Հայր Աստուած անգամ մըն ալ վկայեց Յիսուսի համար թէ Իր սիրելի Որդին է: Մենք ալ արդարեւ Աստուծոյ որդի կ'ըլլանք, երբ բարի սիրտ ունենանք:

ՅԻՍՈՒՍԻ ԱՌԱԿՆԵՐԸ.— Բացատրել, շեշտել Յիսուսի առակներուն բարձր բարոյականը, որ կը ցոլանայ անոնց իւրաքանչիւրին մէջ յստակ կերպով, եւ կարօտ չէ մանաւոր լուսաբանութեան:

ՅԻՍՈՒՍԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՈՒՍԱՂԷՄ.— Յիսուս գիտէր թէ իր թշնամիները կորուստի մատնել կ'ուզեն զինք. բայց դարձեալ կը մտնէ Երուսաղէմ, իր քարոզութիւնը շարունակելու: Եւ այս անգամ իր Մեսիական փառքը ցուցնելու եւ Երուսաղէմ հաւաքուած բազմութեան ազդելու համար, թոյլ կուտայ որ **ովսաննա**ներով փառաւորեն զինք: Բայց կուլայ այդ քաղաքին վրայ, մարգարէաբար գուշակելով անոր ենթարկուելիք աղէտները, որոնք հետեւանքը պիտի ըլլային գործուելիք ահաւոր ոճիրին:

ՅԻՍՈՒՍ՝ ԻՐ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ.— Յիսուս՝ արդարութեան եւ խաղաղութեան իշխանը, անիրաւաբար կը զրպարտուի իր թշնամիներէն, որոնք կը շփոթին սակայն իր տուած հիանալի պատասխաններէն: Բայց աւելի՛ կը զայրանան, եւ կ'որոշեն կորուստի մատնել այդ անմեղ, այդ արդար անձը:

ԽՈՆԱՐՀՈՒԹԵԱՆ ԴԱՍԸ.— Օգտուիլ **Ոտնլուայի** հիանալի դասէն, տղոց մտքին մէջ տպաւորելու համար թէ ո՛րքան դատապարտելի է հպար-

տութիւնը, մեծամեծութիւնը, զօրութիւնը, որոնք սիրոյ զգացումին կը հակասեն: Հեզութի՛ւնը, խոնարհութի՛ւնը ո՛չ միայն Աստուծոյ հաճելի են, այլեւ այս աշխարհի մէջ սէր եւ համերաշխութիւն առաջ կը բերեն եւ յաջողութիւն կ'ապահովեն: «Երանի՜ հեզերուն, որովհետեւ անոնք երկիրը պիտի ժառանգեն»:

**Ս. ՀԱՂՈՐԴՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ.**— Յիսուս, յաւիտենական Քահանայապետը, Ս. Հաղորդութեան խորհուրդով, ինք կը զոհուի մեր փրկութեան համար, հացի եւ գինիի երեւոյթին տակ: Զգացնել թէ ո՛րքան խոնարհութեամբ, հաւատքով եւ աղօթքով ու ապաշխարութեամբ պէտք է մասնակցինք այդ սուրբ խորհուրդին:

**ՅԻՍՈՒՍԻ ՎԵՐՋԻՆ ԿՏԱԿԸ.**— Մտադրութեամբ կարդացնել տղոց՝ Յիսուսի վերջին կտակին համառօտագրութիւնը: Հարկ չկայ գոց ընել տալու: Շեշտել սիրոյ պատուիրանին բարձր նշանակութիւնը: Յիսուս իր մահուան նախօրեակին կ'աղօթէ երկնաւոր Հօրը՝ մեզի համար, եւ կը սորվեցնէ սիրոյ գերագոյն պատուիրանը, որո՛վ միայն կրնանք Աստուծոյ հետ մէկ ըլլալ, անոր որդիները դառնալ:

**ՅԻՍՈՒՍ ԳԵԹՍԵՄԱՆԻԻ ՄԷՋ.**— Պարզ պատմութիւնը ինքնին թելադրող է եւ յոյժ տպաւորիչ: Յիսուս, իբրեւ մարդ տրտմեցաւ ու տառապեցաւ: Ան իր տառապանքին մէջ կ'աղօթէր մեզի համար: Շեշտել աշակերտներուն տկարութիւնը:

**ՅՈՒԴԱՅԻ ՄԱՏՆՈՒԹԻՒՆԸ.**— Յուդայի վատ մատնութեան միջոցին շեշտել Յիսուսի արի կեցուածքը: Այդ տագնապալի վայրկեանին կը բժշկէ քահանայապետի ծառային ականջը:

**ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ** Յիսուս լուռ կը մնայ իրեն դէմ եղած զրպարտութիւններուն հանդէպ, գիտնալով որ անօգուտ է ինքզինքը արդարացնել այնպիսի ատեանի մը առջեւ, որ անպատճառ զինք պիտի դատապարտէր: Բայց Կայիափայի ստիպումին վրայ, Յիսուս համարձակօրէն յայտնեց ճշմարտութիւնը: Անիրաւութեան դէմ բողոքը մարդկային անբռնաբարելի իրաւունք մըն է:

**ՊԵՏՐՈՍԻ ՈՒՐԱՑՈՒԹԻՒՆԸ** կարելի չէ բաղդատել Յուդայի մատնութեան հետ: Պետրոսի ընթացքը տկարութեան արդիւնք էր, որուն համար յետոյ զղջաց ու դառնապէս լացաւ, եւ Քրիստոսի յարութենէն ետք վերահաստատուեցաւ իր առաքելական պաշտօնին մէջ: Յուդայի մատնութիւնը մարդկային տարեգրութեանց մէջ մեծագոյն, ահռելի ոճիրն էր, կանխամտածուած, երեսուն արծաթի համար, որ Յիսուսի արեան գինն էր: Յուդայի զղջումը արդիւնք էր յուսահատութեան, այն գիտակցութեամբ թէ ներում չկայ իրեն. ու կեանքին վերջ տուաւ ուրիշ ոճիրով մը՝ անձնասպանութեամբ:

**ՊԻՂԱՏՈՍԻ ԸՆԹԱՑՔԸ.**— Պիղատոսի նկարագիրը կը ցոլանայ իր վարմունքին մէջ: Ան կը ճանչնայ եւ կը հռչակէ Յիսուսի անմեղութիւնը, բայց քաջութիւն չունենար արդարութիւնը գործադրելու: Պիղատոս դատապարտուած է նոյնիսկ իր խղճէն:



**ՅԻՍՈՒՍԻ ՉԱՐՉԱՐԱՆՔԸ.**— Յիսուս որ անմեղութիւնն իսկ է, սիրով կը հանդուրժէ չարչարուիլ, քաւելու համար ուրիշներո՛ւ, մե՛ր մեղքերը: Սիրոյ գերագոյն զոհողութիւնն է ան. դիւցազնութիւն մը, ուրիշներու համար տառապիլ, զոհուիլ:

**ԴԷՊԻ ԳՈՂԳՈԹԱ.**— Յիսուս խաչը շալկած կ'ելլէ դէպի Գողգոթա. Ան դատապարտուած է մահուան՝ մարդկութեան գործած ոճիրներուն համար:

**ԽԱՉԵԼՈՒԹԻՒՆԸ.**— Խաչը մահապարտներու համար մահու գործիք մըն էր, մահուան ամէնէն անարգ տեսակը: Յիսուս մարդոց սիրոյն համար յօժարեցաւ այդ անարգ մահուան, անմեղ գառնուկի մը նման: Բայց խաչին վրայէն կ'աղօթէր մարդոց համար, եւ ներում կը խնդրէր իր Հօրմէն: Իր երկու կողմը խաչուած երկու աւազակներէն մէկը խոստումը կ'ընդունի արքայութեան, իսկ միւսը կը մեռնի անզիղջ:

**ՅԻՍՈՒՍ Կ'ԱՒԱՆԴԷ ՀՈԳԻՆ.**— Խաչին վրայէն Յիսուսի անհուն ներողամտութիւնը մարդոց անիրաւութեան եւ այդ միջոցին, ու հոգին աւանդելէն ետք պատահած հրաշալի դէպքերը պատճառ եղան որ հեթանոս հարիւրապետն ու իր հետեւորդները խոստովանին թէ արդարեւ Աստուծոյ Որդի էր ան:

**ՅԻՍՈՒՍԻ ԹԱՂՈՒՄԸ** կատարուեցաւ հրէական սովորութեան համաձայն, եւ քահանայապետները միջոցներ ձեռք առին որ աշակերտները չգողնան անոր մարմինը, եւ յետոյ լուր հանեն թէ յարութիւն առած է:

**ՅԻՍՈՒՍԻ ՅԱՐՈՒԹԻՒՆԸ.**— Հրեաներու ձեռք առած միջոցներուն հակառակ Յիսուսի հրաշափառ Յարութիւնը տեղի կ'ունենայ միաշաբաթ [կիրակի] առաւօտ: Հրեշտակը կը յանձնարարէ լուր տալ աշակերտներուն եւ Պետրոսին. այս վերջինը մասնաւորապէս կը յիշէ, որովհետեւ Պետրոս ուրացումէն ետք սկսեր էր յուսահատիլ եւ քաշուիլ: Յիշեցնել տղոց թէ Քրիստոսի առաջին դարուն միաշաբաթը կիրակի կոչուեցաւ եւ հանգիստի օր եղաւ ի պատիւ մեր Փրկչին Յարութեան: Կիրակի օրերը մեր եկեղեցիներուն մէջ Ս. Յարութեան յիշատակը կը կատարուի, եւ մասնաւոր հանդիսութեամբ առաւօտուն կը կարդացուի Յարութեան աւետարանը, որ կը կոչուի **Իւղաբերից Աւետարան**, Յիսուսի մարմինը օծելու եկող իւղաբեր կիներուն անունով:

**ՅԻՍՈՒՍ ԿԸ ՅԱՅՏՆՈՒԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐՈՒՆ** զանազան անգամներ, անոնց հետ կը ճաշէ, եւ ամէնէն թերահաւատներն անգամ, ինչպէս Թովմաս, կը համոզէ թէ ինքը յարուցեալ Փրկիչն է, որով անոնք ամէն կողմ կը հռչակեն ու տարածեն իր Ս. Կրօնքը:

**ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԸ.**— Ձիթենեաց լերան վրայ, Առաքեալներուն տալէ ետք իր վերջին պատուէրները, Յիսուս կը վերանայ երկինք, մինչ Առաքեալները ապշահար դէպի վեր կը նայէին: Յիսուս իր Համբարձումով կը հրաւիրէ մարդիկը վեր նայիլ, դէպի գաղափարական, երկնային բարձրութիւններ:

**Ս. ՀՈԳԻԻՆ ԳԱԼՈՒՍՏԸ.**— Համբարձումէն տասը օր ետք, մինչ աշակերտները վերնատան մէջ նստած կ'աղօթէին, Աստուծոյ Ս. Հոգին իջաւ

անոնց վրայ, եւ հանգչեցաւ կրակէ լեզուներու ձեւով: Պատմական այս հրաշալի դէպքը նոր մարդիկ դարձուց Առաքեալները, որոնք իմաստութեամբ եւ հոգեկան ուժով արիացած, Հրէաստանի եւ հեթանոս աշխարհի մէջ տարածեցին Քրիստոսի խօսքը, եւ հաստատեցին Քրիստոնէական Ս. Եկեղեցին, որ հաւատացեալներու բազմութիւնն է: Հոգեկան այդ ուժին շնորհիւ է որ անոնք անվախ նետուեցան մահուան գիրկը, ինչպէս Ս. Ստեփաննոս, եւ բոլոր առաքեալները, եւ իրենց թափած արիւնով ոռոգուելով՝ ուռճացան ու պտուղ տուին Քրիս. Ս. Խօսքի բեղմնաւոր սերմերը:

**ՎԵՐՋԱԲԱՆ.**— Յաջորդ դասերը մասնաւոր բացատրութեան կարօտ չեն: Միակ յանձնարարութիւնը որ կրնանք ընել պաշ. ուսուցիչներուն, սա է որ տղաք **հասկնալո՛վ** կարդան դասը, եւ կարողանան բացատրել առանց բութակի պէս գոց ընել սորվելու: Կը յանձնարարուի սակայն գոց ընել սեւ խոշոր գիրով գրուածները՝ **Հայր մերը**, **Հաւատամքը** եւ աղօթքները, եւ անոնց թարգմանութիւնները լաւ ըմբռնել:

# ՅԱՆԿ


Էջ

Կարեւոր . . . 3
Նախագիտելիք . . . 4

**Ա. — Յիսուսի ծնունդն ու մանկութիւնը**

Յովհաննէս Մկրտիչի ծնունդը . . . 5
Յիսուսի ծնունդին աւետիսը . . . 6
Յիսուսի ծնունդը, հովիւներուն երկրպագութիւնը . . . 7
Մոգերու երկրպագութիւնը . . . 10
Յիսուսի Ընծայումը . . . 13
Եգիպտոս փախուստը, Բեթղեհէմի մանուկները . . . 14
Յիսուս տասներկու տարեկան տաճարին մէջ . . . 16

**Բ. — Յիսուսի քարոզութիւնները, հրաշքները, առակները**

Յովհաննէս կը քարոզէ և կը մկրտէ . . . 18
Յիսուսի Մկրտութիւնը . . . 19
» Փորձութիւնը . . . 19
» Առաջին աշակերտները . . . 20
Կանայի հարսնիքը . . . 23
Հրաշալի ձկնորսութիւնը . . . 23
Տասներկու Առաքեալները . . . 25
Յիսուսի պատուէրները . . . 26
Լեռան քարոզը . . . 27
» » (Շար.) . . . 28
Յիսուս և մանուկները . . . 31
» տաճարը կը մաքրէ . . . 31
Հարուստ երիտասարդը . . . 32
Հինգ հազար հոգիի կերակրուիլը . . . 33
Յիսուս ծովուն վրայ կը քալէ . . . 35
Կափառնաումի հրաշքները . . . 36
Հարիւրապետին ծառան և Յայրոսի աղջիկը . . . 38
Անդամալոյծին բժշկութիւնը . . . 39
Նայինի պատանին . . . 40
Բեթհեզդայի բժշկութիւնը . . . 40





Էջ

Փոթորիկը կը խաղաղի . . . 41
Երկու կոյրերու բժշկութիւնը . . . 42
Անպտուղ թզենին . . . 43
Ղազարոսի Յարութիւնը . . . 44
Յովհաննէս Մկրտիչի մահը . . . 46
Պետրոսի դաւանութիւնը . . . 46
Յիսուսի Պայծառակերպութիւնը . . . 47

Յիսուսի Առակները

Փարիսեցին ու մաքսաւորը . . . 48
Անառակ որդիին առակը . . . 50
Ողորմած Սամարացիին առակը . . . 52
Կորսուած ոչխարը, բարի հովիւը . . . 54
Այրի կնոջ լուման . . . 55
Չար ծառային առակը . . . 56
Անմիտ հարուստը . . . 58
Մեծատունին և աղքատ Ղազարոսին առակը . . . 59
Տասը կոյսերուն առակը . . . 61
Յիսուսի թշնամիները . . . 63
Յիսուս Երուսաղէմ կը մտնէ . . . 64
» կը վիճաբանի թշնամիներուն հետ . . . 65
Խոնարհութեան դաս . . . 67
Ս. Հաղորդութեան Խորհուրդը . . . 68
Յիսուսի վերջին կտակը . . . 69

**Գ.— Յիսուսի Չարչարանքը, Մահը, Յարութիւնը, Համբարձումը**

Յիսուս Գեթսեմանիի մէջ . . . 71
Յուդայի մատնութիւնը . . . 73
Յիսուս Քահանայապետներուն առջեւ . . . 75
Պետրոսի ուրացութիւնը և Յուդայի վախճանը . . . 75
Յիսուս Պիղատոսի և Հերովդէսի առջեւ . . . 76
Յիսուսի Չարչարանքը . . . 77
Գողգոթայի ճամբուն վրայ . . . 80
Յիսուսի Խաչելութիւնը . . . 80
Յիսուս կ'աւանդէ իր հոգին . . . 82
Յիսուսի Թաղումը . . . 83
Յիսուսի Յարութիւնը . . . 85

| | Էջ |
|---|---|
| Յիսուս Եմմաուսի ճամբուն վրայ | 88 |
| » դարձեալ կը յայտնուի աշակերտներուն | 89 |
| » և Թովմաս Առաքեալ | 90 |
| » Գալիլիոյ ծովեզերքին վրայ | 91 |
| Յիսուսի Համբարձումը | 92 |
| **Դ. — Քրիստոնէական Եկեղեցւոյ հաստատութիւնը** | |
| Ս. Հոգիին գալուստը | 94 |
| Կաղին բժշկութիւնը | 96 |
| Հալածանք Առաքեալներուն դէմ | 97 |
| Եօթը Սարկաւագներուն ընտրութիւնը | 98 |
| Ս. Ստեփաննոսի նահատակուիլը | 98 |
| Պօղոս Առաքեալի դարձը | 100 |
| Կուռնելիոս հարիւրապետը | 101 |
| Հերովդէս Ագրիպպասի հալածանքը | 102 |
| Առաքեալներուն քարոզութիւնները | 103 |
| Հալածանքներ | 105 |
| Եկեղեցիին յաղթանակը | [illegible] |
| Առաքեալներու վախճանը և գրութիւնները | 106 |
| Երուսաղէմի և Տաճարին կործանումը | 108 |
| **Ե. — Հայ. Ս. Եկեղեցի** | |
| Ի՞նչ է Եկեղեցին | 109 |
| Մեր Լուսաւորիչները | 110 |
| Հայոց նշանաւոր Հայրապետները | 111 |
| Ուրիշ նշանաւոր դէմքեր Հայ. Եկեղեցւոյ | 114 |
| Հայ. Եկեղեցւոյ ուղղափառութիւնը | 116 |
| Եկեղեցւոյ Ս. Խորհուրդները | 118 |
| Հայ. Եկեղեցւոյ գլխաւոր տօները | 120 |
| Տաղաւարներ | 123 |
| Միւս տէրունի տօները | 128 |
| Սուրբերու տօներ | 130 |
| Հայ. Ս. Եկեղեցւոյ դաւանութիւնը. — Նիկիական Հանգ. | 134 |
| Աղօթքներ | 139 |
| Թելադրութիւններ՝ Ուսուցիչներուն | |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР

ՌՍՖՍՌ-ի Լուսավորության Մինիստրության կողմից հաստատված՝ տրամաբանության ծրագիրը թարգմանել է Ս. Խուդոյանը, խմբագրել է՝ պրոֆ. Հ. Գաբրիելյանը. հոգեբանության ծրագիրը թարգմանել է Գ. Հովսեփյանը, խմբագրել է՝ Ս. Մովսիսյանը:

ՎՖ 01352 Պատվեր № 550 Տիրաժ 1000

Հանձնված է արտադրության 7/VIII 1918 թ.
Ստորագրված է տպագրության 24/VIII 1948 թ.
Տպագրական 1 1[illegible] մամուլ:

Պոլիգրաֆ և հրատ. Վարչության № 2 տպարան, Երևան, Կնունյանց № 86

ԳԻՆԸ 2 ՌՈՒԲ.

1432

ՀՀ Ազգային գրադարան
NL0151306